

11. 211

ԽՈ. ԴՐ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՊԱՏՄԱ - ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ

Գ.Ա.ՀԵՐԵ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՆԱՏԱՐԵՐ»

1929

3
9 - 31

09 DEC 2009

24 SEP 2006

433
433

3
4-31

ԹԱՅԵՆԱԾՈՐ «ՅՈՒՆԻՎԵՐՏԻ

ԴՈԿՏ. ՓԻԼ. Ա. ԳԱՅՈՒՐԵԱՆ

ՊԱՏՄԱ - ՀԱՍՏՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ

933

ԳԱՅՈՒՐԵԱՆ
ՅՈՒՆԻՎԵՐՏԻ

1929



314 MAR 2013

11.210

300 972

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ազգութեան եռորիւնն ու գալափարը - 5.
2. Պատմական գործօնները ազգային գիտակցութեան սեղծման մէջ - 39.
3. Հասարակագիտութեան (առջևալոգիալի) առարկան - 65.
4. Պատմագիտութեան առարկան - 87.
5. Անձնաւորութեան դերը պատմութեան մէջ - 106.



893- 2002

ԱԶԳՈՒԹԵԱՆ ԷԼԻԹԻՒՆՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Անմահ Ֆիխտենի բար “Reden an die deutsche Nation”, զրքում նկատում է, որ իւրաքանչիւր ազնուամիտ անձնաւորութիւն ձըգուում է այս աշխարհում աւելին լինել քան ժամանակային անցողակի մի երեւյթ։ Նա ցանկանում է մի նոր և երբեք չեղած բան ձգել ժամանակի մէջ, որ նրա մէջ մնայ և երբեք չշամաքող պղբիւր լինի նոր ստեղծագործութեանց։ Այզպիսի մի անձն ցանկանում է այս երկրում իրեն շնորհուած տեղի ու կարճ ժամանակի համար վարձարել մի յաւիտեան տեւող բանով, այնպէս որ նա իւր զիտակցութեան և հաւատի մէջ յռչարձան թողնէ, թէ նա եւս այնտեղ է եղել։ Սակայն ինչն է երաշխաւորում, որ այդպիսի մի անհատի գործը յաւիտեան կը լինի։ Ֆիխտեն ասում է, որ այդ երաշխիքը կարող է առ միայն իրերի մի այնպիսի կարգ (Ordnung), որը նա յաւիտենական է համարում և որը կարող է յաւիտենականը իւր մէջ ընդունել։ Սակայն Շայդպիսի մի կարգ է, անշուշտ ոչ մի զաղափարով չըմբռնեալ, բայց և այնպէս իրապէս գոյութիւն ունեցող ուրոյն հոգեկան բնոյր մարդկային օքապատի (ընդգծ. իմս է), որից նա ինքը իւր բոլոր մտածողութեամբ և գործով առաջացել է» *). դա այն ժողովուրդն է (Volk—ժողովուրդ բառը Ֆիխտեն,

*) Johann Gottlieb Fichtes, Reden an die deutsche Nation. Կր. 102—103, Frieburg ան B. Անd Tübingen 1881.

ինչպէս նաև շատ այլ գերմանական մտածողների մօտ հաւասար է ուսուուուն – ազգ – բառին), որից նա ծագել է և որի մէջ նա կազմակերպուել է: Մակայն պիտի աւելացնել, որ վերոյիշեալ կոչումով ներշնչուած մի անձնաւորութիւն, ըստ Ֆիխտէի, մէայն «իւր ազգի չոգեկան բնական օրէնքի լոկ արդիւնքը» չէ, այլ նա կուլտուրական բարիքների բազմացնողն է, որի ստեղծագործական ազրիւը թէպէտև անմիջապէս բխում է սկզբնական և տատուածային կեանքից 1). բայց և այնպէս այդ նոր բազմացնող բարիքը, որն ուրին նոր աւարելը է մտցնում կեանքի մէջ և սա ճոխացնում, մի տեսանելի եւեւոյք դառնալու համար հեց իւր առաջին ձեւակերպութիւն բնութեալու ժամանակ այն ուրոյն հոգեկան բնական օրէնքին և յարմարում եւ եռա համաձայն մի զգացական արտայայտութիւն բնդունու (J. G. Fichte. *Ibid.* Կր. 103, ընդգծ. իմս է): Այս տեսակէտից դիտած Ֆիխտէն ընդունում է, որ իւրաքանչիւր ազգ իւր գաղաքացման ուրացն օրէնքը ազգեցութեան տակ է զանուում և էնց այդ ուրոյն օրէնքն է, որ առնալ բազմութեան մի բնական և մի միանց հետ շաղկապուած ամբողջութիւն է գարնում, որով և բնուրուում է մի ժողովրդի ազգային նկարագիրը: «Հոգեկան աշխարհի բարձրագոյն օրէնքը» միայն այն ժամանակ կարող են իրականացնել վերոյիշեալ ազգային նկարագով օժտուած ժողովութիւնները: Եթէ նացանից իւրաքանչիւրը ինքն իրեն թողած, իւր առանձնակի ուրոյնութեան համաձայն կը զարգանայ եւ կը ձեւակերպուի 2)

1) Այստեղ պիտի ի նկատի ունենալ, որ Ֆիխտէի, ինչպէս նաև ազգեցութեամբ կազմակերպուած Բիանքէի աշխարհայեացը, իւրաքանչիւր ստեղծագործական կորովի վերջնական ազրիւը իրական աշխարհի պարագաների մէջ չէ զանուում, այլ նա անմիջական յարաբերութեան մէջ է էնց ստեղծագործութեան համայնապարփակ ոյժի հետ:

2) Ազգի իւրաքանչիւր անհատը եւս, ըստ այս տեսակէտի, պիտի զարգանայ ու ձեւակերպի համաձայն ոչ միայն այդ բոլոր անհատներին ընդհանուր ազգային նկարագրի, այլև իւր առանձնակի ուրոյնութեան:

(*Ibid.* Կր. 176, ընդգծումն իմս է): Այսպիսի ազգային նկարագրով ստաւած ժողովութիւր, որն իրաւունք ունի անկախորէն իւր գործերը հոգալ և իրեն կառավարել (*Ibid.* 164 – 165), հէնց իրեն կերպարանաւորելու համար կազմում է պետութիւնը, որը միայն այն ժամանակ իսկական պետութիւն կը լինի, երբ նա անկախորէն շարժուել և վիճուներ տալ կարող է (*Ibid.* 147):

Եթէ ուշադիր հետեւենք վերացիշեալ ձեւակերպման, ապա մենք կը նկատենք, որ այստեղ ազգութեան վերաբերեալ խնդրի կենտրոնը հասարակական կեանքի կոնկրետ արտայայտութեան ուրոյն ձեւի մէջն է կայանում: Այստեղ էտականն այն է, որ այս ձեւը անպայմանորէն կապուած է ստեղծագործութեան ակտի հետ և ինչքան վերջինս զայութիւն ունի, այնքան էլ նա անհրաժեշտօրէն իւր առարկայացման համար պահանջում է որոշ կերպաւորում: Այսէ այսակ քիչ կանգ առնել հասարական կեանքի այս երկու կողմերի բռվանդակութեան ու ձեւի վրայ, խնդիրն աւելի պարզ կացուցանելու համար: Ի՞նչ ենք հասկանում հասարակական կեանք ասելով: հասարակական կեանք ասելով հասկանում ենք մարգկանց մէջ զոյութիւն ունեցող յարաբերութիւնների ամբողջութիւնը, որն առաջ է զալիս մաքրերի հոգեկան փոխազգեցութեան հողի վրայ 1):

Անհանեների ուղեղների մէջ տեղի են ունենում մի շարք ազգեցութիւններ, որոնք առաջացնում են զբացումներ և զաղախարներ, որոնց բացատրութիւնը չի կարելի որոնել մի անհատի մէջ և ոչ էլ անհատների հասարակ զաւմարի մէջ, այլ անհատների փոխադարձ կախման մէջ. այլև փոխադարձ կախման մէջ այն անհատների, որոնք նրանց նախորդել են 2): Այսպիսով ուրեմն հասարակութիւնը

1) Տես՝ «Վոզրութենիե» (Եվրեյսկիյ պրոլետարիատ ի նացիոնալնայա պրոբլեմա), Ժողովածու, (1905) Կր. 6:

2) Տես՝ Ալֆրեդ Ֆուլիե, — «Ֆակտօրի նացիոնալնախօս խարակերա», Ֆրանս. թարգմանութ. 1906, Կր. 7, գժբախտաբար ձեռքիս տակ չունենալով եւրոպական ազրիւներից շատերի ընազրերը, ևս ստիպուած եմ օգտուել նրանց թարգմանութիւններից, որոնց մըշ զբացութեան համար բնականորէն չեմ կարող երաշխաւորել:

մի օրգանիզմ է, այսինքն այնպիսի մի ներդաշնակ կառուցուածք, եթե մասը կարող է բացատրուել ամբողջով, ինչպէս և ամբողջ բացատրութիւնը գտնուում է մասերի մէջ։ Այժմ ո՞րն է այս ձեւով հասարակուած հասարակական կեանքի բովանդակութիւնը։ հասարակական կեանքի բովանդակութիւնը կազմում է իւրաքանչիւր միասին համերաշխ մարդկային զործունեւութիւն, մարդկանց իւրաքանչիւր աշխատակցութիւն, որոշ նպատակի հասնելու համար ։)։ Բայց ո՞րն է հասարակական կեանքի ձեւը։ հասարակական կեանքի ձեւը կախուած է հէնց այն պայմաններից, որոնք առնասարակ հնորաւոր են գործնում, որ հասարակութիւն կազմոյ անձերի մէջ փափազեցութիւն տեղի ունենայ։ Դրա համար անհրաժեշտ է, որ զոյութիւն ունենան օրժեկաթիւացած նորմեր, որոնք նախապայմանն են իւրաքանչիւր հասարակական երեւոյթի, ուրիշն եւ անհատների հոգեկան փախազդեցութեան ու աշխատակցութեան։ Այս օրժեկաթիւացած նորմերի (որոնք կարող են լինել իրաւական, էթիկական և այլն) ամբողջութիւնը անուանում ենք «ոսցիալական կեանքի ձեւ» (տես «Վոզդեհնիկ», եր. 7)։

Սոցիալական կեանքը. չնորհիւ վերին աստիճանի բարդ լինելուն, իւր կոնկրէտ արտայայտութիւններում բազմապիսի անհատական և ուրոյն զեեր է ցուցադրում և անհնար է այդ պատկերացնել անկախ այն յատուկ կոնկրէտ արտայայտութիւններից, որոնց մէնք հանդիպում ենք կեանքի մէջ։ Վերջիշեալ նորմաները (էթիկական, իրաւական ևայլն) եթէ նրանք իրականութիւն են դառնալու, ապա պիտի անխուսափելիօրէն ընդունեն այն իւրայատուկ անհատական ձեւը, որը նրանց թիւազրում է տուեալ հասարակական միջավայրը։ Եւ ինչքան ակտիւ ու սահղագործող է այս կամ այն հասարակական կեանքի կրող մարդկային խմբակցութիւնը, այնքան էլ նա այդ կեանքի կուլտուրական կառուցուածքների բովանդակութեան ուրոյն անհատական ձեւ է տալիս, այսինքն դրանց կոնկրէտ արտայայտութեան մէջ հանդիսաբերում է իւր ամբողջ անցրէլի ու ներկայի առանձնայատուկ կենցազը։ Այսպիսով մէնք մօնալի ու ներկայի առանձնայատուկ կեանքի համար։

Ազգութիւններն անշուշտ հասարակական խոշոր օրգանիզմներն են և ուրիմ այն ինչ որ ասացինք առնասարակ հասարակական կեանքի մասին, վերաբերում է նաև ազգութեանց։ Հասարակական կեանքի ամբողջ բովանդակութիւնը (իւր անցեալով ու ներկայով) մարմնացած, այսինքն կոնկրէտ իրականութիւն դարձած, իւրայատուկ հոգեկան կեանքի մէջ, կազմում է տղգային կեանքը^{*)}։ Հասկանալի է որ այս ըմբռնուումով ինդրի կենտրոնը ձեւին է վերաբերում, որին պիտի ննթարկուի իւրաքանչիւր բովանդակութիւն, եթէ նա ազգային լինելու յաւակնութիւն ունի։

Ազգութիւնն ուրիմ այն հոգեկան ձեւն է, որի մէջ լցում է ազգի սոցիալ-պատմական կեանքի ամբողջ բովանդակութիւնը (Տես Պատմեր—Նոյն տեղում, եր. 17)։ Ազգի սոցիալ-պատմական կեանքի ամբողջ բովանդակութիւնը արտայայտում է կուլտուրայի զանազան կառուցուածքներում (կոլենցեմբեր)։ Ընդհանրապէս հասատուած փաստ է, որ տուեալ և պօխայում կուլտուրայի բոլոր կողմերը մի միւսթիւն են կազմում, մի ձուլուածք ունեն, այսինքն նրանց հիմնական սկզբունքները մէկ են։ Արդ, կուլտուրայի գիտական, զեղարուսատական, անտեսական, իրաւական ևայլն կողմերը որպէսպի իրենց բովանդակութեամբ հազորդուեն մարդկանց, պիտի անպայման որոշ ձեւ ընդունեն, որովհետեւ առնասարակ ոչ մի տեղի բովանդակութիւն չի կարելի փոխանցել միւսին, եթէ նա ձեւ չըւնի, ուրեմն կարելի է առել կուլտուրայի ձեւերից դուրս չկայ առնասարակ կուլտուրա։

Աշխարհին երեսին կուլտուրայի ձեւերը մեզ տրուած են միայն աշխային ձեւերի կերպարանքով, այնպէս որ վերջ ի վերջոյ ազգային ձեւն է կուլտուրայի անհրաժեշտ նախադրեալը։ Այս կուլտու-

^{*)} Տես այս մասին Ա. Վ. Պատմեր,— «Օ նացիոնալնոյ ի անընդհանուր աւտոնոմիի», Կիեվ, 1906, եր. 17, «Սերպ», երկրորդ ժողովածու, եր. 10 և 46, «Վազրութեանի», եր. 9, Մ. Գրուելվակի, — «Նացիոնալնոյ վապրու ի ավտոնոմիա», 1907, «Գետերըուրդ», եր. 7։

1) Տես «Վոզդեհնիկ» Ռէվոլիւցիոնէր, թ. 3, եր. 104—107։

քայի ձեւերի սահզեռողն ու կրողը ազգութիւնն է, որը կարելի է ուշրեմն անու անել կուլտուրական ընդհանրութեան ձեւ, այսինքն մի ձեւ, որ ընդհանուր է առեւել ազգը կազմող բալար անդամներին (անս և Սոցիալիստ Շեվոլիցիոններ), թ. 3, եր. 100)։

Այժմ հարց է առաջ գտվու, ի՞նչով է պայմանաւորուած այդ զանազան ազգային ձեւերի տարրերութիւնը։ Ձեւի զաղափար ասելով մենք հասկանում ենք տարրերի որոշ կազմակցութիւն, փօխյարաբերութեանց որոշ կոմքինացիա 1)։ Օբժեկտի բարդացումից քնականօրէն բազմապիսի կամրինացիաներ, այսինքն ձեւեր կարող են առաջ գալ։ Յայտնի է, որ սոցիալական կեանքի երեւոյթներ, որոնք ուրիշ ընձեռնում են բազմապիսի կոմքինացիաների հնարաւորութիւն, կամ ուրիշ խօսքով ասած, ուրոյն կոնկրէտ արտայայտութեան հնարաւորութիւն։ Արդ, ազգութիւնը պատմահնարակական մի երեւոյթ է։ Տուեալ ազգի առանձնայատուկ պատմական միջավայրում նրա բոլոր հասարակական պրօբլեմները— չնորդիւ այդ ազգի աւտօնօմ կենցաղի, որ նա որոշ դարերի ընթացքում ունեցել է որոշ տերիտորիայի վրայ — սատցել են սպացիֆիկ կոնկրէտ արտայայտութիւն, տարրեր միւս ազգութիւնների արտայայտութիւններից։ Այս սպացիֆիկ կոնկրէտ արտայայտութիւնը իւր զրոյն է զրել ազգ կազմող անհատների փոխյարաբերութեանց վրայ և այդպիսով երկար դարաշրջանների ընթացքում առաջ է բերել մտածոգութեան, կամքի և զգացման որոշ գումարորութիւնը, որոնք յատուկ են միայն այս տուեալ ազգի անհատներին^{*)})։ Ինչդան տուեալ ազգի հոգ մեծամասնութիւնը, դևոլվացիան, լուսաւորութեան և այլնի չնորդիւ ապազալին զործոն մասնակցութիւն է ունենում իւր ազգային զործերի տեօրինան մէջ, ինչդան այդ մասսան ակտիւ է

1) Տե՛ս՝ Շ. Ազգութիւններ, եր. 7։

*) Ի հարեկ անկախ այս զուտ պատմական իրավարձութիւններից, ազգի սահզեռազարձութեան վրայ, մեր կարծիքով, ոչ պակաս ազգեցութիւն ունի և ազգութեան դիզիքական կոռուցուածքը, ուրին մենք յեայ կը գտնանք։

դառնում, այնքան էլ նրա հասարակական կեանքը բնուկանորէն բարդանում է, այնքան էլ աւելի սուր կերպով են հանդիս գալիս այդ մասսայի պատմութիւնից ժառանգած իւրաւատուկ կոնկրէտ ձեւերը, որոնց մէջ անխռուսափելիօրէն պիտի մտնեն հաջարաբական կեանքի բոլոր կողմերը։ Այս խնդիրը, որ կապուած է ազգութիւնն անհատականացման հետ, անհրաժեշտ է աւելի պարզաբանել։

Յայտնի է, որ ինչքան մի անհատ բարդ բովանդակութիւնն է ստանում, ինչքան նրա հոգեկան բոլոր կարողութիւնները լիակատար ծաւալում են, այնքան էլ նրա բոլոր ապրումները սերտ, օրգանական ներզանակութեան և միութեան են վերածում, այնքան էլ նա իւր հոգեկան արտայայտութիւններում անհատական իւրայատուկութեան գրոշմն է գնում։ Նոյնը և կագարեւմ է ազգային օրգանիզմի հետ ինչքան կուլտուրան զամոցատանում է, այսինքն ազգութեան հոծ մեծամասնութիւնը անմիջական մասնակցութիւն է ունենում կուլտուրական բարիքների ցայլեման և ստեղծման մէջ, այնքան էլ նա իւր պասուի գրութիւնից գուրօնազմ, կուլտուրական բոլոր արժեքները ուրոնք նա ստեղծում կամ ուրիշներից վերցրած իւրացնում է, անմիջական լուսարեւութեան մէջ և գնում այն բոլոր պատմականորէն ժառանգած ուրոյն կոնկրէտ ձեւերի հետ, որոնց մէջ միայն պարփակուած է իւրագանչիւր ազգային կեանք։ Հասարակական կեանքի խորութեալը ու բարդացմամբ անհրաժեշտորէն խորանում և անհատականանում են նրա ընկազմով վերոյիշեալ կոնկրէտ ձեւերը։ Այստեղ զեր է խաղում եւ հոգեկան էներզիայի անմանա հանգամանքը։ Այս հարցը բացատրելու համար, թող թոյլ արուի մեջ աստ մի փոքր չնորդուն կատարել բուն խնդրից։

Կարև կառուցկին կարծում է, որ ազգային ձգումները պիտի ըրտացարել երբ նոր, ժամանակակից յարաբերութիւններից և պայմաններից ծագած երեսութիւններ և ոչ թէ իւր ռէին աւանդութիւնների ծնունդը դեմքեւ^{*)})։ Այսաւարակ կազմութելու յիզտոփական անժանական ոյժ

*) Տե՛ս Կ. Կառուցկի, Ազգութիւնների հարցը Թուսաստանում, Բարդմ. դ. Խաժակ, 1906, թիվ 16, երես 4։

Եր XIV, XV և XVI թ լարերում։ Նրա հետ միասին հասարակութեան մէջ նոր կեանք մուտք գործեց, երեւան եկան նոր հայեացը՝ ներ—ժամանակակից ազգայնութիւնը ծնեց) 1)։ Ժամանակակից ազգայնութիւնը, ըստ այս հայեացքի, է ապրանքների կապիտալիստական արդիւնաբերութեան և առևտրի զաւակ 2)։

Արդ, մի կողմ թողնելով այն խնդիրը, որ նորագոյն ազգայնութիւնը, ինչպէս մեզ թւում է, ոչ թէ ուրոյն ստեղծագործութիւն է անկախ անցեալից, այլ ազգութեան զաղափարի զարգացման մի նոր փուլն է և զզալապէս ազգուած է տնտեսական խոշոր զարգացումից, մասսաների կուլտուրականացումից ևայլն, կառւցկու, ինչպէս և առհասարակ մարքուստական հետեւողական եզրակացութիւնը ազգութեան վերաբերեալ այն է, որ ընդունելով արնտեսութիւնը հիմնական նախորոշով ֆակտորը պատմութեան, պիտի եզրակացնել, որ «բուրժուազիայի զարգացումը, առեւտրի ազտութիւնը, համաշխարհային շրեկան կարող են և պիտի ազգային առանձնացումների ոչնչացման տանինք։ Ուրիմն, բոլոր քաղաքակիրթ երկրներում տնտեսական զարգացումը նման առտիճաններ է ունենում, այսինքն միակերպ է դառնում, ապա և տնտեսութեան համապատասխանող զայութեան պայմաններն եւս պիտի միակերպ դառնան»)։ Ուրիշ խօսքով, ըստ այս տեսակէտի, առնտեսութեան մօնիկմը պիտի ստեղծի և ամբողջ կուլտուրայի մօնիկմ» (նոյն առդում)։

Այժմ հարց է առաջ զալիս, ինչպէս է որ հէնց կապիտալիստական զարգացման ամենափարթամ շրջանում, 19րդ դարում, ազգութիւնների արթնացման, անհատականացման զարաշրջանն է սկսում, երբ իւրաքանչիւր ազգութիւն ձգտում է սոցիալական կեանքի աւտօնօմ ազգային ձևեր ստեղծել պիտութեան, լուսաւու-

1) Կ. Կառւցկի, — «Նացիոնալնոստ նաշեվո վրէմէնի», եր. 37։ Գետերբուրգ, եր. 22։

2) Կ. Կառւցկի, *ibid.*, եր. 28 և 30։

) Տես՝ «Նացիոնալնից վոպրոս պէրէգ սուրբոմ սոցիալ-դեմոկրատի», 1906, Օտեսա, եր. 10, թարգմ. դոկտոր Դ. Պամանիկի։

րութեան և այլն առպարէզներում։ Այս փաստը ընդունում է նոյնիսկ — անշուշտ հակառակ իւր վերոյիշեալ պնդումների — կ. Կառւցկին, առելով «ազգային զգացմունքը մի ֆակտոր է զարձել, որը զործում է բոլորովին անկախ, առանց որևէ կապակցութեան երկի տնտեսական զարգացումից և որոշ պայմաններում նոյնիսկ ի վեաս այս զարգացման 1)։ Իւր նոր աշխատառթիւններում, օրինակ Շվեյցարիայ թողնաթամբը զրքում կառւցկին նկատում է, որ կապիտալիզմը տիրել է Աւստրիային, նրա ժաղավրդներին քնից արթնացը և նրանց մէջ առաջ է բերել ազգային միացման պահանջ 2)։ Աւստրիոյ և Թիրոքիոյ վերաբերմամբ կառւցկին նկատում է նաեւ, որ այդ երկրների տնտեսական զարգացումը չի նպաստում, որ ազգութիւններն ի մի ձուլուն և իրենց միջավայրում լուծեն այլ փոքր ազգերը և այսպիսով ստեղծեն ազգութիւն՝ խիստ սահմանափակ շրջանով։ Ընդհակառակը, նա առելի շատ նպաստում է, որ մէկ ազգութիւնը աւելի միւսին խառնուէ և նորից ստեղծէ նոր փոքր ազգութիւններ *): Ինչով բացատրել այս արտասոց երեւոյթը, որն ամենեւին չի հաշտում վերեւում յիշած տնտեսութեան մօնիկմից բխած զերնաշէնքի միանմանութեան հետ։ Ահա էնց այստեղ է, որ մեր կարծիքով հանդէս է զալիս Վունդի ակնարկած «Հոգեկան էներգիայի ամման» ազգեցութիւնը։

Նախ և առաջ ինչումն է գրա էւթիւնը։ Բայ այս տեսութեան, հոգեկան կեանքի հիմնական զիթը նա է, որ նրա էներգիան աճում է այն իմաստով, որ ստացուած արգիւնքը նպաստակադրածից աւելին է, իրականացած նպատակը իւր մէջ աւելին է պարունակում քան ենթադրուած մօտիւը 3)։ Հասարակութեան զեկավար անձինք

1) Կ. Կառւցկի, — «Նացիոնալնոստ նաշեվո վրէմէնի», եր. 37։

2) Կ. Կառւցկի, — «Կրիզիս Աւստրիի» («Եազիկ ի նացիա», թարգմ. Ֆ. Ա. Բոբովի, 1905, Կիեվ, եր. 12)։

3) Կ. Կառւցկի, — «Կրիզիս Աւստրիի», եր. 14։

) Տես՝ Պ. Բարս, — «Ֆելուսոփիա պէտորիի կակ սոցիալոգիա», թարգմ. Մ. Ս. Մագէլի, եր. 100—101։

հանրօգուտ նպատակների համար որոշ պահանջներ ունեն իրենց հպատակ անձերից, սրանց որոշ զործունէութեան են ստիպում և ընտելացնում վերսիրեալ նպատակների համար: Թէպէս սկզբում զա ստիպողական բնոյթ է կրում, այսինքն անհատին ենթարկում է հասարակութեան, սակայն ժամանակի ընթացքում այդ ստիպողական բնոյթը անհետանում է և հասարակութեան օգտին ուղղուած իւրաքանչիւր զործունէութիւն իւրաքանչիւր անձի ընդունում է կամաւոր բնոյթ, այլևս կարիք չզգալով ստիպման: Իւրաքանչիւր անձն ապրում է միաժամանակ եւ հասարակութեան կեանքով: «Հասարակութիւնը այսպիսով զարգացնում է իւր կեանքը: Ոչ մի այն անհատն է ապրում հասարակութեան մեջ, այլիւ հասարակութիւնը անհատի մեջ աւելի ամուր կապ է ստեղծուում և ամբողջը (հասարակութիւնը) աւելի սերտ միավորին է ներկայացնուում»:

Հոգեկան էներգիայի այդ աճումը կիրարկիլի է ոչ միայն անհատի և հասարակութեան յարաբերութեանց վերաբերմամբ, այլև ամբողջ հասարակութիւնը բնորոշող իր էական կեանքի համար 3): Այն ինչ որ մի որեւէ կարիքից է առաջ զայխ, առտիհանաբար զանում է սովորութիւն և այս սովորոյթը ջանում է կայսեն մատ, յարատեւում է նոյնիսկ հակառակ իրեն ծնող աղքիւրի անհետացման:

«Այսպիսով, ասում է Բարտը, ազգի ընդհանուր նորին աւելի հարատանում է, քան սա հնարաւոր է միջավայրի անմիջական գրդումների ազգեցութեան տակ: Անմիջական պայմաններին միանում են պայմաններ, որոնք պատմութեան չնորդիւ են ձեռք ըերածած» (*ibid*, եր. 317): Եւ Բարտը ըերում է իւրեւ օրինակ պետութիւնը, որը սկզբում հիմնուում է կեանքի և նրա տնտեսական բարիքների պաշտպանութեան համար, բայց միանգամ որ ստեղծուեց պետութիւնը, նա ինքնուրոյն նշանակութիւն է ձեռք ըերում և ձգառում է ինքնապահպանման: «Պետութիւնն այս պատճառով անկախ նշանակութիւն է ստանում, անկախ տնտեսութիւնից, որին

2) *Skev. Q. Rants*, *ibid*, եր. 101:

3) *Skev. Q. Rants*, *ibid*, եր. 317:

նա պարագան է իւր ծագմամբ, եւ յաճախ հակառակ անտեսական շահերին: Աթէնացիք հաւանօրին ձեռք կը բերէին տնտեսական օգուտներ, եթէ հպատակութին պարսից արքային: Եզիպատացիք, որ հպատակութին պարսից մօնարքիային, իսկոյն կենգանի առեւտուր ունեցան և միայն այդ ժամանակից սկսած ստիպուած եղան գրամ կորել: Այսպէս կը զարգանար եւ աթենացոց առեւտուրը: Սակայն քաղաքական նկատումներով, երկրի անկախութեան պահպանման համար, յոյները ընկղիմազրութիւն ցուց տուին պարսից առաջարկութիւնը և բարբարոսների արշաւանքին» (*ibid*, եր. 317): Աւրեմն սոցիալական կարիքներից առաջանում են հաստատութիւններ, որոնք այնուհետեւ անկախ իրենց նպատակներից, ինքնանկախ նշանակութիւն են ստանում:

Մեղ թւում է, որ ազգութիւնն եւս իւրեւ պատմահասարակական մի երևոյթ, ունենալով դարերի ընթացքում աւտօնօմ կեանք, այսինքն աւտօնօմ կերպով կարգադրելով իւր բոլոր սոցիալական պրօբլեմները, ձեռք է բերել սոցիալական կեանքի իւրայտուկ ձեւը (1) և հեց սոցիալական կեանքի այդ իւրայտուկ ձեւերի զարգացման արդիւնքն է ազգային նկարագիրը, որը ժամանակի ընթացքում բարձանալով, անհատականանալով, զօրեղանալով՝ հանգէս է զայխ տուեալ շրջանի անտեսութեան վերաբերմամբ որպէս մի ոյթ, որը ձգառում է անկախ լինել տնտեսական պայմաններից և յաճախ սրանց հակառակ է զործում 2): Ուրիշ խօսքով, վերոյիշեալ

1) *Skev. Բաւեներ, Մ. Վ.*, — «Օ նացիոնալնուսի ի տէրիտոր աւտոնոմիի», եր. 17: *Skev. Վազրումինենիկ*, եր. 9:

2) Ահա թէ ի՞նչ է ասում ներկն այս ամբիւ Շտուտգարտի սոցիալիստական կոնկրէտում: «Իւրաքանչիւր ժողովուրդ, որ օստրի տիրապետութեան տակ տառապում է, նոյնիսկ երբ նա (այսինքն) այդ օստրի տիրապետութիւնը—Ա. Գ.) բարեկեցութիւն է ընձեռնում, իւր ամբողջ մասացով կռուի է եւնում ազատութեան համար և յեսին կողմն է մզում միւս այլ նպատակները» (ահօ Շիերու, սրորնիկ վառոյ, եր. 247):

Մեղ հայերիս համար վերին աստիճանի ուսանելի իր այն ազա-

հոգեկան էներգիայի անման համաձայն, ազգային նկարագիրը իրեն կուլտուրական ընդհանրութեան ուրոյն ձեւ, ինքնուրայն արժէք է ստանում իւր շրջապատի վերաբերմամբ։ Այդ ուրոյն ձեւերի պահ-

տամարտը, որը մղւում էր երկու տարուայ ընթացքում հայկական հանրապետութեան սահմաններում։ Հակառակ բոլոր աննպաստ պայմանների, հակառակ այն անոելի տնտեսական և քաղաքական կացութեան, հայութեան լաւագոյն զաւակները, ներշնչուած պատմականորէն ստեղծուած ազգային արժէքների խորը գիտակցութեամբ, կերտում էին հայկական ազգային պետութիւնը. որը սակայն աներեւակայի զոհաբերութիւններ էր պահանջում։ Բոլոր տիպի զաւակացային բացատրութիւններն այս խնդրում օրեւէ առողջ և աննախազարուած մտքի արդիւնք չին։ Միմիայն բոլոր փոքրիկ և ինքնազիտակցութեան հասած ազգերին յատուկ ազգային կամքի արտայատութեամբ պիտի բացատրել այդ երկու տարուայ ստեղծագործական կեանքը, որի էսութիւնն այն էր, որ հայութիւնը ջանում էր իւր ուրոյն ազգային ձեւերը մշակել։ Այս ստունօմ ազգային ձեւերի մէջն է, որ իւրաքանչիւր ազգութիւն կարող է առանց մասցորդի իւր բոլոր ստեղծագործական կարողութիւնները հանդիպաթերել, առանց կարիք զգալու օրեւէ այլ ազգութեան յարմարուելու։ Իւրաքանչիւր ազգի յատուկ է, առում է Բաղինը, բնական ձգուում՝ ստեղծել իւր համար այնպիսի պայմաններ քաղաքական կեանքի, որոնք նրան թոյլ տային աւտոնօմ կերպով վճռել իւր համար բոլոր սոցիալական պրօբլեմներ՝ եւ պետական իրաւական, եւ սոցիալ-տնտեսական, եւ կուլտուր-լուսաւորչական (տես «Վոզրութիւնի», եր. 56)։ Իսկ կասկած չկայ, որ անկախ պետական կազմն է այն պետական մարմինը, որը լիակատար հնարաւորութիւն է ընձեռնում այդ պրօբլեմների բաւագոյն լուծման համար, Առա թէ ինչո՞ւ է էկ. Մայերն ասում, թէ «քաղաքական միութիւնն ու անկախութիւնը ազգութեան բարձրագոյն գործունէութիւնն է և ներկայումս ընդհանրապէս ըզձացած նպատակ» (տես Ed. Mayer, Kleine Schriften zur Gesellschaftstheorie und zur Wirtschafts- und politischen Geschichte des Altertums, zalle, 1910, եր. 40).

պահման համար մարդկային խմբակցութիւնները ամեն տիպի զերկանքներ ու զոհողութիւններ են կրում. յաճախ իրենց ամենակենսական շահերը վատանգում։

Յատկապէս 19րդ դարում, չորրէիւ կուլտուրայի գեմոկրատացման, ազգութեան հոծ մասաները մասնակից դառնալով այդ ուրոյն կուլտուրական կառուցուածքներին, աւելի եւս ջերմ ջատազովներ են հանդէս զալիս իրենց արժէքների պահպանման համար։ Մեզ թւում է, այս կերպ միայն կարելի է բացարել կառուցկու վերսիլեւ կարծիքը, որ ալգային զգացմունքը մի ֆակտօր է դարձել. որ գործում է բոլորավին անկախ և որոշ պայմաններում իսկ ի վաստակական զարգացման։ Կառուցկու այս արտայայտութիւնը, ինչպէս նաև մանր ազգերի — հակառակ տնտեսական զարգացման — արթնացման ու միութեան ձգտելու փաստի արձանագրումը անշուշտ իւր արձագանգն է գանում նրա պատմական երևոյթների նոր ըմբռնման մէջ։

Հարցն այժմ նրանումն է, թէ ինչպէս պիտի համաձայնութեան ըրերուի ազգային ֆակտօրի այս գերը մարքսիստական պատմա-աշխարհայեացքի հետ, ըստ որի առմեն ինչ պատմութեան մէջ կատարում է վերջին հաշով համապատասխան այն բանի, թէ ի՞նչպէս և ի՞նչ է արտադրում և ի՞նչպիսի արգասիքներ փոխանակում են միմեանց հետո (տես «Սերպ», սբորնիկ վարոյ. Փիլովսկու յօդուածը՝ Ծնտեսական մասերիալիզմ և Ազգային հարցը, եր. 80)։ Ուրեմն, ըստ այս տեսութեան, ազգային հակադրութիւնները, ազգութեանց պայքարները, վերջի վերջոյ արգիւնաբերութեան և փոխանակութեան եղանակից են կախուած, որոնք իրենց հերթին կախուած են անմիջապէս արդիւնաբերական ուժերից, այն է տեխնիկայի աստիճանից ու տեխնիկից։ Արդիւնաբերական ուժերը ստեղծում են աշխատանքի հասարակական յարաբերութիւններ, բաժանում են հասարակութիւնը դասակարգերի, սրանից էլ առաջ է զալիս դասակարգային պայքար և զրա վրայ հիմնուած խոհօգիտական վերնաշէնք^{*)}։ Այս կառուցուածքում, ինչպէս պարզ նկատելի է, ոչ մի ուրոյն տեղ չէ յատկացուած ազգային ֆակտօրին հասարակական

*) Տես՝ այս բոլորի մասին ֆիզովսկիի, լիդ. եր. 80։



շարժումների մէջ, այլ արտադրողական ուժերն են, որ որոշում էն հասարակական յարաբերութիւններն ու պայքարները: Բայց ահա կառւցին, համապատասխան իւր հասարակական կեանքում ազգային ֆակտորի մասին ունեցած նոր կարծիքին, որին մենք վերևում իրագեկ եղանք, և որով մատնանշում է, որ հակառակ կապիտալիզմին, ազգութիւններն աւելի շետակի են հանդէս գտին, նկատում է: Շնոր հասարակական դրութիւնը կախուած է ո՞չ թէ բարոյական իգալի եղանակից, այլ տնտեսական պայմանների տուեալներից: Մեծինիկալից, բնական միջավայրից գոյութիւն ունեցող հասարակութեան հարեւանների եւ նախանյերի յատկութիւնից (տես Ժիզլվակիյ, իել. եր. 82, ընդգծումը մերն է): Ուրեմն ըստ այս նոր տեսութեան, հասարակական երեւոյնների, ուրեմն և ազգային շարժումների բացատրութեան ժամանակ պիտի ի նկատի ւնենանք ոչ միայն աշխարհագրական միջավայրն ու տեխնիկան, այլև ազգութեանց, իրեւ ուրոյն տարրերի, նրանց միմեանց հետ ունեցած յարաբերութեանց խնդիրը: Այսաեղ ուրեմն մարդկութիւնը դիտում է ո՞չ լոկ իրեւ գասակարգերից բաղկացած մի ամբողջութիւն, այլ ուրոյն ազգային միութիւններից, որոնք իրեւ այդպիսիք՝ հասարակական կառու ցուածքին և շարժումներին որոշ գունաւորում են տալիս: Այսպիսով կարելի է ասել մարդկութիւնը չի յաջողում ազգային շարժումների ազգային տարրը տնտեսական տարրի վերածել, որովհետեւ ազգային տարրն այն փաստից է առաջ գտին, որ մարդկութիւնը բաժանուած է ազգերի, մինչդեռ ազգային շարժումների տնտեսական տարրը մէծ մասամբ այն հանգամանքի հետեւանք է, որ մարդկութիւնը իւր ներկայ կացութեամբ դասակարգերի է բաժանուած: (Տես Սիրպ, սրբնիկ վտորոյ, եր. 63): *)

Ուրեմն ազգային տարրը տնտեսականի մէջ չի լուծում և այս նկատումով Զոմբաբարը սկսում է իւր «Սոցիալիզմ և սոցիալական

*) Պրօֆէսօր Մասարիկն ասում է, որ մարդկութիւնը բաղկացած է ո՞չ թէ արուեստական օրգանիզմներից (պետութիւնից ևայլն), այլ բնական, ազգային օրգանիզմներից: Իւրաքանչիւր ազգ է բնական անդամը մարդկութեան, որպէս ամբողջի (տես Պրօֆ. Մասարիկ, «Սոցիանալիզմ ի ինտերնացիոնալիզմ սոցիալ-դեմոկրատիի», եր. 18):

շարժումը ԽIXրդ դարում» աշխատութիւնը հետեւեալ խօսքերով: «Կօմիունիստական մանիֆեստը սկսելով յայտնի բառերով՝ ամենին այժմ գոյութիւն ունեցող բոլոր հասարակութիւնների պատմութիւն: Նը գասակարգային կոռու պատմութիւն է» — կարլ Մարքսի, ըստ իս սրանով յայտնել է ԽIXրդ դարու ամենամեծ ճշմարտութիւններից մէկը: Բայց նա չէ ասել ամբողջ ճշմարտութիւնը: Ճշմարիտ չէ, «որ հասարակութեան ամբողջ պատմութիւնը սպառում է բացառապէս դասակարգերի կուօփ: Եթէ մենք ցանկանում ենք տահասարակ համաշխարհային պատմութիւնը մի փորմուլայի վերածել, ապա կարծում եմ, որ մենք պիտի ամենք, որ զոյութիւն ունին կունակի հակասութիւններ, որոնց շուրջը գտանում է ամբողջ պատմութիւնը՝ սոցիալիզմն և ազգային հակասութիւններ (անտաշոնիզմներ): 1)

Ազգութեան իրեւ ուրոյն գործոնի ճանաչումը պատմահասարակական կեանքում իւր տրամաբանական հետեւանքն է ունենում այն տեսութիւնը, որն ընդունում է պետութեան բաղադրիչ տարրը ոչ թէ անհատը, այլ հասարակական կոլեկտիւը» 2): Առաջին ուղղութեան ներկայացուցիչները հակազրում են անհատը պետութեան: Ուրեմն, ըստ այս տեսակէտի, սպետական իշխանութիւնը սուհմանափակուած է միայն քաղաքացոց հիմնական (սուրբեկտիւ) իրաւունքներով» (իել. եր. 132), մինչդեռ միւս, կոլեկտիւթիւնական տեսակէտով պետական իշխանութիւնը պիտի սահմանափակուի կոլեկտիւների հանրային իրաւունքներով: Անհատն աստ պետական իշխանութեան հակազրում է ո՞չ թէ անմիջապէս, այլ կոլեկտիւի միջոցաւ (տես իել. եր. 132): *)

1) Տես Վ. Զոմբարս, — «Սոցիալիզմ ի սոցիալնոէ դվիթենիէ վ. ԽIX սոուլտիի», պետ պող բէկացիիեյ վ. Բոգուչարսկավու:

2) Տես «Սոցիալիստ Բէկոլիցիոնէր», թ. 3, եր. 132:

*) Այս տեսակէտի վրայ էլ — այսինքն տուիալ պետութեան մէջ

իուղը զործօն, ապա այս զործօնը մեծ դեր է խաղաւմ ե՛ւ ազգութեանց ծագման խնդրում^{*)} 1)։ Այնպիսի զօրեղ ոյժի տեր և այնպիսի իւրայատուկ զրոշմ ունեցող ազգութիւններ, ինչպիսիք են անգլիական, իտալական, ազգութիւնները, ըստ Ռանցէի, ո՞չ այնքան երկրի և ցեղային ստեղծագործութիւններ են, որքան իրադրութեանց խոչոր փոփոխութիւնների (ահս H. V. Ranke, Velt-

^{*)} Տես Achot Gasparian, der Begriff der Nation in der deutschen Gechrischt chrietbung des 19. Jahrhundetz (Beiträge zur Kultur und universalgeschichte). Leipzig, 1906. եր. 15—17.

Ազգութեան իրրեւ պատմական երեւոյթի վերաբերեալ կարելի է ասել, որ զերմանական պատմազիտութեան ամենախոշոր դէմքե ըրց մէկի՝ Ռանցէի կարծիքը զեւ այժմ էլ զերիշխող նշանակութիւն ունի։ Հատ Ռանցէի, ազգութիւնը պատմութեան արգասիք է, պատմական իրադարձութեանց մէջ տեղի ունեցող իրադարձութեանց արդիւնք եւ որովհետեւ Ռանցէի պատմակոն աշխարհայնացքի համաձայն, պետութիւնը իւր ուժերի ծաւալումով, ուրիշ խօսքով քաղաքական մօմէնաը հանդէս է գալիս իրրեւ պատմական

ազգութիւններն իրրեւ ողցիալական կոլլեկտիւններ դիտած—հիմնուում է աւստրիական հրապարակազիր R. Springer (Sinoptileüs)ի յոյանի թէորիան։ Վերաբերեալ ազգութեանց խնդրի լուծման նախկին աւարօ-ունկարական և առնատարակ այն պետութեանց շրջանակում, որ մի քանի ազգութիւններ միասին խառն ապրում են։ Հատ այս թէորիայի, պիտի կազմակերպել այդպիսի ազգութիւնները որպէս իրաւաբանական անձնաւորութիւններ, որոնք հանրային և քաղաքացիական իրաւունքի սուրբնեկաններ են։ Այսպէս, կազմակերպուած ազգութիւնը օֆտուած է որոշ իրաւունքներով և պատմախանաւութեամբ և իւրաքանչիւր ազգի իւրաքանչիւր անզամբ պիտութեան որոշ մասերում որոշ չափով օգտուում է իւր ազգութեան տաշտանութիւնից և մասնակցում է նրա տուրքերին ու պարտականութիւններին։ Աւրեմն պետական կազմակերպութիւնն աստ հիմնուում է անձնական սկզբունքի (Personalitäts princip) և ո՞չ թէ անդրտօրիալ սկզբունքի վրայ։ Ազգութիւնն աստ կազմակերպուում է որպէս անհատների միութիւն (ահս Արքուպտիկուս (Ռ. Շարբիկի) Գուսուզարաստի ի նացիա, թարգմ. գերմ. ից, Պ. Ա. Գուրեվիչ, 1906 եր. 56 և 59. Համեմատել Վազրդիենիկ, եր. 53 59։

1) «Ազգ» բառով սովորաբար հասկացում է ե՛ւ կուլտուրական միութիւն, ե՛ւ քաղաքական միութիւն։ Թէպէտեւ վերջին զէպում, այսինքն իրրեւ պետութեան համայն բնակչութիւն, հոմանիշ է մեր ժողովուրդ բառին, սակայն ժողովուրդ բառը զործ է ածում նաև այլ առումներով. օրինակ «das Volk», բառը զերմաններէնում նշանակում է 1) ժողովուրդ որպէս քաղաքան միութիւն, այսինքն մի պետութեան պատկանառ բոլոր անձններ, 2) այսպիսի քաղաքական միութեան մասն ըստ տեղի, ըստ նաև արականական բաժանմուն և ըստ բազմական բաժանմուն։ 3) ժողովուրդ որպէս ընական միութիւն ցեղ։ 4) Ազգութիւն՝ կուլտուրական իմաստով վերցրած։ Գերմանական զրականութեան մէջ մենք հանդիպում ենք ժողովուրդ բառի այս չօրս տիպի գործածութեանց եւս։ (Տես J. Neumann. Volk und Nation, եր. 50, 74, 132—133։

Հայոց զրականութեան մէջ այժմ «ազգ» բառը որոշակի նշանակում է կուլտուրական միութիւն, թէպէտեւ հին Հայաստանում գտ նոյնանիշ է եղել «տոհմ» և «զարմ» բառերին (ահս «Գործ» ամսազիր, 1917, թ. 1), եր. Յու ժողովուրդ բառը մեզ մօտ վերցիշեալ առումներից չորսն ունի։ 1) Իրրեւ մի պետութեան պատկանող ընդհանուր ազգաբակչութիւն, օրինակ Ռուսիայ, Աւստրիայ ժողովուրդ։ 2) Իրր սոցիալական բաժանում օր. ժողովրդական երգեր, ժողովրդական հաօս։ 3) Իրր անդացիութիւն ցոյց տուղ. օր. Դարբադի, վանի ժողովուրդ։ 4) Իրրեւ ազգութիւն (կուլտուրական իմաստով առած) օր. «Ռաքի ե՛ւ, զու հայ ժողովուրդ»։

gechichte 1. teil. եր. IX): իբր այդպիսի պատմական իրազարձու ձութեանց օրինակ կարող ենք մենք գերմանացոց ներխուժումը հոռվմէական կայսրութեան մէջ յիշատակել, որով թէպէտեւ հռովմ. կայսրութիւնը արեւմուտքում խորակուեց, բայց չրջանները այդ տիրապետողների հետ միացան և այդ հանգամանքից նոր ազգեր առաջ եկան (տես Ranke. Veltgeschichte. 9. teil. II. abt. եր. 46):

Յատկապէս Գերմանիոյ համար Ռանքէն նկառում է, որ նախան կարլոս Մեծը դա իսկապէս գոյութիւն չուներ (Կարլոս Մեծի միջոցաւ միայն 9րդ զարուժ գերմանացի) ընդհանուր կոչումը ընդունելութիւն ստացաւ), որովհետեւ մինչեւ այդ կին ցեղերն իրենց ամեններին միմեանց պատկանեալ չէին նկատել: Միմիայն նրանով, որ Կարլոս Մեծը նրանց բոլորին իւր զայխոնի տակ միացրեց. նըրանք սովորեցին իրենց իրենց միութիւն ճանաչել^{*)}: Անգլիական և Գրանսական ազգութիւնները պետ ոկան ուրոյն միութիւնների մէջ են իրենց ազգութիւն աճել, զարգացել և այդ երկրներում ազգութեան և պետական կազմի կատարելագործումը համընթաց է զընացել¹⁾:

Հայոց պատմութեան մէջ եւս քաղաքական բոլոր դէմքերի վերական ազգեցութիւնը ազգային միութեան տեսակէտից յաճախ շեշտուած է. այսպէս Դարագաշեանը իւր քննական հայոց պատմութեան մէջ հետեւեալ ձեւով է գնահատում Տիգրան Մեծի արժէքը հայ ազգի համար. Ճիփրակի է կոչել մեծին Տիգրանայ ժամանակն, աննման փառաւորութեան հետ, թէպէտ կարծ հայ ազգի մը անձնաւորութեան ժամանակ. այնպէս որ ըստ մեզ, ի Տիգրանայ և այսր պարտ է խնդրել հայ ազգ. ի Տիգրանայ և անդր հայը սազմն է անկերպարան. առ Տիգրանաւ կը ծնանի, կը համնի ի չափ, կը ծերանայ միանգամայն²⁾:

^{*)} Veltgeschichte. 9. teil. II. abt. եր. 68, տես նաև S. Verke. 1. Bd. եր. 9:

1) Տես O. Gintze. Historische und politische Aufsätze. 4. Bd. եր. 11 և 177:

2) Ա. Ա. Գարգառեան,— պահանական պատմութիւն հայոց, 1895, Թիֆլիզ, մասն Բ. եր. 129:

Կարելի է ասել, որ ներկայումս զրեթէ բոլոր գերմանական պատմաբանները որդեգրել են քաղաքական մօմէնտի և իրադարձութեանց այն խոչոր նշանակութիւնը, որ Ռանքը տալիս է ազգութեանց ծագման խնդրում: Յատկապէս էդ. Մայերի մօտ զանդէս է զալիս շեշտակի կերպով: Հստ էդ. Մայերի՝ ազգութիւնը ների պատմութեան մէջ ոչ թէ իբր տուեալներ և սկզբնական բաներ են հանդէս գալիս, այլ պատմական զարգացման մի բարդ արդիւնք: Բոլոր ազգութիւնները, որոնք այժմ գոյութիւն ունեն Եւրոպայում, շատ յետազայ պատմական արգասիքներ են, որոնք առաջ են նկել բազմապիսի և յաճախ շատ արտաքին դէպքերի ազգեցութեան տակ. ինչպէս օրինակ Ժառանգութեանց բաժանման և այլն. օր. սպանացիք և պօրտուգալցիք: Ֆրանսական և գերմանական ազգերի ծագման համար առաջին հերթին հիմնական նշանակութիւն ունի այն պատմական դէպքը, որ Լոթարի ընտանիքը վերջացաւ և միջանկեալ պետութիւնը դադարեց գոյութիւն ունենալուց: Այնպիսի բարդ և ո՛չ ռանգարաժեալ կամ օրինաչափութեան գէպքեր են եղել պատճառ, որ դարերի ընթացքում որոշ քանակ գերմանական ցեղեր ձուլուեցին գերմանական ազգի մէջ, կամ ընդհակառակը հոլանդացիք իրեր ուրոյն ազգ նոցանից բաժանուել են¹⁾: Ուրիմն կարելի է ասել Անորագոյն ազգութիւնը պատմական արդիւնք է մի շարք դէպքերի, որոնք այսպէս ասած՝ հաւաքւում են մի ընդհանուր կէտում²⁾:

Ուրիմն ազգութեան համար որոշիչ նշանակութիւն է ստանում քաղաքական պատմական դէպքերի արժէքը: Ազգութեան ծագման խնդրը, ազգութիւն կազմող տարբերի որակը կարծէք թէ այդ հանգամանքով անկարեւոր մի հանգամանք է զարում: Եւ սրան

1) Տես Ed. Meyer. Kleine Chriften. եր. 37, 38: Տես գերմանական պատմաբանների կարծիքն այս նոյն խնդրի շուրջը. Ashot Gasparian. ibid. եր. 38—49.

2) Երևան Ռենան,— «Ի՞նչ է ազգութիւնը», թարգմ. Յար. Ղարեգինեանի, 1905, Թիֆլիզ, եր. 22: Տես առհասարակ քաղաքական գործոնի գերբը ազգութեան խնդրում, Ռընան, լիդ. եր. 15—22.

իբրեւ ապացոյց բերւում է այն փաստը, որ արդի ազգութիւնները պատմութեան ընթացքում տեղի ունեցող խառնուրդ են բազմաթիւ ցեղերի, անզամ ռասսաների: Այսպէս Ռընանը շշառւմ է, որ զուտ ցեղ չկայ (ibid. եր. 31), «Եւրոպայի առաջին ազգութիւնները բացառապէս խառնուրիւն ազգութիւններ են» (ibid. եր. 35) 1): Միայն ազգութիւն կազմուելու ամենանախնական մօմէնտում միեւնոյն ցեղին պատկանելը առաջնակարգ նշանակութիւն է ունեցել 2), սակայն ժամանակի ընթացքում այդ ցեղային ընդհանրութեան ակըքքունքը խախտուած է համարւում ցեղերի բազմաթիւ խառնուրդների պատճառով: Այստեղից հասկանալի է թէ, ըստհանրացման միջոցով, ինչպիսի ծայրանելութեանց կարելի է հասնել: Արգեօք կարելի է պնդել, որ տուեալ կուլտուրայի համար ոչ մի նշանակութիւն չունի, թէ դրա ստեղծող ազգը ի՞նչ տարրերից է բաղկացած:

Ճիշտ է արդեօք, ասում է իրաւամբ Ֆուլին: որ արուեստի զարգացումը Յունաստանում ամենաելին կախուած չէ ռասսայից, այլ բացառապէս սոցիալական պայմաններից: Կարելի՞ է արդեօք կարծել, որ նեղերը կարող եին աթէնացոց փոխարինել: Ֆիդէասի բնական հանձնարը, առում է Ֆուլին, անկասկած արտայայտուեց ուրոշ չափով նրա գլուխ զործոցներում և այս հանձնարը իւր հերթին բոլորովին անկախ չեր այն ժամանգականութեան և ռասսայի ազգեցութիւնից, որին պատկանում էր Ֆիդէասը 3): Զընդունելով հանդերձ, որ միայն ռասսաների հակումներն են կազմում պատմութեան շարժիչ ոյժը, մեզ թւում է, որ յամենայն դէպս, ինչպէս

1) Պատմեր, — «Օ նացիոնալնոյ ի տերրիտորիանունոյ աւտոնոմիի», եր. 12—13: Կ. Կառոցիի, — «Նացիոնալնոստ նաշէվօ վրէմէնի», եր. 4—5:

2) Գ. Նօվօնդսկիի, — «Ազգային հարց, աւտոնոմիա և ֆէդէրացիա», թարգմ. Գ. Խ. Թիֆլիզ, 1907, եր. 1: Կ. Կառոցիի, «Կրիզիս Աւստրիա», եր. 6—7: Ռընան, «Ի՞նչ է ազգութիւնը», եր. 35:

3) Տես Ա. Ֆուլին, — «Ֆուկաորի նացիոնալական իսարակաբառ», եր. 16:

թարան է ասում, ռասսաների ֆիզիոլոգիան և հոգեբանութիւնը ներուժին տարրեր գունաւորում է տալիս նրանց կեանքին, այլիւ նայած ռասսայի բարձր կամ ցածր մուաւոր զործունէութեան՝ արագացումը կամ դանդաղեցումը է նրանց զարգացումը 1): Այս տեսակէտից ուրիմն յատուկ կարեւորութիւն է ստանում, թէ ի՞նչ տիպի ռասսաների խառնուրդ է տուեալ ազգութիւնը, որովհետեւ եթէ միաձուլող ռասսաները խոշոր տարրերութիւն են ներկայացնում, ապա այդ հանգամանքը սերնդի կենսական ոյժին չի նպաստում (ibid. եր. 222): Նոյնպէս յատուկ կարեւորութիւն է ստանում այն պարագան, թէ տուեալ ազգը ինչ ցեղային բաղադրութիւն ունի, որը բնորոշում է, այլ ֆակտորների հետ, այս կամ այն ազգութեան բնոյթը, նրա բովանդակ կուլտուրական ստեղծագործութիւնը: Ուրիմն խնդիրը ոչ թէ զուտարիւնութեան կամ խառնուրդ լինելուն մէջն է, այլ թէ ի՞նչ տիպի խառնուրդից, կամ ի՞նչպիսի բաղադրիչ մասերից է ծագուել տուեալ ազգը: Ազգութիւնը պարունակում է իւր մէջ շատ բիօլօգիական տարրեր, չնայած այն փոփոխութեանց, որոնց նա ենթարկուել է կամ ենթարկում է սոցիալական ֆակտորների ազգեցութեան տակ 2): Աստ կարեւոր է նոյնպէս չետել, որ մի իսկական ազգի մասին այն ժամանակ կարող է լինել, երբ նրա բոլոր բաղադրիչ մասերը լիսկատար ձուլուել են, երբ մի եթնիկ տարրը միւսի կողմէից յաղթուած կամ կլանուած է 3), կամ երբ երկուսն էլ համարեա հաւասարապէս ձուլուել են միմեանց մէջ:

Մի բան սակայն անկասկած է, որ Քաղաքակրթութեան աճմամբ ռասսայի խնդիրը աւելի երկրորդական կողմ է մզւում, մինչեւ սոցիալական և պատմական միջավայրը աւելի մեծ նշանակութիւն է

1) Պ. Բարս, — «Ֆիլոսոփիա պէտօրիի կակ սոցիոլոգիա», եր. 222:

2) «Նացիոնալիյ վոպրոս պէրէղ սուլքոմ սոցիալ-գեմոկրատիի», եր. 15:

3) See K. Breysig, Kulturgechichte der Neuzeit. I. Bd. Berlin, 1900, եր. 75.

ստանում (տես Ֆուլիկ, *Ibid.* եր. 17): Պատմական միջավայրի նշանակութիւնն ասելով պիտի հասկանանք մի որոշ տերիտորիայի վրայ գոյացած ուրոյն կուլտուրա, որի ատեղծման պրօցեսում տուեալ ազգը իւր սոցիալական կեանքը զարգացրել է անընդհատ կերպով տւածնոմ ազգային ձեւերի մէջ։ Ազգի բոլոր անդամների ունեցած զարեւոր ընդհանուր ապրումները, բնկուելով այդ աւտօնօմ ազգային ձեւերի մէջ, առաջ են բերել աշխարհագրական և ֆիզիքական պայմանների հետ միասին այն ինքնատափ անհատականութիւնը, որ ազգային է կոչում *): Եւ ինչպէս որ անհատականութեամբ օժառուած մի անձի մէջ նրա բոլոր ապրումները միւթեան են վերածուած, և կարելի է ասել, որ նրա իւրաքանչիւր անգամ ամենաչնչին գործերում նրա ամբողջ հութիւնն է հանդէս զալիս, այդպէս էլ ազգային անհատականութիւնը, որը պատմական պրօցեսում կերտուել է, իւր իւրաքանչիւր ստեղծագործական ակտի մէջ, եթէ նա չէ անդամալուծուած զրոի օտար ուժերից, ազգութեան ամբողջ անցեալն ու ներկան օրգանապէս շաղկապուած մարմացնում է՝ ձիշտ է, պատմութեան որոշ շրջաններում այդ ազգային անհատականութիւնը աւելի շեշտուած է հանդէս զալիս, ինչպէս օրինակ 19րդ դարում, երբ շնօրհիւ հասարակական կեանքը գեմոկրատացման և լուսաւորութեան զործի ընդհանրացման 1), տուեալ ազգի կեանքն աւելի բարդ բոլանդակութիւն է սատնում և ուրեմն աւելի հող կայ ակտիւթեան և անհատականացման, սակայն ինչպէս վերեւում նկատեցինք, դրա հետեւանքն է լինում ազգութեան տարբեր Փազը, նրա տարբեր կերպաւորումը:

*). Ազգային ինքնազիտակցութիւնն էլ իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգութեան պատկանող անձանց զիտակցութեան որոշ ժամանակուր, անցողակի պատկերացումների միացումը աւելի մնայուն պատկերացումների հետ, որոնք առաջ են եկել ազգութեան ընդհանուր անցեալի հողի վրայ։ (Տես այս մասին Բարտ, *Ibid.* եր. 135—137։

1) Տես Լ. Գումարովիշ, — «Նացիոնալիզմ ի ինտերնացիոնալիզմ», գ. XIX վեկէ, 1906, եր. 29—37։

Յատկապէս արդի կուլտուրայի անտեսական կողմը, որ այն քան մեծ և գունաւորող ազգեցութիւն ունի հասարակական կեանքի վրայ, երբ ներկայում անտեսական կեանքը ազգութեան տարբեր հատուածներին անհրաժեշտօրէն միմեանց հետ կախման և ըփման մէջ է զրել, աւելի պիտի նպաստէ նրանց ընդհանուր յատկութեանց զպայցունց լինելուն. բայց մեզ թում է, որ սիալ կը լի նի կարծել, ինչպէս իրաւամբ շնչառում է Յ. Մանակեանը. թէ, օրոշացութիւնը իր պատմական անցեալում չէ եղել ազգային մի ամբողջութիւն և չէ ապրել համազգային գաղափարով, իբրև կուտուրական ուրոյն մի խմբակցութիւն (1), եւ նիշտ է այս տեսակտից հայութեան իրբու ինքնատափ ազգի հանդէս զալը պատրութեան ամենանախական շրջաններում փնտռել։ Եթէ հայութեան զանազան ցեղերի հօծ բազմութեան այդ ազգային զպացունքը մատչելի չէ եղել (ինչպէս օրինակ նոյնպէս գերմանական ցեղերի մաս, նախնական շրջաններում զա բացակայել է) (2), զա բացասրւում է միայն ազգութեան լոյն խաւերի տղիտութեամբ, որի շնօրհիւ նրանք հնար չեն ունեցել մասնակցել ազգային կուլտուրական արժեքներին. մինչդեռ հայութեան մտաւորապէս բարձր խաւերի մէջ — օրմատոր գասի մէջ — որոնք սաեղծել են և վայելել այդ արժեքները, զառ է եղել այդ ազգային զպացունքը և ազգային միութեան զպացիաբը։

Անցնենք այժմ ազգութեան զպացիարի հիմնական տարրերից մէկի՝ լեզուի ունեցած զերին։ Իրաւամբ նկատուած է, որ Շատանց լեզուի ընդհանրութեան՝ անհնար է որևէ հասարակական հանրակեցութեան զոյլութիւնը (3), հետեւապէս նա նախնական պայմանն է հէց իւր իւր հայ հասարակութեան 4): Եւ եթէ տուեալ ազգը իւր սոցի-

1) Տես «Գործ» 917, թ. 1, եր. 4։

2) *Stra Heinrich. Rybel. Die deutsche Nation und das Kaiserreich.* 1862. Düsseldorf. եր. 24, 25, համեմատել անդ. եր. 23։

3) Կ. Կառուցիի, — «Ազգութիւնների հարցը թուսաստանում»։

4) Կ. Կառուցիի, — «Կրիզիս Աւստրիա», եր. 4։

ալտկան կեանքը պատմականօրէն զարգացրել է ազգային ուրոյն ձեւերի մէջ, ապա այդ ուրոյն ձեւերի յաջորդականութիւնը կարելի է միայն ազգային լեզուի միջոցով, որը հասրաւորութիւն է տալիս ազգային կուլտուրական կառուցուածքներին սերնդից սերունդ փռխորուել և սաեղծել աւանդական կապեր, որոնք միացնում են միմեանց հետ հարիւրաւոր սերունդներ և այդ պատճառով էլ լեզուն հանդէս է գալիս իւրաքանչիւր հասարակական կեանքի համար իբր անհրաժեշտօրէն կանխող ժամանակի կատեղորիա 1): Լեզուն իւր զարգացման ընթացքում ցոյց է տալիս ազգութեան յատուկ տենգենցները, որոնք իրենց կնիքն են դնում նրա վրայ 2): Եւ որքան ազգի հոգեկան զարգացումը բարձր է, այնքան էլ նրա լեզուն անհատականանում է, այսինքն արարեւում է միւս ժողովուրդների լեզուից: Մենք զիտենք, թէ լեզուն ինչպիսի ճակատագրական նշանակութիւն է ունեցել ցեղերի ձուլման խնդրում: Ի՞նչնանը յիշատակում է, որ երբ զերմանական ցեղերը ներխուժեցին հովվմէական պետութեան մէջ, նրանց յունա-լատինական ժողովուրդների հետ ձուլուելու գործոններից մէկը եղաւ այն հանգամանքը, որ նուածողներն իրենց լեզուն ժամանակի ընթացքում մոռացն և խօսեցին հովվմէական լեզուվ 3): Բերել իբրեւ փառա, որ ամերիկացիք նոյն լիզուով են խօսում ինչ անզիւթիք, բայց չնայած զրան երկաւոն էլ տարբեր ազգեր են և զրանով ապացուցանել, որ իբր թէ ազգութեան իննդրում լեզուն երկրորդական նշանակութիւն ունի—դա նշանակում է ոչինչ չափացուցաննել: Ամերիկացիք զնացել են Ամերիկա իբրեւ անզիւթական ազգին պատկանող հատուած և այժմ այդ անզիւթական լեզուն— ինչպէս զիտուած է—որոշ փոփոխութեանց է հնթարկում Ամերիկայում, չնորհիւ այն հանդամանքի, որ այնաեղ աշխարհագրական և այլ պայմանների ազգեցութեան

1) «Նացիոնալնիյ վոպրոս պէրէդ սուպոմ սացիալ-գենոկրատիի», եր. 11:

2) Ա. Ֆուլիկ, — «Թակտօրի նացիոնալնավո խարակտերա», եր. 9:

3) Տես Ռենան, — «Ի՞նչ է ազգութիւնը», եր. 16—17:

տակ մի նոր, ամերիկական ազգութիւն է սաեղծուում, որին ե՛ւ պիտի համապատասխանէ նրա նոր լեզուն: Եթէ բոլորավին արտապոց պայմաններում, օրինակ նրէանները այսօր ազգային գրական և ընդհանուր լեզու չունեն (մի կողմ թողած նրանց ժարգոնը), բայց և այնպէս իբրեւ ազգութիւն զոյտութիւն ունեն, զա ցոյց է տալիս, որ ազգութեան բնորչման խնդրում ժակարտները իրենց կարեւորութեան տեսակետից յետ կամ տասջ կարող են մշուել (կասկած չկայ, որ հրեից հին քաղաքակրթութիւնը երրայտական ուրոյն լեզուի վրայ է կառուցուել): Այնպիսի մի տարր, ինչպիսին կրօնականն է, որ միւս ազգութիւնների համար այժմ շատ երկրորդական գեր է խաղում, հրեից մասայի մօտ հսկայական պատմական՝ արժեց է ներկայացրել և ներկայումս էլ ներկայացնում է ազգային մեկուսացման, ուրոյնութեան համար:

Զատ ճիշտ նկատում է Երիւլ լ-Շահեկոլսկայան, որ ազգայնութիւնը բարդ զաղափար է, որ յաճախ տարբեր կերպով է կօմբինացիա կազմում: Ազգութիւն կազմող տարբերից շատերը առանձին-առանձին կարող են ներքուել, բայց և այնպէս զրանով ոչինչ ձեռք մերած չենք (ինիք Վերոյիշեալ հեղինակը սրամաօրէն նկատում է, որ մի պարոն Վատիմ Վլոյիով («Նարոդնայա Միուլ, 1915, թ. 1) ազգութեան զոյտութեան փաստը աշխատել է յաղթականորէն ժիտել նրանով, որ ջանացել է առանձին-առանձին վերցրած հերքել ուսասալի, լեզուի, կրօնի, կենցաղի և այլն ընդհանրութիւնը իբր ազգութեան որոշիչ նշաններ, մինչդեռ սօցիօլօգիայի մէջ չպիտի այսպիսի թուարանական մեթօդով վարուել եթէ իւրաքանչիւր մասը ինքն ըստ ինքեան վերցրած չէ արտայայտում ճշմարտութիւն, ապա նույա կօմբինացիանները կամ ամբողջը միասին վերցրած կարող են մեզ ճշմարտութեան հասցնել):

Եթէ ազգութիւն կազմող ժակարտների մէջ կայ մի տարր, որ արսօլիւտ նշանակութիւն ունի, զա ազգի ընդհանուր պատմական անցեան է, որի վրայ կերտուել են ազգութեան բնորչ յատկանիշ-

1) Տես Խ. Վ. Երիւլով-Շահեկոլսկայա, — «Պարափա սոցիալիստովեգութիւններով ի նացիոնալնիյ վապրոս», 1917, Պետերբուրգ, եր. 5—6:

ները, որոնք սակայն ազգութեան համար ունեցած իրենց նշանակութեամբ յետ ու առաջ կարող են մղուել զանազան կօմբինացիաների մէջ։ Այդ կօմբինացիաներում, ի հարկէ, կարող են յատկառիներից ոմանք համեմատաբար առաջնակարգ նշանակութիւն ստանալ, միւսները՝ երկրորդական։ Ֆակտորների իրական նշանակութիւնը տուեալ ազգի համար միայն այն ժամանակ կը պարզուի, երբ մենք դրանց կը դիտենք ազգութեան առանձնակի պատմահասարակական միջավայրում։ Այստեղ միայն մենք ի վիճակի կը լինենք գերահասու լինել, թէ ազգութիւն կազմող տարրերից որն ի՞նչ գեր է խաղացել և խաղում և ի՞նչպիսի յարաբերութեան մէջ է միւս տարրերի հետ։

Սեփական տերիտորիա ունենալը եւս ազգութեան գաղափարի անհարաժեշտ յատկանիներից չէ, հնց թէկուզ այն պատճառով, որ զոյութիւն ունին ազգեր, որոնք առաջարակ որևէ ուրոյն տերիտորիա չունին, ինչպէս օրինակ հրէաները, կամ զոյութիւն ունին մանր ազգութիւններ, որոնցից մի քանիսը խառն կերպով մի ընդհանուր տերիտորիայի վրայ են ապրում։ Հրէաները ներկայացնում են մէկն այն քարակտէրիստիկ անտրօպոզիտական տիպերից, որոնց դարերի ընթացքում պահպանել են իրենց յատկութիւնները, չնայած այն աշխարհագրական և այլ պայմանների տարբերութեան, որոնց մէջ նրանք ապրել են և ապրում են աշխարհի զանազան մասերում ։¹⁾ և այս անսակէտից մեր կարծիքով անարդար է կ. Կառլ Գին, ասելով թէ «հրէաները գաղարել են որպէս ազգութիւն զոյութիւն ունենալուց, որովհետեւ ազգութիւնն անհականալի է տառնց որոշ տերիտորիայի ։²⁾ Ամկայն եթէ ազգութեան գաղափարի համար ուրոյն տերիտորիան քնորոշ և անհարաժեշտ յատկանից չէ, ուրիշ խօսքով արսօլիւտ նշանակութիւն չունի, դրանով, ի հարկէ, ամենելին ժիշտուած չի լինում այն հսկայական դերը, որ կատարում է

1) Մ. Վ. Բատներ, — «Օ նացիօնալնոյ ի տերիտորիալնոյ առանութիւ», եր. 15, համեմատել Նովառոբակիյ, *ibid.* եր. 5 - 6։

2) Կ. Կառլըկիյ, — «Եվրէյսկիէ պապրումի ի ելլէյսկիյ վուպրոս», 2 օե իդանիք, 1908, եր. 6։

նա ազգային կեանքի ստեղծման և բարզաւածման համար։ Ազատ կուլտուրական անկախութիւն անկարելի է այնտեղ, ուր չկայ սեփական հող ոտքերի տակ։ Կուլտուրական կառուցուածքները (պետութիւն, զիաւութիւն, կրօն, զեղարուեստ) միմեանց հետ անքակտելի կերպով կապուած են և մի միութիւն են կազմում։ Ներկայացման գեղագում յատկապէս հասարակական քաղաքական և անտեսական խնդիրները խոշոր գեր են խաղում և այս խնդիրների անկախ կարգաւորումը անհարաժեշտ բազիսն է առհասարակ անկախ կուլտուրական կեանքի ստեղծման համար, իսկ դա կարող է տեղի ունենալ միայն սեփական հող ունենալուց յետոյ ։¹⁾ Եւ այս տեսակէտից իրաւամբ նկատում է Բօրիսովը որ թէպէտ ազգութիւնը անձնական միութիւն է, որի կենցաղը չէ զուգագիպում անպայմանօրէն որոշ հողային սահմաններին, բայց և այնպէս հողի միութիւնն ու ընդհանրութիւնն է ազգութեան ֆիզիքական և հոգեկան զարգացման կարեւոր պայմաններից մէկը ։²⁾ (թէպէտ և ո՞չ վճռականապէս որոշող)։ Տերիտորիայի միութիւնը, որով հնարաւորութիւն է ընձեռնում տուեալ ազգի անհամաներին կենտրոնանալ մի վայրում և մշտական շփման մէջ մտնել միմեանց հետ, հնարաւորութիւն է տալիս առանց ոյժերի աւելորդ վատնման ազգի նիւթական և կուլտուրական կեանքը բարգաւաճել ծ)։

Եթէ ազգութիւնը չունի ուրոյն տերիտորիա և ցրուած է աշխարհի զանազան մասերում, նա կամ իւր բոլոր կուլտուրական արժէքները պիտի յարմարեցնի այն աիրող ազգի վայմաններին, որոնց մէջ նա ապրում է, ուրիշ խօսքով իւր սեփական անհատականութիւնը զաներէ — զոյութեան անողորմ պայմանների պատճառով — այս աշխարհում զոյութիւն պահպանելու համար, կամ ամենալաւ պարագային, երբ ազգային նկարագրը շեշտուած է տուեալ

1) Տես «Սերպ», սբորնիկ վարոյ, միտովսկի, «Դուխովնիյ նացիօնալիզմ» Դ. նա Դուքնովա, եր. 307։

2) Տես «Եղիշելիստ-բէվոլիւցիոնէր», թ. 2, եր. 247։

3) Տես Բօրիսով, *ibid.* եր. 248, 249, ահս նաեւ Մ. Վ. Բատներ, *ibid.* եր. 29։

ազգութեան հատուածի մէջ (որ օտար միջավայրում է զեղերում), նա անսահման լարումն իւր ուժերի պիտի զործադրէ հէնց միայն ևսկ չկանուելու համար այլ, իրեն շրջապատող և զերակառող աղդութիւնից։ Հասկանալի է որ այդ ազգային ինքնապահպանաման ճիզը իւր հարազատ և անկախ հայրենի երկրում աւելի արդիւնաւէտ աշխատանքների վրայ կը զործադրուէր։ Ի հարկէ, համեմատաբար դրութիւնը բարեկառում է, երբ ազգութեան մայր երկրից անջատուած մի հատուածը այնպիսի օտար հորիզոններում է ապրում, ուր տիրապետող տարրը կուլտուրապէս աւելի ստոր է, այս գէպքում անշուշտ վերոյիշեալ հատուածը կարող է համեմատաբար ազատ շարժուել և հայրենի կուլտուրային մասնակցել, օրինակ հայերը Պարսկաստանում, մինչդեռ հայութիւնը կեհաստանում ձուլուեց տիրապետող տարրի մէջ։

Տնրիտորիայի աշխարհագրական դիրքը ոչ պակաս կարեւոր է ազգութեան կազմակերպման խնդրում։ Կ. Կառուցկին տառում է. «ԱՄԷԿՆ այն տարրերից, որոնք պայմանաւորում են ազգութեան զարգացումը, նրա զրաւած տերիտորիայի աշխարհագրական դիրքն է։ Անանցանելի լեռնաշղթաները, ահազին և նաւազնացութեան համար անյարմար պետերը գժուարացնում են նախնական համայնքներին մի ազգութեան միանալու։ Նաւազնաց զետերը՝ իւր վատկներով, ընդհակառակը, տուած է բերում նրա աւազանում զտնուած համայնքների միացումն»¹⁾։ Աւճանը եւս առանձին արծէք է տալիս աշխարհագրական դիրքին. «Աշխարհազրութիւնը՝ իւրեւ բնական սահմաններ՝ անկառած մէծ նշանակութիւն ունի ազգութիւնների քաժանման զործում։ Աշխարհազրութիւնը պատմութեան էական զործներից մէկն է։ Գետերն են առաջնորդել ցեղերին, լեռներն են նրանց զեղերին։ Ի՞նչ վերաբերում է քարտգտէրին, ապա գրա մէջ փափոխութիւնը անհրաժեշտ հետեւանք է տեմպերամենտի և օրգանիզմի մէջ եղած փոփոխութեանց։ Սա արգէն անզիւցի չէ — այլ եանկը 1)։ Կլիմաները զոյութիւն ունին, օրոնք տրամադրում են մելամազնութեան, ճիշտ այնպէս, ինչպէս կան կլիմաներ, որոնք տրամադրում են ուրախութեան և անողութեան։ Երեւակայութեան ոյքը, հակումն երազների, նոյնիսկ զառանցանքների հակումը զարգանում է մեծ կամ փոքր չափով կլիմայի, միջավայրի և երկրի ընդեկանուր տեսքից 2)։

Ուրեմն անկառած է, որ ազգային բնաւորութեան կառուցման մէջ տերիտորիան, նրա հետ կապուած կլիմայական պայմանները որոշ գեր են խաղում։ Սակայն, աստ պիտի շնչառել, որ այդ գերն

1) Կ. Կառուցկի, — «Նացիոնալուստ նաշէքո վրէմէնի», եր. 28։

2) Ա. Ֆուլիկ, ibid. եր. 22, տես նաև եր. 19—20։

անպայման յարաբերական է և ո՞չ աբսոլիւտ։ Աշխարհազրական պայմանների և կլիմայի խնդիրը երբեք չպիտի բաժանել ուստացի ունեցած ազգեցութիւնից 1)։

Այստեղ առանձնապէս պիտի շեշտել նաև ժառանգականութեան դերը, ժառանգութեան հանգամանքը խոշոր նշանակութիւն է ունենաւ յատկապէս ազգութեան կազմակերպման սկզբի էպօխայում, մինչդեռ հասարակական կեանքի զարգացմամբ, ուրեմն եւ ազգութեան զարգացմամբ նրա ազգեցութիւնը դանդաղելով և նուազելով, աւելի կուլտուրահասրակական պայմանների դերն է (Միակերպ դաստիարակութիւն, կրթութիւն, ընդհանուր զարգափառներ, օրէնսդրութեան, բարքերի, անտեսական ռէժիմի ընդհանրութիւն) տիրապեսող հանգէս զալիս ու բնօրոշում ազգութիւնը 2)։

Կրօնական աշխարհը համարում է կուլտուրայի բովանդակութեան մէկ տարրը և նայած թէ տուեալ կուլտուրական զարարշջանում կուլտուրայի որ ուրոյն տարրն է գերիշխողն ու տան տուողը, ըստ այնմ էլ նրա բոլոր միւս բազկացութիչ տարրերը համապատասխան զունաւորում են ստանում։ Լայպցիկի համալսարանի ուսուցչապետ Շպինգերը իւր *"Lebensformen,"* (կենսաձեւեր) անունով գերին ասուինանի հոգեշտի աշխատութեան մէջ աշխատում է ապացուցանել, որ ինչպէս կան զանազան տիպի նկարագրիներ (ինչպէս օրինակ գեղարվեստական, կրօնական, պկաւական, զիաական և այլն), նոյնպէս էլ գոյութիւն ունեն տարրեր նկարագրներով օժտուած կուլտուրական դարաշրջաններ։ Օրինակ՝ զեղարուեստական նկարագրի ունեցող անձի մօտ նրա բոլոր ապրումները գտնուում են զօրեղ ազգեցութեան առաջ նրա զեղարուեստական տիպի ապրումների և սրանցից են ստանում իրենց ուրոյն բնութագեւը։ Այս վերաբերում է նաև կրօնական, գիտական, քաղաքական և այլ նկարագրին ազգեկան կառուցուածքներին։ Նոյնը պիտի ասել նաև պատմական դարաշրջանների վերաբերեալ, որ կրօնական դարաշրջանում հասարակական կեանքի բոլոր կողմէրը զօրեղ կերպով ազ-

դուած են դարու կրօնական սպուց և կրօնականորէն են ձեւակերպում իրենց կուլտուրական կառուցուածքները։

20րդ սէալիստական դարում անշուշտ կրօնը չունի այն վճռական նշանակութիւնը, գոնէ հասարակութեան հոգեպէս զարգացած խաւերի համար, ինչ նա ունեցել է որ միջնադարում 1)։ Անուշտ կրօնը անհրաժեշտորէն չէ մանում գաղափարի մէջ, և նոց թէկուզ այն պատճառով, որ կարելի է լինել անհաւատ, բայց և այնպէս այս կամ այն ազգութեան գիտակից անդամը լինել։ Սակայն ինդիր այսպիսի դուռ աբսոլիւտ ապահովութեան կազմակերպման խնդրում 2) և ամերիկանարային պատմութեան շատ էպօխանիրում կրօնական միութիւններն են են զիլ, որ շատ ազգերին միացած են պահել)։ 3) Յատկապէս Ցըրան, սիոյ համար Ծամքը նպաստում է, որ երբ այնտեղ կաթոլիկականութիւնը վճռական յաղթութիւն տարաւ, նա դարձաւ «ազգային միութեան մի մօմէնտ» 3)։ Տրայոչկէն նոյնպէս այն կարծիքին եր, որ Սպանիան, քանի այդանու քրիստոնէութիւնը յաղթաւակ չէր տարել, զեր ազգութիւն չէր ներկայացնում 4)։ Գերմանական արքի յայտնի պատմաբաններից պրօք. Լինցը նոյնիսկ ներկայ դարաշրջանի համար շեշտում է կրօնի զերը ազգային անհաւականութեանց համար, նկատելով որ այժմ, ազգային կոփուների դարաշրջանում, նոյնիսկ ազգեր ենք անուում, որոնք իրենց եկեղեցու պատմանութեան տակ իրենց միութեան և ուրոյնութեան գիտակցութիւնը ինտենսում և պահպանում են, որոնց եկեղեցին օղում է իրենց ազ-

1) *Sitz. Preuß. Akad.,* — «0 նացիոնալույ ի տերրիտորիանոյ առողջապահութիւն, եր. 13—14։

2) H. V. Ranke. *Abhandlungen und Versuche.* եր. 38 և 39, Leipzig, 1972.

3) H. V. Ranke. *S. Verke.* Bd. 51/52. եր. 513.

4) *Sitz. A. Gasparian. der Begriff der Nation in der deutsche Geschichte im 19 Jahrhund.* եր. 30.

1) Ա. Ֆուլիկ, *ibid.* եր. 23։

2) *Sitz. A. Ֆուլիկ, ibid. եր. 27 և 24։*

զային ոյժը կատարելագործել և սեփական պետական կետնք ձեռք բերել 1): Ակնյայտ է, որ զերմանական պատմաբանը ասու ի միջի այլոց հետ լիներին է մատնանշում, որոնց մօտ կաթոլիկ քահանան, ինչպէս յաճախ նկատուած է, նախ քան վերջին համաշխարհային պատերազմը, զօրեղ կերպով հրահրում էր ազգային զգացմունքը, յատկապէս Արեւելեան Պրուսիոյ մէջ հակառակ լիւթերական եկեղեց։

Իւրաքանչիւր ով, ով ծանօթ է կաթոլիկ եկեղեցու կազմակերպութեան, զիտէ անշուշտ թէ կաթոլիկ քահանան ինչպիսի բազմապիսի թելերով կապուած է կաթոլիկ ազգաբնակչութեան յատկապէս սոորին խաւերի հետ և ուրեմն հասկանալի է թէ լիների պէս մի ձնշուած ալզութեան վերաբերեալ ի՞նչ կարող է անել այդպիսի մի ազգային կրօնականը։ Մի ուրիշ ազգի, հրեից համար եւս կարելի է ասել, որ կրօնը ամենաէիմնական տարբերից մէկն է, որով այդ հայրենազուրկ ժաղովուրդը, ցրուած աշխարհի բոլոր ծայրերում, կարողանում է իւր մեկուսացած և ուրոյն նկարագիրը պահել, հակառակ ամենաաննպաստ քաղաքական, տնտեսական և կուլտուրական պայմանների։

Մեզ հայերիս համար եւս եկեղեցին ունեցել է իւր պատմական նշանակութիւնը, որը յատկապէս կախուած է մեր առանձնակի քաղաքական պայմաններից։ Գարագաշեանը իւր քննական պատմութեան մէջ զրում է. Շիրիստոնիութիւնն իւրիւ եկեղեցի՝ տուազ զրեթէ բարբարոս հայուն ոչ միայն լինել մասնակից քրիստոնէական քաղաքակրթութեան, այլ և ունենալ միութիւն՝ որմէ զուրկ

1) M. Lenz. Kleine historische Ceristen. 2. farw. Auf. 1913.
Կր. 241—242.

Ռոնանը մատնանշում է իւրիւ պատճառներից մէկը, որով զերմանական ցնդերը ձուլուեցին յունական և լատինական ժողովուրդների հետ, այն հանգամանքը, որ նրանք երկարատեւ շիման շնորհիւ ընդունեցին նոյն կրօնը, քրիստոնէութիւնը, ինչ որ մենք չենք ուենաւում Տաճկաստանում, (ահս Ռոնան, ibid. Կր. 16, համեմատել անդ Կր. 41—44):

Եթ և յորոյ ի շնորհս կայ ցարդ և կը շնչե» 1): Բացի քրիստոնէութեան ընձեռնում այս միութիւնից, յատուկ ուշագրութեան արժանի է հայ ազգային եկեղեցու զերը ազգային կուլտուրայի մշակման և առհասարակ ազգութեան պահպանման խնդրում։ Ինչպէս որ առհասարակ ամբողջ միջնազգարում կուլտուրայի կրողը եղել է հոգեւոր դասը, այնպէս էլ մեզ մօտ հայ հոգեւորականութիւնը եղել է բարձր կուլտուրայի ստեղծողը, իսկ մենք առաջինք որ ազգութիւնը հէնց կուլտուրական ընդհանրութեան ուրոյն ձեւ է. Բացի այդ, շնորհիւ այն հանգամանքի, որ մենք մեր ազգային քաղաքական անկախութիւնը վաղուց է որ կորցրել ենք և ուրեմն աղջակին միութեան խոչոր ազգայից — քաղաքական գործոնից — զրկուել ենք, հայ ազգային եկեղեցական կազմակերպութիւնը, իրը կուլտուրապէս ամենաարձր խուը. մեզ մօտ վերցրել է և ազգութեան պահպանման ֆունկցիաներ Այսակող զեռ, ասում է Լազարեւսկին, հասարակութեան ստորին խաւերի մօտ շազգայնութիւնը համարեա թէ ձուլում է կրօնի հետ և նրա հետ կազմում է ամենաարժեքալոր բանը այն բոլոր հոգեկան բարիքներից որոնց նա առհասարակ տիրում է 2):

Ի հարկէ ներկայումս, իրը կուլտուրան աշխարհականացել է, ընական է որ կրօնական ատրը, յատկապէս հոգեպէս զարգացած բարձր խաւերի համար, չի կարող այն ազգեցութիւնն ունենալ ինչ միջնազգարում։ Մենք շատ խորը զիտակցում ենք թէ հայութեան այն հատուածները, որոնք ազգային եկեղեցու հետ կապուած չեն, ինչ խոչոր զեր են խաղացել հայութեան կուլտուրական ստեղծագործութեան մէջ. ապացոյց զրան վենակի և Վիեննայի Միտթարեան միաբանութեանց պատկառելի զերը մեր ազգային մշակոյթի զարդարման համար։ Ընթերցողը թող իիէ այն խանգավառ օրերը, երբ սահմանագրական կեանքի ստեղծմամբ, ասմկահայը իւր մեղ-

1) Ա. Մ. Գարագաչեան, — «Բննական պատմութիւն հայոց», Կր. 268.

2) Տես ի. ի. Լազարեւսկի, — «Աւագնումիս», 1906, Կր. 25, ահս նակ Կր. 23.

բամիսն էր ապրում և երբ հայութեան բալրը կրօնական գաւա-
նանքները ձգում էին միասին համագործակցել իրենց ապարախտ
հայրենիքի վերաշնման զործում։ Մեզ համար նոյնիսկ այժմ ապա-
րախտ է թւում «Մեզուի այն կարծիքը — հակառակ ռՄշակչի ոթէ
հայ ազգի զոյութեան յատկանիշը կրօնն է, եկեղեցին է» 1)։ Բայց
մեր այս հայեացքների փոփոխութիւնը առաջացել է միայն նրանից,
որ այժմ այլ կուլտուրական արժեքներ են հանդիս եկել, որոնք
շատ աւելի զօրել են և աւելի նշանակութիւն ունեն այժմ մեր
ազգութեան պահպանման համար, քան երբեմնի կրօնականը, Բայց
այս հանգամանքը մեզ ամենիւն չպիտի կարծել տայ, թէ անցեա-
լում եւս իրական ֆակտորները ազգային կեանքի և համախմբման
բոլորովին նոյնն են եղել, ինչ այսօր։ Այս բոլորից միայն հատե-
ռում է, որ կրօնը ազգութեան գաղափարի պարունակի անհրաժեշտ
տարրը չէ, բայց դա ամենիւն չի նշանակում, թէ այս առևել
ազգութեան կազմակերպութեան պրօցեսում պատմական իրականու-
թեան մէջ, առևել եկեղեցական կազմակերպութիւնը ոչ մի իրա-
կան նշանակութիւն չի ունեցել։ Առասարակ ազգութեան ծագման,
նրա զործոնների ազգեցութեան, որանց միմեանց եւս ունեցած փոխ
յարաբերութեան խնդիրները միայն պատմագիտութեան մէջ իրենց
իսկական լուսաբանութիւնը կարող են գտնել, որովհետեւ միայն
պատմագիտութիւնն է, որ իւր զբաղման նիւթն ունի մարդկային
հասարակութեանց ծագման և զարգացման պրօցեսը իւր ամբողջու-
թեամբ վեցցած, մինչդեռ միւս գիտութիւնները այդ զարգացման
պրօցեսի որոշ կողմերը միայն իրենց ուսումնակրութեան օբյեկտ
են զարձնում։ Հասկանալի է թէ ուրեմն ինչո՞ւ պիտի պատմագի-
տութիւնը լինի ազգութեան մասին եղած թէորիաների ամուր պատ-
մանդանը և նրանց իրական արժեքի չափանիշը։

1) Հ. Առաքելեանց, — «Ազգ ոյնութիւնը և նրա պրինցիպ-
ները», 1883, Թիֆլիս, եր. 5.

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՍՏԵՂՆՄԱՆ ՄԵջ

Ազգն ու ազգային գիտակցութիւնը կարող են ուսումնակրու-
թեան առարկայ լինել զանազան տեսակէ առներից, կարելի է օրինակ
ուսումնամասիրել, թէ ինչ բովանդակութիւն ունի ազգի զարգացմանը և
թէ ինչ է ազգային գիտակցութեան կութիւնը։ Կարելի է նման
հետազոտել, թէ զանազան ազգերի մօտ ազգութիւնն ու նրա զի-
տակցութեան ստեղծուիլը ինչպիսի ուրոյն զործոնների ազգեցութեան
տակ են զոյացել։ Այս վերջին տիպի ուսումնամասիրութիւնը անխօ-
սակելիօրէն չօշափում է այն խնդիրը, թէ առհասարակ ինչ զործոն-
ներ պատմութեան մէջ ազգեցութիւն ունեն, որովհետեւ ազգու-
թիւնը ինքը պատմական իրականութեան մէջ առաջացած կուլտու-
րական ընդհանրութեան մի ձեւ է։ Մի պատմաբանի համար, որը
ցանկանում է բացատրել ազգային գիտակցութեան ծագումը, առաջ-
նակարգ կարեւորութիւն է ներկայացնում այն հարցը, թէ նա առ-
ևլալ ազգի կամ առհասարակ ազգերի կեանքը մէջ գո-
յութիւն ունեցող սալմից է զարգացնում, ուրիշ խօսքով՝ ասած,
ազգային կեանքին իմմանենտ զարգացում է վերագրում, թէ զա-
նազան արտաքին մօմէնտներ, օրինակ, բազմապիսի ազգեցութիւն-
ներ, որ մի ազգ միւսի վրայ ունենում է, ազգերի մէջ եղած պա-
տերազմները, նոյնպէս առևել ազգի կեանքը մի մասն են կազմում
և այնպէս անքակտելի կերպով կապուած են միւս զործոնների հետ,

որ սրանցից մէկի բարակայութիւնը արդէն զգալապէս վնասում է երեւոյթների ըմբռնման։ Հասկանալի է, որ այստեղ արդէն մի առական պատմական պրօբլեմ է առաջ դալիս։ թէ եթէ արտաքին աղքցութիւնները, պատերազմները, պատահական դէպքերը մի ազգի թերքին կեանքի, ինչպէս ուրեմն նաև նրա ազգային գիտակցութեան ստեղծման վրայ ազգեցութիւն են ունենում, ապա ուրեմն եղական փառերը (օրինակ պատերազմները) իրենց ունեցած ազգեցութեան տեսակէտից պատմական կարեւոր զործոններ են։ Մինչդեռ եթէ ազգային կեանքը իր մի խմաննենտ զարգացում ունեցող մի երեւոյթ նկատենք, որը իւր սաղմային վիճակից անէրաժեշտորէն ձգում է, գարերի ընթացքում, կատարելազործութեան, ապա նրա ըոլոր արտաքին և չնախատեսնուած պարագաները իրը անկարեւոր եանգամտներ հանդէս կը զան և միմիայն այդ ազգի վիճակների և կուլտուրական կոռուցւածքների ներքին պրօցեսը իրը պատմութեան առարկայ կը դիտուն։ Այս հէնց այս զուտ տեսական խնդրի տեսակէտից միայն և ոչ թէ փառական կողմից, մենք կը ցանկայինք ասա ազգային դիտակցութեան ծագումը իւր պատմական պրօցեսում դիտել և ուշագրութեան առնել, թէ այդտեղ կարեւոր ազգակը, պատմական եղական դէպքերը, թէ ընդհանուր վիճակներն ու նրանց զարգացումն են։ Այստեղ ես ցանկանում եմ ինձ մօտիկից ծանօթ զերմանական ազգային գիտակցութեան ստեղծման խնդրում վերոյիշեալ տեսական խնդիրը պաշտպանել։ Մեղ հայերիս համար վերին աստիճանի ուսանելի է խօրամուխ լինել, թէ արդի եւրոպական առաջաւոր ազգերն ի՞նչպէս են նայում իրենց ազգային գիտակցութեան ստեղծման ու զարգացման վրայ և ապա համապատասխան կերպով կարելի է ոռումնաբերել մեր ուրոյն ազգային գիտակցութեան փուլերը, որոնք այնքան կարեւոր են մեր ինքնանակութեան համար։

19րդ դարու ամբողջ զերմանական պատմագիտութեան՝ մէջ, անշուշտ իւր խոչոր ազգեցութեան տեսակէտից, իրեւ աիրապետող դէմք է հանդէս դալիս լ. Ֆ. Ռանքէն, որից անհամար զրգիոններ են հաղորդուել նոր զարու պատմաբաններին։ Սրան ըոլորովին համապատասխան հանդիս էկաւ զարու վերջերին մի այլ ականաւոր զերմական պատմաբան, կար լամպրեխար, որն օժտուած համայնա-

պարփակ իմացութեամբ, իւր զերմանական պատմութեան մէջ, ի միջի այլ խնդիրների, նաև զերմանական ազգային գիտակցութեան ստեղծման խնդրում միանգամայն ուրոյն ճանապարհ բաց արաւ։ Այս երկու հակառակ տեսակէտների պարզաբանութիւնը, խնդիրը տարբեր կողմերից լուսաբանելով, իւր իսկական հունի մէջ կը դնի։

Հատ Ռանքէն, մի ազգի կեանքը ինչպէս ներքին, նոյնպէս նաև արտաքին պայմաններից է ծագած։ Ոչ մի ազգ իւր ուրոյն պատմութիւնը չունի, չնայած իւրաքանչիւր ազգ իւր ուրոյն քարակտերիստիկ ուղղութեամբ է առաջ ընթանում, ինչքան գա՞ առանց կրօնով բաժանուած լինելու։ հնարաւոր է 1)։ Մի այլ տեղ Ռանքէն այսպէս է արտայաւում այս խնդրի վերաբերմաբ. ազգերը ոչ մի այլ կապակցութեան մէջ չեն կարող նկատի առնուել, բայց եթէ ինչքան նրանք, մէկը միւսի վրայ ազդելով, միմեանց յետեւից երեւան են զալիս և միմեանց հետ մի կենդանի ամբողջութիւն կազմում (2)։ Հատ այս տեսակէտի, զանազան ազգերի պատմութեանց հաւաքածուն չի կարող համաշխարհային պատմութիւն կազմել։ Այս ձեւով վարուելով, մենք իրերի կապակցութիւնը աչքից խուսափել կը տանք։

Հէնց համաշխարհային պատմական գիտութեան նպատակն է այս կապակցութիւնն իմանալ, խոշոր իրադրութեանց ընթացքը, որ բոլոր ազգերին միացնումէ և բոլորին իշխում և ապա ցուցալրել (3)։ Սակայն ընդունելով հանդերձ, որ ազգերի փոխադարձ ազգեցութիւնը մի անհրաժեշտ հանդամանք է իւրաքանչիւր ազգի ներքին կեանքի ըմբռնման խնդրում, քանի որ առանց զրան շատ երեսոյթներ անբացարենի կը մնային։ Ռանքէն միմիայն այդ ազգերի ընդհանրական յարաբերութեանց վրայ չի ուղում կանգնել, այլ նա ցանկանում է նոյնպէս ազգային ներքին կեանքն ու գրա զարգացումը ի նկատի առնել, ինչպէս նաև նրա կրած անխուսափելի

1) Տես՝ Ranke. Weltgeschichte 8. teil. եր. 415.

2) Ranke. Weltgeschichte 1. teil. եր. VIII.

3) Ranke. ibid. եր. VII.

համաշխարհային պետութիւններ, որոնք անդադար միմեանց հետ պայքարում են տիրապետութեան համար 1):

ազգեցութիւնները, քանի որ ոչ մի ազգ մեկուսացած չէ ապրում այս աշխարհում: «Համաշխարհային պատմութիւնը ֆանտազիաների և philosophismenի կը փոխուի, եթէ նա ազգային պատմութեան ամուր հողից անջատուել կամենայ, բայց նոյնպէս նա չի կարող միայն այս հողի վրայ կանգնած մնալ» 2):

Այս հարցը, թէ իւրաքանչիւր ազգ իւր սահմազործութեանց մէջ մի ուրայն և անկախ ամբողջութիւն է կազմում, ուրիշ խօսքով ասած, թէ այդ իսկ ազգի ներքին կեանքը մի յատուկ ձուլուածք է ներկայացնում, բաւականին զբաղեցրել է Ռանքէին: Նա Հռոմ եղած ժամանակ (1830 թուին) իւր եղբօր զրած մի նամակում նկատում է, որ 15րդ դարուց սկսած մօղերն զեղարուեատի վերաբերեալ նա այն եղբակացութեան է եկել, որ նրա ընթացքը և զարգացումը պօէզիային և մնացեալ զրականութեան լիակատար կերպով համապատասխանում է, այնպէս որ, երբ յաջողուի կարեւոր կերպարանափոխութիւնները հաստատ դիտողութեամբ ըմբռնել, մարդ ազգի ներքին զոյութեան պատմութեան կը մօտենայ, որի համաւորութեան մարդ հազիւ հաւատար Բայց և այնպէս մարդ մի կէտի է հանդիպում, ուր զարգացումը այլեւս ազգային չէ, այլ բուրովին համաշխարհային 3):

Սահմազործական մօմէնտը մի աղջի կուտուրայի շրջանում, Ռանքէի տնօսակէտով, մի առոնճնացած ձգտում չէ, այլ սա պօլիտիկայի և պատերազմի ու բոլոր դէպքերի հետ, որոնք պատմութեան փաստերն են կազմում, անբաժանելի կերպով կապուած է 3), Այս պատճառով ել պատմական զարգացումը ռմիմիայն կուլտուրական ծգումնց վրայ չէ հիմնում, այլ նա բխում է նաև բոլոր վին այլ տեսակի իմպուլսներից, յատկապէս ազգերի անտագոնիզմից, որոնք հողի տիրապետութեան և առաջնութեան համար միմեանց հետ կռւում են: Այս կոտր մէջ, որը ամեն ժամանակներում նոյն պէս կուլտուրայի շրջանն է պարփակում, կազմւում են պատմական

համաշխարհային պետութիւններ, որոնք անդադար միմեանց հետ պայքարում են տիրապետութեան համար 1):

Հստ այս խորհրդառութեանց, որոնք Ռանքէի պատմական աշխարհայեցքի համար վեռական նշանակութիւն ունին, ազգերի պատմութիւնը հանգէս է զալիս իրը ամբողջական արդիւնք ինչպէս իւրաքանչիւր ազգի մէջ անդի ունեցող ուրոյն զարգաց հան, նոյն պէս նաև այն ազգեցութեան, որ նա խորր Պրատացքին իրաշար ձութեանց ընթացքից ստանում է: Այս իրադարձութիւններով եւս պայմանաւորում են կուլտուրական մղումները քնչպէս իրենց ծագման, նոյնպէս նաև նրանց զարգացման մէջ:

Մենք արդէն մեր նախընթաց յօդւածով («Ազգութեան էռութիւնն ու զարգացմարը»), — երբ ազգութիւնը իւր բովանդակութեան կողմից իրերն այդպիսին ենք ի նկատի առել, — աշխատել ենք ցոյց տալ, որ ըստ Ռանքէի, ազգութիւնը պատմութեան արդասիք է, զրա մէջ անդի ունեցող իւթեարձութեանց արդիւնք և ո՛չ ամենիւնին ընկանանից առաջ մի բան: Եւ շնորհիւ այն հանգամանքի: Որ Ռանքէն պատմութեան մէջ պետութեան և սրա ուժերի ծաւալման իրը հասարակական կեանքի կերպաւորման ամեն: Խոշոր ազգակի է նայում, ապա պետութիւնը ազգութեանց ծագման խնդրում որոշակի զեր է խաղում: «Ազգութեանց մէջ երեւան է զալիս մարդկային պատմութիւնը: Գոյութիւն ունի մի պատմական կեանք, որը յառաջպիմելով, ժողովրդների մի շըջանից միւսին է դիմում: Հինգ տարրեր ժողովուրկների սիստեմների լուսի մէջ է ընդհանուր պատմութիւնը ծագած, ազգութիւններն իրենց զիտակցութեանն են ե. կած» 2): Վերոցիշեալ յօդւածի մէջ մէնք շնորհ ենք նաև կարլոս Մեծի խոշոր նշանակութիւնը զերմանական ազգի տարրեր ցեղերի ազգային միութեան բերելու գործում:

Ընդհանուր ազգային պատերազմական ծեռնարկութիւնները նըսպաստել են, ըստ Ռանքէի, որ զերմանական ժողովրդի մէջ, որը հնուց ծագում առած կրօնական զաւանութեանց պատճառով կա-

1) Ranke. *Veltgeschichte*. I. teil. եր. VIII.

2) Ranke. *Samtlische Werke*. 53/54. Bd. համակ., 74:

3) Ranke. *Veltgeschichte*. 8 teil. եր. 4:

տաղի երկպառակութեան մէջ էր, ազգային միութեան գիտակցութիւնը կազմուի: Այս տեսակետից Ռանքին մեծ արժեք է տալիս Նապօլէօնի ժամանակ տեղի ունեցած ազատազրական պայքարներին, Այս պայքարների մէջ ազգութիւնը ինքն իւր գիտակցութեանն է հասել. այդ պայքարներով է, որ կրօնական տարբերութիւնները յիշ են մղուել: Ոչ միայն կրօնական տարբերութիւնները, այլև պատմականօրէն առաջացած Գերմանիոյ զանազան երկրամասերը, իրենց կեանքի ուրայն եղանակներով, խառնուել են և միացել: Այդ հանգամանքով, ասում է Ռանքին, ազգութեան գաղափարը, որն այդ երկուսից ել - այսինքն կրօնական տարբերութիւններից և ցեղային առանձնայտակութիւններից - վեր է կանգնած, զօրեղ թափ է ստացել:

Ստկայն արմատն այն ոյժի, որ այսպիսի համայն ազգային պատերազմական գործողութեանց մէջ է արտայայտում և որը զգացակէս նպաստում է ազգային գիտակցութեան բարձրացման - զբանում է ազգային զործունէութեան մի այլ բնագաւառում՝ կուլտուրայի տարբեր շրջաններում: Դրանով մենք համարում ենք Ռանքէի պատմանայեցողութեան մի կարեւոր կէտին, — ազդի կեանքի տարբեր կողմերի միացման, որոնք միմէնանց վրայ ազգում են և մի կոնկրէտ երեւոյթում, ներկայ դէպքում ազգային գիտակցութեան մէջ, մարմանում են: Այս երեւոյթն ըմբռնելու համար մենք կարող ենք գրա բազարիչ մասերը ապրալուծել, բայց նախ քան մեր ապրումի նիւթ գառնալը, մենք պիտի նրա բոլոր առաջ բերող ուժերը ի նկատի առնենք:

Այն զործօնների մէջ, որոնք ազդի ամբողջ կեանքը որոշում են, քաղաքականը, Ռանքէի մօտ, որպէս բոլոր միւսները պայմանաւորող և նրանց վրայ ազգով, առաջին տեղն է բռնում: Ռակայն այս հանգամանքը չի խանգարում, որ այս ամենազօրեղ մօմէնտը եւս ազգային կուլտուրայի այլ բնագաւառներից սնունդ ստանայ: Այսպէս Ռանքէն գերմանական կլոսիկ գրականութեան վերաբեր մամբ այն միտքն է արտայայտում, որ նրա բովանդակութիւնը և նրա առաջարած իդեալները առաջ նպաստել են, որ գերմանիոյ համայն գիտակցութիւնը, մէկ ընդհանուր հոգեկան կեանք կազմուի, այնպէս որ նրանք յիտազային ի վիճակի են եղել մեծա-

գոյն համաշխարհային իրադարձութեանց մէջ (աստ Ռանքէն ազատագրական պատերազմներն է ակնարկում ընդգէմ Նապօլէօնի) ազգային ուժով, անկախ կերպով ձևռնամուխ լինել 1): Ուրեմն ըստ այս տեսակէտի, գրականութիւնը նկատում է նախ որպէս մի կարեւոր օյժ, որն, ընդհանուր ազգային պատերազմական գործողութեանց հետ, գերմանական ազգային գիտակցութեան առաջացման նպաստել է. ապա մեծ ազգային ազգատամարտը (ընդգէմ Նապօլէօնեան բանակալական ոէժիմի) նախապատրաստուած և առգրուած էր հէնց այդ գրականութեամբ: Բազէլի խաղաղութիւնից յետոյ, հոգեկան կեանքի բարգաւաճման առթիւ, որ ամբողջ Գերմանիայում տեղի ունէր, Ռանքին ասում է, թէ գրականութիւնը, որն այն ժամանակ համարեղ ներկայացուցիչներ ունէր, ազդի ամբողջական կեանքի համար մի անհաւասար ազգեցութիւն ձեռք բերեց: Այդ գրականութեան մէջ գրականական ոգին իւր արտայայտութիւնը զաւաւ, (նա եղաւ մեր միութեան կարեւոր մօմէնտներից մէկը) 2): Յատկապէս այս զրականութիւնը այն անդինահատելի յատկութիւնն ունէր, որ նա այլիս ազդի մի մասով չի անմանափակուց: այլ նա (այսինքն այդ ազգը) ամբողջապէս ընդգրկեց, այդ ազդի միութիւնը իսկապէս ամենից առաջ գիտակցել առևեց 3):

Ասու պիտի յատկապէս չեցտել, որ ըստ Ռանքէի, գրականութիւնը, ինչպէս և առհասարակ կուլտուրան, որն ազգային միութեան գիտակցութեան նպաստել է, ամենիւին իմմանենու հանապարհով չէ զարգանում, այլ ինչպէս ստեղծման, նոյնպէս եւ զարգաման մէջ, յատկապէս քաղաքական մօմէնտներով է ուղեկցում և որոշում: Այս անսակէտը պարզ երեւում է Ռանքէի մի նկատութիւնն մէջ վերաբերեալ Ֆրիդրիխ Մեծի: Ալյաքանը հաստատ է, որ այն ինքնազգացման, որը ուղեկցում էր հոգիների այս թոխչքը, ոչ մի այլ երեւոյթ այնպէս նպաստեց, ինչպէս Ֆրիդրիխ Պի կեանքն ու համբաւը Անհրաժեշտ է, որ մի ազդ անկախ զգայ, եթէ

1) Ranke. S. Verke. Bd. 31/32. եր. 89—90.

2) Ranke. S. Verke. Bd. 49/50. եր. 160.

3) Ranke. Abhandlungen und Versiche. եր. 27.

նա ազատ զարգանալ է կամենում։ Եւ երբեք ոչ մի զրականութիւն
չի ծաղկել առանց պատմութեան մեծ մօմէնտներով նախապատրաս-
տուած լինելու 1)։

Ուրեմն կարող ենք ասել, որ ազգութիւնը Ռունքի մօտ չի
հանդէս զալիս իրեւ բնականից աճող մի օրգանիզմ, որը ապազայ
զարգացման սաղմբ իւր մէջ պարփակում է, այլ նա ինքը իւր ծա-
զումը պարտական է պատմական իրականութեան մէջ տեղի ունե-
ցող իրագործութեանց, որոնք թէեւ սկզբից աննախատեսնուած են,
բայց իրենց նշանակութեան տեսակէտից ազգի և ազգային զիտակ-
ցութեան ստեղծման համար որոշող են հանդէս զալիս։ Ազգն ասո
դիւում է որպէս պատմութեան հոսանքուած ստեղծուած մի կա-
ռուցուածք։ Կարեւոր է նկատել, որ Ռունքի հայեացները, թէ-
պէտեւ այստեղ վերաբերում են զերմանական ազգութեանչ ստկայն
դոքա ունին նշանակութիւն առնաւարակ բոլոր եւրոպտկան ազգերի
վերաբերեալ։ Այս զործոնների մէջ, որոնք ներկայումս զոյտ թիւն
ունեցող եւրոպական ազգերի ստեղծման նպաստնել են, ԱՌիւնքէն քա-
ղաքականին ամենամեծ նշանակութիւն է տալիս։ Ազգային զիտակ-
ցութեան համար, քաղաքականի հետ միասին նշանակութիւն ունեն
նաեւ կուլտուրական զործոնները (նեղ իմաստով վերցրած), որոնք
առաջինների վրայ ազգում են և իրենց ներթիւն նրանցից ազգեցու-
թիւն կրում։ Մի յատուկ խիստ բաժանումն քաղաքական և կուլ-
տուրական շրջանների, որոնք ազգային զիտակցութեան համար կա-
րեւորութիւն ունեն, այս աշխարհայեացքի կողմից չի ընդունում։
Այդ երկու զործոնները եւս ազգի համայն կեանքի մէջն են զրտ-
նում։

Յայտնի է, որ Ռունքէն ունեցել է 19րդ դարու գերմանական
պատմագիտական զրականութեան մէջ մի շարք հետեւողներ և այժմ
էլ ունի, որոնք իրենց աշխարհայեացքի տեսակէտից, մի կողմ թո-
ղած երկրորդական կողմները, չիմեական զծերով նոյնանում են
Ռունքի պատմանայեցողութեան։ Աստ մեր նպատակը չէ այդ պատ-
մարաններից իւրաքանչիւրի աշխարհայեացքը բնորոշել, այլ մեր
այստեղ արծարծած խնդրի համար բաւական է շեշտել, որ այդ

1) Ranke. ibid. եր. 28.

պատմաբանների համար, որոնք քաղաքական պատմագիրներ են
կոչում, այն պրօցեսը, որ ազգութեան և ազգային զիտակցութեան
սանդման է առնում, ո՛չ մի անընդհատ գիծ չէ ցուցագրում, այլ
պատակականութիւնները (էվենուուլֆիտեա), տարբեր երեւոյթների
խաչաձնուումը, այստեղ, արդինքի տեսակէտից, յաճախ գճական
նշանակութիւն են ունենուած։ Մի անգամ պատահած գէպքերի վե-
րաբերեալ այս պատմաբանները չեն փնտուում նոցա յետեւ զտնուած
ինչ որ մի պրօցես, որի իրականացման համար միայն, ուրեմն ի-
րենց անհատականութիւնից զրկուած, յիշուած փաստերը հանդէս
գային, այլ այս փաստերը ազգային կեանքի զոյտացման և զարգաց-
ման վճռական զործոններն են։ Այս պատահառով էլ մէկ անգամ պա-
տահած եղական գէպքերը, իրեւ այդպիսիք, իրենց ամբողջ ման-
րտմանութեամբ, ուսումնաբուութեան նիւթ են գտանում այս
պատմաբանների մօտ 1)։ Ոչ ոք գերմանական պատմագրութեան
մէջ, այդ եղական փաստերի նկարագրման մէջ, չի հանդէս ըերել
այնպիսի կենդանութիւնն և զունեղութիւնն, ինչպէս հենց ինքը Ռուն-
քէն։ Բաւական է միայն մի անգամ կարդալ նրա պատմականու-
թեան պատմութիւնը, համոզուելու համար, թէ ինչպէս պատմա-
կան անցեալը, իւր բոլոր կենսաթրթիւն հարազատութեամբ և ման-
րտմանութեամբ, կորոզ է վերակենդանանալ վարպետ ստեղծագոր-
ծողի գրչի միջոցաւ։ Այս ձեւով հասկացուած պատմական կեան-
քում, բոլոր կարեւոր զործոնները՝ պիտական կառուցուածքը իւր
քաղաքական զործողութիւններով, գրականութիւննը, լեզուն, ին-
դուստրիան, որպէս կուլտուրական գրաւումներ են ստեղծւում, ու-
րոնք միմեանց վրայ փոխարձարար ազգելով, առաջ են բերում
համայն ազգային զիտակցութիւնն։

Որպէսզի մենք կարողանանք ազգութիւն կազմող ուժերի ու-
1) Բատ ինքնան հասկանալի է, որ քաղաքական իրագործու-
թիւնները իրեւ մի անգամ պատահած գէպքեր, եղական տիպի
փաստերի շարքին պիտի զասաւեն և իրեւ այդպիսին նկարագրուեն։
Եւ ուրեմն ամենեւին պատահական մի բան չէ, որ քաղաքական
պատմաբանները եղական գէպքերի նկարագրման են նուիրուած իրեւ
իրենց ուսումնաբուութեան կենտրոնի։

ըսոյն նշանակութիւնը պարզէլ, պիտի նկատել, որ գործօնների զուգահեռականութիւն, այն իմաստով, որ նրանք հաւասար ընթացք ունենային, աստ զոյութիւն չունի և ապա այս գործօնները հաւասարաչափ աղջեցութիւն չունեն ազգային գիտակցութեան համար, այլ քաղաքականը, ինչպէս վերեւում նկատեցինք, ամենաընդարձակն ու ամենին է, որովհեաւ նրանով, նրա բախտի վերելքով ու պնկումով է պայմանաւորւում միւս բոլոր կուլտուրական կառուցուածքների վիճակը։ Այս հանգամանքը, ի հարկէ չի խանգարում, որ այդ ամենաուժեղ գործօնը միւսներից աղջեցութիւն կրի։ Նոյնիսկ առանձին ազգային կեանքը այսուհետ չի դիտում իր մեկուսացած, այլ նա միշտ շփման մէջ է այլ ազգերի հետ, որոնց փոխարձագեցութիւնը իւրաքանչիւր ազգի մէջ այնպիսի մնայուն արժէքներ է առաջ բերում, որոնք զուտ աղջայնորէն չէին կարող ստեղծուել։

II

Իւրեւ ռէտակցիա վերայիշեալ միակողմանի քաղաքական եզական դեպքերի, այլեւ եզակի անհատների, իւրեւ այդպիսիների, նկարագրման նույնուած պատմազրութեան, Գերմանիայում, 19րդ դարու վերջիրում զօրեղ կերպով հանդէս եկաւ է. Բէրնհայմը (1889 թուին) իւր *Lehrbuch der historischen Methode* դրաով, ապա Կ. Լամպրեիսը իւր զերմանական պատմութեամբ ("Dürtsche Geschichte", 1891ից լոյս առանձի սկսած), որոնք իւրմ պաշտպան էին պատմազիտութեան բարձակութեան լայնացման և ազգի ամբողջ կուլտուրական կեանքի, որա բոլոր կողմերով, ընդգրկման։ Այսուղ կարեւոր է չետեղ, որ Բէրնհայմ ու Կ. Լամպրեիսը ջատազով լինելով հանդերձ կուլտուրայի պատմութեան, առաջինը նայում էր դրան իսկապէս իւրեւ անհրաժեշտ լրացումն մինչեւ այդ զոյսեթիւն ունեցող քաղաքական պատմազրութեան և այս վերջինի դերը սկզբունքորէն չէր ժխտում։ Այնպէս Բէրնհայմը պնդում է, որ կուլտուրական կառուցուածքների, հասարակական վիճակների նկարագրութիւնը ամենեւին չպիտի

նսեմացնէ եզական փաստերի անհատական նշանակութիւնը, որոնց բացարութեան համար իսկապէս մենք ջանում ենք զանել պատմական ընդհանուր օրէնքներ է Կ. Լամպրեիսը սակայն այս կէտում բոլորովին ուրոյն տեղ է բռնում գերմանական պատմազիտութեան, նոյնիսկ կուլտուրայի պատմաբանների մէջ։

Կ. Լամպրեիսը աշխարհայեացքի համար վճռական նշանակութիւն ունի բիօգենետիկ սկզբունքը պատմական զարգացման համար, ըստ որի անհատութիւն զարգացման ընթացքում ժողովուրդների զիւաւոր զարգացման աստիճանները կրկնում են և ընդհակառակը։ Մարդկային ազգերն ուրեմն իրենց զարգացման մէջ ունենում են նոյն մանկութիւնը, երիտասարդութիւնը, այրականութիւնը, ծերութիւնը, ինչ որ մի անհատ չասկանալի է, որ այս բիօգենետիկ սկզբունքը կամպրեխտի պատմական տեսութեան մի բոլորովին նոր բնոյթ է արւում։ Ինչպէս որ իւրաքանչիւր անհատի մօտ մանկութեան շրջանում, բոլոր ապրումները մանկական գունաւորում են ստանում և մի ամբողջութիւն կազմում, այնպէս էլ ուրեմն ազգի զարգացման իւրաքանչիւր տաւեալ շրջանում, նըր բոլոր կուլտուրական ստեղծագործութիւնները (Կրօն, գեղարուես, զիտութիւն և այլն), մի միութիւն են կազմում և միեւնոյն ոգով են տագորուած։ Այնուհեաւ, ինչպէս որ իւրաքանչիւր անհատ պատմանկութիւնից երիտասարդութեան է անցնում անհրաժեշտաբար և ներքին անձան չնորհիւ և ո՛չ արտաքին ազգականների, ապա ուրեմն զրա նման էլ հասարակութեան կեանքը զարգանում է ներքին ոյժի ազգեցութեան տակ և ո՛չ թէ արտաքին պատմական ազգականների պատճառով։ Չասկանալի է, որ այս աշխարհայեացքով բոլոր պատմական պատմականները, եզակի գէպգերը, արտաքին ազգեցութիւնները կարեւոր նշանակութիւնից զրկվում են, որովհետեւ զարգացման ներքին պրօցեսը հասարակութեան սազմից անցնում է նըր ապագայ կատարելազործումը։ Բնականորէն այս պատմական ըմբոնումով կարեւոր տեղ պիտի զրաւեն միայն հասարակական կուլտուրական կառուցուածքների և վիճակների ուսումնաբիրութիւնն ու զրանց զարգացումը, որոնք և իրենց ամբողջութեամբ իւրաքանչիւր պատմական էպօխայում ցուցագրում են հասարակութեան կամ ազգի համական էպօխայում

սունութեան որոշ աստիճանը :

Հետեւնք այժմ կ. Լամպրեխտի մօտ զերմանական աղջային գիտակցութեան զարգացման դիմուու համար, թէ ի՞նչպիսի միակողմանիութեան կարող է տանել զերուիշիալ թէորիան, Պիտի ասել, որ թէպէտ Լամպրեխտի զերմանական պատմութեան մէջ, հասկանալի պատճառով, մենք միայն զերմանական աղջային գիտակցութեան զարգացման ենք խորածում լինում, սակայն ըստ Լամպրեխտի աշխարհացեացքի, այդպէս է զարգանում, ընդհանուր զծերով, առաջարարակ իւրաքանչիր ազգային զիտակցութիւն, եթէ միայն նունարմալ զարգացում ունի:

Պատճական կեանքի ուսումնասիրութեան համար Լամպրեխտը զերցնում է իր հիմունք աղջութիւնը, որովհետև ազգը «ամենահամառոր մարդկային հասարակութիւնն է»: Մի զիտական յառաջադիմութիւն ձեռք բերելու համար պիտի հետազոտուեն — ըստ Լամպրեխտի — իրենց նոգեկան կեանքի ընթացքում եզակի հասարակութիւններ, որոնք յատուկ նշանակութիւն և համեմատաբար նորմալ զարգացում ունեն ու նրանց վերաբերեալ աւանդուած նիւթն է մատչելի է: Եթի այս պահանջն է որուում, ապա մարդ ամենից առաջ այն մտքին է զարիս, թէ պրօբլեմը ազգային կո. լուսւրական զարգացմներով սահմանափակվել, որովհետև անկառած աղջը մարդկային մեծ համայնքներից ամենակարեւորն է, որն այս կապակցութեան մէջ նկատի է առնուած (1):

Ազգային պատճական կեանքը ըստ Լամպրեխտի, ընթանում է զանգան կուլտուրական զարաշրջաններով (2), որոնցից իւրաքան-

1) Յետ K. Lamprecht. *Moderne Geschichtswissenschaft*. Friburg in. Bd. 1905, եր. 87—88. տես նաև *ibid.* եր. 11, ուր առուած է որուոր մարդկային համայնքներից կարեւորները՝ աղջները: Համեմատել անդ, եր. 103: Նման արտայատութիւններ տես կ. Լամպրեխտը «*Einführung in das historische Denken*», որքում, եր. 73 և 140, Leipzig, 1912.

2) Այդ զարաշրջանները կոչում են անիմիզմ, սիմվոլիզմ, տիպիզմ, կոնվենցիոնալիզմ, ինդիվիդուալիզմ և սուբյեկտիվիզմ:

չիւրը մի ամբողջութիւն է ներկայացնում և որը իւր ներքին է. և թիւնից իւր զայութեան իրաւունքն է ապացուցանում: Արտաքին ազգեցութիւնները (ուցեցիօն, որնէսան, զիօզմա, էնգօզմօն) կարող են միայն ազգել, պրօցեսը արագացնել, հասունացնել բայց երբեք որակապէս նոր բան ստեղծել չեն կարող: Եւ Լամպրեխտը համար վճռականն այն է, որ ազգի իմմանենու զարգացման ուժը կարող է, առանց արտաքին ազգեցութեան էապէս այն արգիւնքը ցուցազրել, ինչ որ նու ոյլ արտաքին ազգեցութեանց օգնութեամբ առաջացրել է: Օրինակ Շատուֆեան մամանակի համար նու առուած է. ոչեւտ չէ ասել, թէ ծաղկած Շատուֆեան ժամանակի հողեկան և հասարակական կեանքում ի՞նչ բան զերմանական հողից է աճած և ինչ ֆրանսական ազգեցութիւնից: Որովհետև ինչպէս բույր մեծ ուցեցիօնների ժամանակ է պատահում օտարից միայն զերցուց, ինչ որ հայրենի զարգացման անվրդով ապագայ ընթացքում հաւասար կամ նման ձեռզ կը բարզաւածեր (1): Գիրմանական կուլտուրայի համար հումանիզմի նշանակութիւնը կը կամպրեխտը հետեւալ կերպով է զնանատում և ազգը վերցրնց ների կրաօիկ կը թութիւնը: Ինչքան նու ինդիվիդուալիստական կուլտուրայի ձեռք բերելու և պահպանելու համար նեցւել կարող էր լինեաւ (2): Աստես կ. Լամպրեխտը յեւում է զերուիշեալ բիօգենետիկ օրների վրայ, որովհետև գրութ եկած հոգեկան ազգեցութիւնները, թէեւ իւրաքանչիւր անհատի համար մեծ նշանակութիւն ունեն, սակայն նըրանք ի վիճակի չեն այն հոգեկան մեխանիկան վերացնել: ըստ որի երիտասարդի հոգեկան կեանքին հետեւած է այդական հոգեկան կեանքը և այնուհետև ծերութիւն (3):

Կուլտուրական դարաշրջաններն առա ամենեւին պատահական:

1) K. Lamprecht. *Deutsche Geschichte* 3. Bd. եր. 199: Համեմատել անդ die Rezeption des römischen Rechts. 5. Bd. 1. abt. եր. 112.

2) K. Lamprecht. *Ibid.* 5. (1) Bd. եր. 214. տես Դաս. 5 (1) Bd. եր. 174—175.

3) K. Lamprecht. *Moderne Geschichtswissenschaft*. եր. 115.

օրէն անկապ կերպով չեն հետեւում միմեանց, այլ նրանք ընթառում են հոգեկան ոյժի մի շարունակական զօրեղացման և թուլացման գծով։ Իւրաքանչիւր դարաշրջանում գոյութիւն ունեցող հոգեկան կառուցուածքը կամ հոգեկան կենսակարգը 1) (seeliche Lebensordnung) ամենիւնք արդիւնք չէ դրսից որևէ կերպով շարժող սոցիալ-հոգեկան ոյժերի, այլ նա մի բան է, որ իւր մէջ զարդացման որոշ ոյժ է կրում, որն արտաքին ազգեցութեանց շնորհիւ կարող է արագացուել կամ յետ մզուել, երբեք սակայն իւր ներքին բնոյթի ազգեցութեան մէջ փոփոխութեանց չի կարող ենթարկութիւնը 2)։ Իւրաքանչիւր կուլտուրական դարաշրջանում գանուած զարդացման ոյժը զանազան զրգիւներով հասունութեան է բերում, որով եւ նոր հոգեկան կենսակարգը է ստեղծուեմ։ Այս տեսակէտից համեմատաբար անտարբեր մի բան է այն հանդամանքը, թէ ինչ առիթներով զրգիւներ են առաջանում, որովհետեւ դարաշրջանները կանոնաւոր կերպով միմեանց հետեւում են, միեւնոյն է թէ ի՞նչ տեսակի էին զրգիւները, որ նրանց առաջացնում են։ Թերեւս լաւագոյն պարագային այս զրգիւները թիթեւ գունաւորում տային այս կամ այն դարաշրջանին 3)։

Դրգիւները կարող են բոլորովին տարբեր առիթներից ծագել 4).

1) K. Lamprecht. անդ. եր. 62.

2) K. Lamprecht. անդ. եր. 96.

3) Տես K. Lamprecht. Einführung in das historische Denken. եր. 151. համեմատել անդ. 145—146.

4) Այսուղ զտնւում է Լամպրեխտի աշխարհայեացքի սկզբունքային տարբերութիւնը պատմական մատերիալիզմից։ Լամպրեխտի համար կարեւորը պրօցեսն է, որով դարաշրջանները ընթանում են, առանց ի նկատի ունենալու։ Թէ որպիսի առիթներով այդ դարաշրջանները երեւան են դալիս։ մինչդեռ պատմական մատերիալիզմի համար հէնց այդ միջոցը կարեւոր է։ Եթէ, օրինակ, ապացուցուի, որ պատմութեան ո՛չ բոլոր մղիչ ոյժերը տնտեսական բնոյթ ունեն (և ոչ իսկ վերջին հաշով), ապա սրանով անշուշտ տնտեսական պատ-

նոր կրօնական սիստեմների պատճառով առաջացած հսկայական յուղումներ, աշխարհի տարածական և ժամանակային հորիզոննի խիստ ընզարդակումը, նոյնիսկ զօրեղ պատերազմական դէպքերը երեւում են այդ նպատակի համար զոհացոցիչ, Գրգիւների մէջ անտեսական դէպքերը եւս ականաւոր զեր են խաղացել և խաղում են (տես Einführung in das hist. Denken. եր. 46):

Այս ամբողջ կառուցուածքը հիմնուած է ռոօցիալական հոգուած և անհատական հոգուած համեմատութեան վրայ, որովհետեւ վերջինս մի բեմ չէ, ուր ասոցիացիաներն ու պատկերացումները, զգացումներն ու ձգումները արագ անցնէին, այլ ամենից առաջ մի ես է։ Շնչ ոք մեղնից, ասում է Լամպրեխտը, արդիւնք չէ մեզ վրայ ազգող իրերի։ Իւրաքանչիւր ոք յատկնում է անձնաւորութիւն և բնուլորութիւն լինել։ Եւ ոչ մի բոյս, ոչ մի կենդանի, ոչ մի կենդանի էակ ընդհանրապէս չի կարող, միլիօնաւոր տարիների ընթացքում ունեցած իւր դարգացման մէջ, միայն արտաքին պատճառների ազգեցութեան շնորհիւ բացատրուել։ Նա ունի իւր բնածին զարգացման ձգում մը և իւր յատուկ գեղեցկութիւնը 1)։ Այսուղ է զարգացման ձգում մը և իւր յատուկ գեղեցկութիւնը 1)։ Այսուղ է

մահայեցողութեան էութեան հարուած կը հասցուի, որք բացառապէս, վերջին հաշով, անտեսական գործոնների մէջ հասարակութեանց գոյութիւնն ու զարգացումը պայմանաւորող ոյժ է տեսնում։ Լամպրեխտի աշխարհայեացքի համար սակայն վճռականը իմմանենք զարգացման ոյժն է, որը զանազան զրգիւների միջոցաւ հասունութեան է բերում։ Բայց որ Լամպրեխտը իւր զերմանական պատճութեան մէջ զրդիր առաջանող պատճառների մէջ տնտեսականին մեծ զեր է տալիս, որ աստ անտեսական դէպքերը ահազին ազգեցութիւն ունեն սոցիալական կեանքի կերպաւորման մէջ—դա ի հարկէ չէ հակասում մեր վերջիշեալ ասածին։ Սկզբունքուն դիսած, այսուղ անտեսական երեւոյթներն անպայման անհրաժշտութիւն չեն, որովհետեւ դարաշրջանները կանոնաւոր կերպով հետեւում են միմեանց, անկախ այն բանից, թէ ի՞նչ տեսակի զրգիւներով նրանք հանդէս են գալիս (Einführung in das historische Denken. եր. 151)։

1) K. Lamprecht. Moderne Gehsichtswissenschaft, եր. 96—97.

գտնուում, մեր կարծիքով, Համարեխտի պատմական ընդհանուր աշխարհայիացքի, ինչպէս նաև նրա ազգային գիտակցութեան վերաբերեալ ունեցած տեսութեան կենտրոնը:

Այս համեմատութիւնը, որ Համարեխտաը անհատի և հասարակական հոգու (Sozialseele) մէջ անում է, մեր կարծիքով, իւր վերջնական եղանակացութեան չէ հասցրած: Վերցնենք իրեւ օրինակ մի սովորական իրական մարդու, որը այրականութեան հասակումն է գտնուում: Նրա բնաւորութեան կազմակերպման համար, ինչպէս նաև իրապէս այժմ գոյութիւն ունի, անշուշտ այրական հասակը նըպաստել է: Նրա գործերը որոշ հասունութիւն են յայտնաբերում: Մենք ի վիճակի ենք նրա զարգացման ընթացքին հետեւել: Մենք գիտենք, որ նա այս կամ այն ուսուցչին է աշակերտել, որ նա իւր կեանքում այս կամ այն պատահարների է հանդիպել: Ուսուցիչը, պատահարները, որոնց նա հանդիպել է, ըստինքեան իւր անձնուուրութեան կողմից զիտած, պատահական երեւոյթներ են, որոնք սակայն նրա բնաւորութեան կազմակերպման և նրա հետազայ զորեն զութեանց համար գնաւական նշանակութիւն են ունեցել: Մենք կարող ենք հարց յարուցանել, թէ այս անձնուորութեան հասունացման համար ո՞ր մօմէնտները էտիան են, այրական հատակը, թէ պատահական, բայց նրա իրական զարգացման համար, գնաւական պատահարները, Այս հարցին կարող է միայն նրա կենուազրութիւնը պատախանել, այն է՝ նրա կազմակերպման պրօցեսի ամբողջական նկարագրութիւնը: Եւ աստ պիտի նկատել, որ գէպքերը իրադարձութիւնները, նրա հասակից ո՞չ պահաս նպաստել են նրա անձի կազմակերպման: Դիտողի կարողութիւնից է կեխուած, նրա իւրաքանչիւր զործում այս տարբերից իւրաքանչիւրի ազգեցութեան չափը որոշել և ըստ այնմ դրանց զնահատել: Եւ ուրիշն երբ մենք պատմութեան մէջ հանդէս եկած «ուղիւական հոգին» անհատի հետ համեմատել ենք ցանկանում, ապա մենք պիտի մարդու կենսագրութիւնը օգնութեան կանչնք, որովհետեւ միայն այս պարագային, մենք համեմատուող երկու օրթեկանները իրենց ամբողջական զարգացման ընթացքում հետեւել կարող ենք և նմանութիւնները վեր հանել:

Եւ ինչպէս իւրաքանչիւր անձի ուսումնասիրութեան գէպքում

ոչ միայն նրա հասակը, այլեւ նրան պատահած գէպքերը պիտի անպայման ի նկատի առնենք, ապա սոցիալական հոգու պատմութեան մէջ եւս նոյն կերպ պիտի վարուենք: Սակայն իսկական Համարեխտի համար մեր վերլիշած մօմէնտներից հասակը (որին համապատասխանում է պատմութեան մէջ դարաշրջանը) է պատմութեան վեռական զործոնը 1): Բոլոր միս մօմէնտները նրա գգերմանական պատմութեան մէջ տուեալ զարու շրջանի զոյութեան համար կարեւոր, բայց ոչ անխուսափելիօրէն անհրաժեշտ փաստեր են: Մեր այս տեսակէալ մենք տեսնում ենք ապացուցուած զերմանական ազգային զիտակցութեան զարգացման ընթացքում:

Բոլոր այն ուժերը (պատերազմական զործութիւններ, գրականական երկեր, տնտեսական դարձացում և այլն), որոնց մենք հանդիպում ենք բոլոր այլ զերմանական պատմաբանների մօտ, զոյութիւն ունեն և՛ւ Համարեխտի մօտ, սակայն բոլորովին այլ իմաստով: Բանքէին հետեւող զերմանական պատմաբանների մօտ այդ զործոնները, որոնք կանքի ապրեկը բնազաւառներից են ծնունդ տառնում, ազգի և ազգային զիտակցութեան ստեղծման համար անտառնում, ազգի և ազգային զիտակցութեան ստեղծման հրաժեշտ և վերջին փաստերն են և միմիայն նրանց մարմնացումը մի երեւոյթում առաջ է բերում ազգային զիտակցութիւնը: Համարեխտի համար սակայն, որովհետեւ նա պատմական զոյութեան բիթութիւններից մէկը (հասակը=դարաշրջանը) զիտաւոր և նոր դարապատմաններից մէկը համար վնասական զործոն շրջանի հոգեկան կառուցաւածքի ստեղծման համար վնասական զործոն շրջանի հոգեկան կառուցաւածքի ստեղծման մի ընդունում, միւս այլ, բայց նոյնպէս համազործակից ուժերը միեւ ընդունում, միւս այլ, բայց նոյնպէս համազործակից ուժերը միեւ այն մի երկրորդական գեր են խաղում: Վերջինները կարող են այն մի երկրորդական գեր են խաղում: Վերջինները կամ յետ մզել, պատմութեան իմմաններ զարգացումը արտացնել կամ յետ մզել, պատմութեան համար զիտակցութեան պատմութեան մէջ:

Երբ Համարեխտը ցեղային զիտակցութիւնը իւր կատարելութեան հասած զրութեամբ բնութագրում է, նա շարունակում է, թէ կազմական հանրային զգացման ապազայ զարգացման համար զերմանական հանրային զգացման ուսումնասիրութեան մէջ:

1) Այս կարեւոր, բայց ազգի ամբողջ իրական կեանքի ստեղծման համար ոչ միակ զործոնի մանրամասն ուսումնասիրութեան մէջ է կայանում, մեր կարծիքով, Համարեխտի ամենազօրեղ կողմը:

բախտի մի յատուկ շնորհք պիտի նկատել այն հանգամանքը, որ
այնտեղ, ուր ցեղային հպարտութիւնը ամենից շատ զարգացած էր,
մի քաղաքական յառաջարժում, արտակարգ կարևորութեամբ, հան-
գէս եկաւ : Մենք զիտենք, որ Փրանկներն ու նրանց տիրապետող
տունը իրենց փառասիրութիւնը իրենց ցեղային շրջանով չահմա-
նափակեցին : Մերովինքեան թագաւորական սերունդը հպատակե-
ցնում իրեն բոլոր այլ Փրանկ ցեղերը ինչպէս նաև իշխանութիւնը
տարածում է Ալամանների, Թիւրինցոց և Բաւարացոց վրայ 1)։
Իրեւ հետեւանք այս քաղաքական գործողութեանց, մենք տեսնում
ենք, թէ ինչպէս առաջ է գալիս բոլոր Փրանկ ցեղերին յատուկ
ընդհանրութեան զգացում, որն անշուշտ աւելի բարձր աստիճանի է
— ազգային զիտակցութեան տեսակէտից նայած եթէ համեմատենք
նախկին զուտ առանձնակի ցեղական զգացման հետ : Սակայն երբ
մենք կամպրեխտի հետագայ արտայայտութիւններն այս խնդրում ի
նկատի ենք առնում, տեսնում ենք որ վերոյիշեալ փաստերը, քա-
ղաքական իրազարձութիւնները, թէպէտեւ պատժական իրականու-
թեան մէջ արժէք ունեն, սակայն շնորհիւ կամպրեխտի կանխասեալ
ահսութեան — ըստ որի իրաքանչիւր գարածքան, իւր ներքին
ոյժի շնորհիւ, իւր մէջ ապագայ զարգացման տարրերն է պարու-
նակում — նրանք թէպէտեւ նպաստում են ցեղական զիտակցութեան
զարգացման, բայց անպայման անհրաժեշտութիւն չեն ներկայա-
ցնում, ուրեմն ե՛ւ հաւասար արժէք լունեն նոր կողեկան կառուց-
ուածքի ստեղծման համար : Այդ ժամանակ, ասում է կամպրեխտը,
գեռ ցեղային զիտակցութեան շրջանում, մի նոր զարգացում էր
սկսուած, որը վերջապէս այս ճանապարհի վրայ առաջ մղեց : Նա
ենում էր նրանից, որ աստիճանաբար տիպիկական հոգեկան կեանքի
հիման վրայ, առաջ արտաքին, ապա ե՛ւ ներքին տիպիկ նմանու-
թիւնը զերմանական ցեղերին պատկանող անձանց յայտնագործուեց
և ճանաչելիութիւն գտաւ : Եւ այն տարրը, որ վերջանկանապէս այս
զարգացման և ճանաչողութեան հասցրեց — (եղուն էր 2)։ Երբ այ-

1) K. Lamprecht. Deutsche Geschichte. 1. Bd. 4p. 17. 1906.

2) K. Lamprecht. Deutsche Geschichte. 1. Bd. hr. 18.

նունեաւ Համպրեխտը այն փաստն է յիշատակում, որ 845 թուրն, Տրիէնտում, մի դատական ժողովում, առաջին անգամ բոլորովին գիտակցաբար *teūfiseūs* բառը դործածուեց ոչ միայն զերմանական լեզուի, այլ ընդհանրապէս զերմանական տիպի որոշման համար, աւելացնում է, որ այդ նոր գաղափարը միայն ժամանակի ընթացքում աստիճանաբար կարող է ը զերմանական հոգի վրայ արմատ բռնել և այդ պրօցեսը պիտի այնքան անհրաժեշտօրէն տեղի ունենար, ինչ-քան մարդ զերմանական ազգային-տիպիկ նմանութեան գիտակցական ըմբռնման խորամուխ եղաւ:

Եւ այս պրօցեսը ցուցադրում է տիպիկական գուշակագութեական զարաշքանի վերջին և ամենահասուն երեսոյթներից մէկը ու իւր վերջաւորութեամբ թեւակոխում է մի այլ յետազայ ժամանակաշրջան։ Սա մի նշան է, որ սա իւր կատարեելութեան համար գեղ բոլորովին արտակարգ հոգեկան փոփօխութեանց, նոր հոգեկան զըրդիւների և գոյութիւն ունեցող հոգեկան հորիզոնի որոշակի ընդարձակման կարիք ունէր։

Նոյնիսկ այսպիսի տրտակարգ և զերմանական պվը համար վճռական մօնենաներ, ինչպէս օրինակ գիւղացիական կախները, 30 ամեայ պատերազմը և այլն, որոնք գերմանական այլ պատմաբանների մօտ որպէս այդ ժամանակի զերմանական ազգային գիտակցութեան անկման վերջնական պատճառ են հանդէս գալիս. բայ Լամպրիստի պատմական աշխարհայեացքի, ազգային համայն գիտակցութեան լեռ մղուելու համար «երկրորդական պարագաներ» են, որովհետեւ դարաշրջանի կազմուածքը զորկ էր ցայտուն ազգային զարաշրջանից և եթէ դարաշրջանի (խօսքը ինդիւ իդու ալիստական դարաշրջանի մասին է) մեծ մասի վերաբերմամբ, որը 1450—1750 թուականի տարիների մէջն է դարիֆակուած, մի լայնատարած և զօրուականի տարիների մասին խօսք չի կարող լինել, ապա անընդ ազգային զգացմունքի մասին խօսք չի կարող լինել, ապա անընդ ապիտի ի նկատի առնել, որ արդին այս ժամանակի ամենաշուշա պիտի ի կատար առնել, որ արդին այս ժամանակի ամենա- խորը հոգեկան կազմուածքը իրացանչիւր համայն զգացման, ուրեմն և ազգային զգացման կազմուելուն շատ դժուարացնում և զօյութիւն

1) K. Lamprecht, *ibid.* 61, p. 19:

ունեցող երկրորդական պարագաներում 1), բոլորովին անհնար էր գործածում 2): Այսուհետեւ կամպրեխտը բացատրում է թէ ինչու ինդիւրիուալիստական շարաշրջանի կազմուածքը անհրաժեշտ է դարձնում ազգային գիտակցութեան հանդէս զալը:

Որովհետեւ անհատները մինչեւ ինդիւրիուալիստական գարաշրջանը զօրեղ կերպով կապուած են եղել միմեանց հետ, ապա այս նոր դարաշրջանում նոքա զզացին միմեանցից բաժանուած, որն անշուշտ իրեւ ռէակցիա է հանդէս զալիս նախկին վիճակի վերաբերմանը: Դրա հետ միասին նաև մի այլ պատճառ է զործում. 15—16րդ դարու մարդկային ազատազրութիւնը նախկին դարերի անհատին կաշկանդող կապերից, ամենից առաջ բանականութեան ազատազրում էր. սակայն բանականութեան զերիշխանութիւնը բաժանում է մարդկանց: Սա կարելի է դիտել ինչպէս անհատների, նոյնպէս նաև մարդկային համայնքների մօտ 3): Պարզ է որ այս տեսակէտից ոչ մի համայնքացում, մասնաւորապէս ազգային զզացում չէր կարող այն ժամանակ սնուիլ, որովհետեւ ռազզութիւնը չափով ժամանակի ընթացքում առաջ եկած մի բան է, որ մինչեւ մի որոշ զարգացման բարձրութեան հասնիլը միշտ անզիւտակից է ինում. գա մի բան է, որ խուսափում է զաղախարների մէջ լուծուելուց և նա չի կարելի մտածել առանձին անձանց *amor intellectuallis*՝ որոնք էզօֆիտական շահերով կապուած լինէին, այլ միայն ալարուխտական զզացումներով և աշխարհի հասարակ *amor naturalis* 4): Հասկանալի է ուրեմն, որ այս տեսակէտով, ազգութիւնը ինդիւրիուալիստական գարաշրջանի ռացիօնալիստական համայնշան զաղախարի մէջ տեղ չէր կարող զանել:

1) Երկրորդական պարագաներով կամպրեխտը հասկանում է ա) 1525ի դէպքերը, բ) 30ամեայ պատերազմը, զ) քաղաքացիութեան անկումը:

2) K. Lamprecht. *ibid.* եր. 39.

3) K. Lamprecht. *ibid.* եր. 40:

4) K. Lamprecht. *ibid.* եր. 41:

Եթէ ուշագրութեամբ հետեւենք մտքերի այս շարանին, կը նկատենք, թէ ինչպէս աստ պատմական գոյութեան պայմաններից մէկը մանրամասն նկարագրում է, մինչդեռ այլ ուժերը, պատմարները, իրադարձութիւնները, որոնք տուեալ կեանքի համար նոյն քան արթէք ունեն, թէպէտեւ դրանք սկզբից չնախատեսնող ուժեր են, որպէս կողմնակի պարագաներ են հաշում: Մի պատմական ըմբռումն, որ իրացանչիւր դարաշրջանում ինքն իրեն զարգացող իմմանենա պրօցես է ընդունում, որն ի վիճակի է պատմական ի բականութիւնը կերպաւորել, անկախ այն հանգամանքից, թէ երկրորդական պարագաները գոյութիւն ունեն թէ ոչ, այդպիսի մի աշխարհայեցք անշուշտ չէր կարող ընդունել, որ 30ամեայ պատերազմները — ընդարձակ նկարագրուած կամպրեխտի զերմանական պատմութեան մէջ — որոնք զերմանական ոգեկան, ոցիքայլայն և տնտեսական կեանքը ոչնչացրեն, նոյնպէս զերմանական համայնքացման, ուրեմն և ազգային զգացման անկման, որպէս անկախ և կարեւոր ոյժ, նպաստել կարող են:

Իմմանենա զարգացման սկզբունքի իբր պատմութեան միակ տիրապետող ոյժի, նշանակութիւնը կարող ենք մենք ամենից յաջող կերպով սուբֆեկտի գարաշրջանի նկարագրութիւնն մէջ նկատել. ուր, ըստ կամպրեխտի, ստեղծում է ազգայնութիւնը: Այստեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս չերգերը, որը կօսմօզօլիթիզմօզ տարուած էր, իբր նախայարերի զործերն էր զովում — զերմաններից մինչեւ Ֆրիտրիխ Մեծը: Պատմական ազգային հպարտութիւնը է ազգայնութեան իսկական հիմնական զզացումը: Այստեղ գեր է խաղում եւ սուբֆեկտի գարաշրջանի նոր հոգեկան կեանքի յորդացող ոյժի զզացումը: Կամպրեխտական և ինդիւրիուալիստական փիլիսոփայութեան ժամանակ մարդ էապէս զզում էր բոլոր ազգերից բարձր և այդպէս էլ արտայայտում էր: Երբ այսունետեւ նապօլէոնը արեւմուտքից ներս մատ Գերմանիոյ մէջ, երբ տագնապալից տարիներում, ազատազրութեան կոիւներում զերմանական ժողովուրդը մի առաջնակարգ առավետութիւն ցուցագրեց, ապա ազգային զզացումը և հպարտութիւնը բոցավառուցեց 1): Այս բոլոր ի-

1) K. Lamprecht. *Deutsche Geschichte.* 1. Bd. 1. abt. եր. 59.

բագարձութիւնները ստկայն Լամպրեխտին թւում են միայն որպէս նշաններ ազգայնութիւնը ստեղծող իսկական ոյժի, որովհետեւ վերայիշեալ գէպքերը նկարազրելուց յետոյ Լամպրեխտն անմիջապէս աւելացնում է. Ալրդեօք այս ու նման զէպքերը ազգայնութեան իսկական պատճառներն են: Այս հարցին դրական պատասխան տալ նշանակում է մի անհատի հոգեկան խորութեան բացարութիւնը նրա կեանքի ընթացքի արտաքին երեսոյթների մէջ փնտաել: Ո՛չ, շատ աւելի ուրբեկալիքմի անմիջական էութեան մէջ է խարսխուած ազգայնութիւնը¹⁾:

Ազգայնութեան և անհատի համեմատութիւնը միայն այն ժամանակ ճիշտ կը լինէր, եթէ մենք այդ երկու համեմատող օքֆեկտ նիշը կամ զարգացման կամ մնայուն դրութեան մէջ վերցնենք: Ստկայն ռուեալ գէպքում կամպրեխտն այդպէս չէ վարւում: Մենք չենք փնտում մի անհատի հոգեկան խորութեան բացարութիւնը նրա կեանքի ընթացքի արտաքին երեսոյթների մէջ միայն այն ժամանակ, երբ այս հոգեկան խորութիւնը պատրաստ կերպով մեր առաջ է ներկայանում: Այդ ժամանակ կարիք չկայ պատահական արտաքին գէպքերը նկատողութեան առնել: Ստկայն մեր համեմատութեան մէջ հոգեկան խորութիւնը զեր ստեղծման սկզբնի միջն է: Իրական անհատը բազմապիսի գէպքերի, ազգեցութեանց միջնով է կազմում: Նոյնը վերաբերում է նաև ազգայնութեան: Վերայիշեալ գէպքերը, նախ քան ազգային գիտակցութեան իրականացնութիւնը, գոյութիւն ունեն և այդ նոր ստեղծուելիք ազգային գիտակցութեան մէջ անհամեշտ բազազրիչ տարրեր են կազմում: Հետեւենք ստկայն Լամպրեխտի մտածողութեան ընթացքին:

Սուբժեկտի զարաշրջանում բոլոր մինչեւ այդ գոյութիւն ու նեցով ստամանակակութերը վերանում են: Իրաքանչիւր անձի վրայ պարտականութիւն է զեւում մի բան լինել և դրա համար կրթուել: Ստկայն այգպէս կրթուած անձը մեկուսացած չէ մեռու այս աշխարհում, այլ օժտուած կամքի, զգացումի և բանականութեան ուժերով և այդ սեփական ուժերի գիտակցութեամբ: Նա մըտ-

1) K. Lamprecht, Deutsche Geschichte. 8. Bd. 1. abt. եր. 60.

նում է աշխարհ և իւր վերոյիշեալ ուժերին ազատ զարգացման և զործունէութեան մէջ գնում: Այս բնաւորութիւնը բոլորովին հակապատկերն է ինդիւիզուայիստական մեկուսացած անհատի: Այժմ անձը հազար ու մի ձեւով ազգում է կեանքի վրայ և նմանպէս ազգում շրջապատող կեանքից: Իբրև հետեւանք այս փիլադելիք ազգեցութեանց, ծնում է այն ընկերային կուլտը (Freundschaftskultus), որը 18րդ դարու կիսից տիրապետում է հոգեպէս զարգացած շրջաններին 1): Սուբժեկտի ժամանակներում, առում է Լամպրեխտը, կեանքի շրջանի լայնացումը, որի մէջ իսկապէս իւրաքանչիւր սուբժեկտ ազգում է և ազգեի կարող է, աստիճանաբար իւրաքանչիւրին ընձեռնում է կեանական յարաբերութեանց անվերջ առանութիւն և բազմապիսութիւն: Ժիմեանց հետեւող սերունդներին ստկայն միամամանակ մի աշնաբիսի առանութիւն և բազմապիսութիւն ժամկութեանց: Հետեւանքը լինում է շահերի մի հսկայական հիւսուածք: Պարզ է, որ մի այդպիսի կեանք միայն ազգառութեան մէջ կարող է բարգաւաճել: Պարզ է նոյնպէս, որ դա պիտի անհամանափակուի, եթէ չէ ուզում հիւսնդապին զրութեան և բաժան-բաժան լինելուց առաջ եկած մահուան ննթարկուի: Հենց առ այն տեղն է, ուր ազգային շրջանակը ազգեցիկ է լինում: Միայն նա իւր ընդարձակ շրջանում այս կեանքը միացած է պահում: Եւ այսպէս բացարուում է, որ զրա (այսինքն ազգութեան) պահպանակ կամ ուր զա զեր ձեռք չէ ընդուած: զրա նուանման համար բոլոր մեծ շահերը հանգէս են զալիս, անցեալի ամբողջ ոգեւորող սէրը, ամբողջ ազգային հպարտութիւնը ազգեցութիւն են ունենում²⁾:

Այս ամբողջ զբանզութեանց մէջ մենք նկատում ենք երկու տեսակի երեսոյթներ, ա) այն նախապայմանները, որոնք ընկերային կուլտի առաջացման համար անհրաժեշտ էին և վերջինիս գոյութիւն

1) See K. Lamprecht. ibid. 1. Bd. եր. 46—47.

2) K. Lamprecht. Deutsche Geschichte. 8. Bd. 1. abt. եր. 60: Համեմատել K. Lamprecht Zur Jüngsten Deutschen Vergangenheit. 2. Bd. 2. halfde. եր. 63—64.

ունենալը . բ) ազգային զեթ ներկայութիւնը դրա մէջ : Այս երկու տիպի փաստերի մէջ — որոնք իրականութեան մէջ միացած են — եղած կապակցութիւնը հիմնաւորելու համար կամպրեխտը առաջար- եթէ չէ ցանկանում հրւանդագին դրութեան և բաժան-բաժան լինե . լուց առաջ եկած մահուան ենթարկուի : Այս «պիտին» սովորյան մի յիտադարձ եզրակացութիւն է կատարուած իրողութեան վերաբեր- մամբ և ոչ թէ վերջինիս իրական բացատրութիւնը : Մենք տեսնում ենք , որ «ընկերային կուլտը» կլասիկ բանաստեղծութեան ժամա- նակ կօսմօպօլիտական հոսանքներով տողօրուած էր և մենք կարող ենք ընդունել , որ այդ հոսանքները կարող էին գեռ էլ աւելի զօրե- զանալ , եթէ արտակարգ պարագաները զերմանական ազգին հանդի- պած չենէին , Մենք սակայն տեսնում ենք , որ Նապոլէոնի նուա- նակ ու նրանից յետոյ այդ «ընկերական կուլտը» իւր մէջ շեշտուած ազգային զիծ է պարունակում : Նոր կեանքի այս կերպարանափո- խութիւնը կարելի է միայն այն ժամանակ բացատրել . եթէ մենք մենք «ընկերային կուլտը» միայն որպէս կարեւոր նախապայման ընդունենք ազգային կեանքի նոր ուղղութեան համար , որը զանա- զան դործոնների ազգեցութեան չնորին հանդէս է եկել : Լամպրեխո- տի համար սակայն , որովհետեւ նա կանխօրէն ազգի բոլոր չնախա- տեսնող պատահարները որպէս պատմութեան ոչ ակտիւ զարծոն է ընդունում և նա իմմանենա է զարգացնում , ապա պատմական իրա- կանութեան բոլոր հսկայական զեպքերը միայն նոր հոգեկան կեան- քի համար , որը համայնական զգացումն ու հայրենասիրութիւնը հանդէս զալիս , այդ հարաւորութիւնը իրականութիւնը կարաւուիմ . որպէս փորձ են համար :

Եթէ թիօդնեարիկ օրէնքը : որ մենք վերեւում յիշատակեցինք և որը զեկավարում է Լամպրեխոտ մտքերի ընթացքը . միայն մի են- թագրական տուեալ լինէր , չյաւակնելով ամբողջ պատմական անց- եալը միայնակ բացատրել . այլ պատմութեան միւս զարծոնների եւտ միասին , ազգի ամբողջ կեանքի ըմբռնման օգնել , ապա տարբեր

ուղղութիւնները գերմանական պատմազրութեան սկզբունքով կը հաշտուէին . որովհետեւ մի աւելի բարձր տեսակէտից դիտած , այս երկու ուղղութիւնները միմեանց լրացնում են : Մէկը դոցանից ու- սումնասիրում է սօցիալական անհատի զէպքերը , պատահարները , միւսը՝ հասակը : Սակայն իրական կեանքը այդ երկու մօմէնաններն էլ իւր մէջ պարփակում է :

Այս պատմահայեցողութեան բնօրոշ կողմը նրա մէջն է , որ աստ պատմական իրականութեան իդէալ հնարաւորութիւնը (կեր- պաւորումը) որպէս իսկական իրականութիւն է ընդունուում : Երբ այն մօմէնանները , որոնք պատմական իրականութիւնը առաջ են բերում , որպէս հիմնական փաստեր չեն վերցում , պատմական ի- րադարձութեանց (միւնոյն է , թէ սրանք եղական թէ կոլլեկտիւ են) անհատական նշանակութիւնը վերջին հաշով կորչում է : Այս եղակի փաստերն ամեննեին անհրաժեշտ և վերջնական մղիչ ուժերը չեն պատմական զարգացման , այլ նրանք միջոց են , սկզբից որոշ- ուած պրօցեսը իրականացնելու համար : Այս պրօցեսի կրողը մի իմ- մանենա զարգացման ուժով օժտուած ազգի հոգին է , որը զանազան գրգիտական միջոցով հասունութեան է բերուում : Այս զրգիտների մի- ջոցով առաջացած դարաշրջանները միմեանց հետեւում են կանոնա- ւոր կերպով և իւրաքանչիւրը այդ զարաշրջաններից մի ամբողջու- թիւն է ներկայացնում , որն իւրենից իւր գոյութեան իրաւունքն է պարզուցանում :

Կուլտուրական կառուցուածքները զուգահեռական են զնում ի- րենց զարգացման մէջ և կուլտուրական դարաշրջաններից իւրա- քանչիւրում ազգային հոգին , որ մի միութիւն է ներկայացնում , բոլոր ստեղծագործութեանց վրայ իւր զրոշն է զնուած Ազգային զիտակցութիւնը եւս այս ամբողջ պրօցեսի մի արգասիքն է : Ազ- գային միութեան զիտակցութեան կազմուիլը թէպէտեւ պատահա- կան , աննախատենուած , անհատական զէպքերին ենթակայ է , սակայն նա ունի իւր , այդ պատահականութիւններից անկախ ըն- թացքը : Պատահականութիւնները սակայն ազգում են ո՛չ վճռական կերպով և ոչ էլ նրանք որոշակի նշանակութիւն ունեն պատմական պրօցեսի համար :

Մենք արդէն ակնարկեցինք , ո՞ւր է գտնուում այս պատմական

Ըմբռնման միտկողմանիութիւնը։ Աստ գեղարուեատական աշքով դիտած անցեալը, իւր հիմունքից նկատած, որպէս բաւարար մատերիալ է վերցւում իւրական կեանի բացատրութեան համար. մինչդեռ վերջինը իրօք զանազան, պատմութեան մէջ ստեղծուած, փոփոխակի տարրերի կարիք ունի, բանական կերպով բացատրուելու համար։ Եթէ ունենանք այս մի օրինակով բացատրել, ապա կարող ենք ասել, որ մի աղջի պատմական կեանքը, առանց այդ բազմապիսի վեղակի դէպքերի, այն երեխան է, որ այրական հաստեկը իւր մէջ իրեւ հնարաւորութիւն պարփակում է, մինչդեռ այս եղակի, անհատական տարրերը հէնց նպաստում են ազգային կեանքի, ինչպէս նաև այրական հաստեկի բնաւորութեան իրական կերպաւորման։

Թանգէին հետեւող պատմաբանների համար գլխաւորաբար պատմութեան մէջ ստեղծուած և նրա մէջ աղջող զործօնները իւրենց անհատական և մնայուն նշանակութեամբ վճռական և վերջին ուժերն են աղջային կեանքի ձեւակերպման համար։ Լամպրեխտի համար սակայն կարեւորը այդ ոյժերի յետեւը գտնուած, դրանց իշխող ու զեկավարող աղջային հոգին է պատմութեան իմաստալից զիմաւոր շարժիչը։

Այս երկու ուղղութիւնների զոյութեան իրաւունքը միայն նրանումն է, որ պատմական կեանքը այնքան բարդ բազմակողմանի է, որ այս տեսութիւններից իւրաքանչիւրին փաստերի մի ահպին քանակ է ընձեւնում, որոնք կարող են ըստ ինքեան ամբողջութիւն ներկայացնել։ Այս եղանակով պատմական կեանքի մի կողմը սուր կերպով վեր կը հանուի և կը լուսաբանուի ու մորորութիւնը միայն նրանից է առաջ գալիս, երբ այս միմեանց փոխադարձաբար լրացնող ուղղութիւններից իւրաքանչիւրը մենակ աղջի մումք կեանքն ու զարդացումը ամբողջապէս բացարել է յաւականում։

ՀԱՅԱՐԱԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Մարգկային հետախուզող մտքի համար ամենակենսաթրթիութիւններից մէկն է նոյն ինքն մարդ էակի ճանաչողութիւնը։ Մարդու բազմատեսակ և բազմաբովանգակ կարողութիւնները գարերի ընթացքում զանազան տեսակէտից ուսումնափրութեան նիւթեան գարձել և այսօր էլ գառնում են ու գարձեալ անկատար է մեր իմացութիւնը և մենք նորանոր միջոցների, զիտական նոր զիսցիպանների ու ուրոյն զիտութեանց ենք զիմում՝ խնդրի լուսաբանման համար։ Ներկայիս մարդը, իւր ունեցած բոլոր յատկութիւններով հանդերձ, զեռ մեզ ըաւականին նիւթ չէ տալիս, վերոյիշեալ պրօլիեմը լուծելու, որովհետեւ մարդկութեան ունեցած զանազան և իւրաքից յաճախ աարբեր գարաշը աններումն է իսկապէս յայտնազործում մարդու ամբողջ էութիւնը։ Այս պատճառով էլ պատմական իրականութիւնը ամենահիմնական աղբիւրներից մէկն է մարդանահանական տեսակէտից։ Սակայն պատմութիւնը չէ զբաղւում մարդով իրեւ եղակի էակով, այլ ինչքան մարդիկ իրեւ հասարակական էակ են զօրծել և զարգացում ցուցադրել պատմութեան մէջ։ Վերացականորէն վերցրած, մեկուսացած մարդու կեանքը չի կարող մեղ լիտկատար բացատրել պատմութեան մէջ հանգիստերուած քաղաքակրթական կառուցուածքների (կրօն, գիտութիւն, զեղարուեստ ևայլն) ստեղծումը, որովհետեւ վերջինները ամենեւին զոյութիւն չեին ունենալ, եթէ չմնէր հասարակութիւն և հասարակական կեանք։ Հասարակական կեանքի ուրոյն յատկութիւնը հէնց այն է,

որ մարդիկ նրա մէջ մնայուն կերպով ընկերակցուելով, նրանց մէջ փոխանակող յարաբերութեանց պատճառով առաջացնում են մի նոր կեանք, որը ցուցադրում է զծեր, որոնք բոլորովին տարբեր են մեկուսացած անհատական կեանքից: Մարդկային հասարակութեան մէջ տեղի ունեցող այս մնայուն փոխազդեցութեանց պատճառով է, հէնց որ սանդուռմ է քաղաքակրթութիւնը իւր բոլոր ճիշդերով^{*)}: Ամենանախնական ժամանակներից իսկ կարելի է ասել, որ ուր կան անհատներ, որոնք միմեանց վրայ ազգում են, անդ կայ հասարակութիւն: Մարդկային տիպը անքատելիօրէն կապուած է հասարակութեան տիպի հետ 1), այսինքն մարդու կողմից ընդունուած արժէքների բավանդակութիւնը ու դրանց արտաքին ձեւը պայմանաւորուած է այն հասարակական կենցաղով, որի մէջ նրանք անպայմանօրէն կաղապարուած են: Օրինակի համար աւատական հասարակական կառուցուածք ունեցող կեանքը (և ուրեմն համապատասխան դարաշրջանը), որ առարուած է առանձնայատուկ կուլտուրական արժէքներով, այնպիսի տարրեր է ընձեռում իւր բազկացուցիչ ներկայացուցիչներին, որ օրինակ կապիտալիստական միջավայրում անհատանալի կը լինէր: Եւ այն ինչ որ դարու ոզի է կոչում, իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական տարբեր կենցաղների որդի. որն իւր անչոչելի դրոշմն է դնում նրա շրջանում և նրա ազ-

*) *Ses De la Méthode dans les sciences. deuxieme édition. Paris. 1910. եր. 316. Emile Durkheim. (Sociologie et sciences sociales). — Էդ. Գոբլոն ուսումնասիրելով հասարակական երեւոյթի ընոյթը, զալիս է այն եզրակացութեան, որ հասարակական երեւոյթը, գործ է մէկ անհատի կամ մէկ հաւաքականութեան իւրաքանչիւր զարծութիւնը՝ մի անհատի կամ հաւաքականութեան վրայ:* (Տես՝ Edmond Goblot. *Essai sur la Classification des sciences. Paris. 1898. եր. 204: Համեմատել անդ՝ եր. 248 և 292):*

1) *Ses Պ. Բարբ. — «Ցիլոսոփիա պէտօրիի կակ սոցիոլոգիա», թարգմ. Մոսելա, 1902. Գետերբուրգ, եր. 10: Սայն զրգի գերմանիւնը ձեռքիս տակ չունենալով, ստիպուած եմ դժբախտաբար թարգմանութիւնից օգտուել:*

գեցաւթեան տակ զտնուած բոլոր անձանց, ինչպէս եւ վերջիններիս կողմից կատարուած զործադրութեանց վրայ: Այդ նոյն ազգեցութիւնը կրելու պատճառով է, որ անհատներն ու նրանց գործերը բազմականի այլ տարբերութիւնց հետ, որ զանազան պատճառների պիտի վերագրել, նույն որոշ ընդհանուր նմանութիւն են ցուցադրում, ուր մենք դարաշրջանի արգասիք ենք կոչում: Բնական է որ հասարամենք դարաշրջանի այսպիսի ըմբռնման գէպքում, հասարակական կական երեւոյթների այսպիսի ըմբռնման գէպքում, հասարակական կեանքում մարդկային իրադարձութեանց համար որոշ շրջանակ է կեանքում մարդկային իրադարձութեանց համար որոշ շրջանակ է ընդգծում, որի մէջ տիպի տկտեր կարող են կատարուել (օր. Կապիտալիստական հասարակութեան մէջ տեղի չին ունենում նահապետական կամ աւատական հասարակակարգին պատկանող զործեր) ու տական կամ աւատական ամենեւին այդ տկտերի բնոյթն մեր աղաս կամքից չէ կախուած ամենեւին այդ տկտերի բնոյթն ու վերջնական լուծումը: Հասարակական երեւոյթների դեաերմինիզմի (կանխարոշութեան) զալափարզ—որը մենք ի վիճակի ենք ապացուցանել հէնց այն ակնյայտնի իրողողութեամբ, որ ամենահետաւոր և միմեանցից ամենեւին կախուած չունեցող վայրերում, որ հակայն հասարակական կեանքի պայմանները նոյնութիւն են ցուցադրում, միաժամանակ եւ նման կուլտուրական հաստատութիւններ են գոյութիւն ունենում — մարդկային մտքի ամենաբեղմեաւոր նուածումներից մէկն է, որը ուուր կերպով տեսնելով իրականութիւնն ուուածումներից մէկն է, որը ուուր կերպով տեսնելով իրականութիւնն ուուածումներից մէկն է, որն անդ կարպութիւնները ինչպէս ինչպէս ինչպէս նա կայ, մեզ բազմիպիսի անիրական ցնորքներից հեռու է ինչպէս նա կայ, մեզ բազմիպիսի անիրական ցնորքներից հեռու է վանում և անհրաժեշտ զգաստութեան սահմաններում պահում:

Հասկանալի է, որ երկար ժամանակ պիտի անցնէր, մինչեւ որ մարդկային իմացութիւնը այս նշանաւոր կէտին հասնէր: Դրան համեմատելու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել հասարակական երեւոյթն այնպէս, ինչպէս նա կայ: Մինչդեռ մարդկային մտածութիւնը ընթացքն այնպէս է եղել, որ փոխանակ նկարագրելու և զութիւն ընթացքն այնպէս է եղել, որ փոխանակ նկարագրելու և զութիւն ներկայակութիւններն այնպէս ինչպէս զրանք են կամ բացատրելու հասարակութիւնները են զարձրել, թէ ի՞նչ պիտի լինի եղել են, հետազոտութեան նիւթ են զարձրել, թէ ի՞նչ պիտի լինի հասարակութիւնները, ինչպէս նրանք պիտի կազմակերպուեն՝ հընաբարական կատարելին հասնելու համար: (Տես՝ Դիւրքինայմ, անդ, եր. 308): Մինչեւ XVII թրդ դարու վերջը խի կարող լինել մարդկութեան զարգացման պրօցէսի ուսումնասիրութեան մասին, գոյութիւն ունեցող պիտական կազմը գիտուում էր որոշ չափով որ-

պէս տուեալ։ Սովորաբար չէր շօշափւում գոյութիւն ունեցող պետական ձեւի ծագման խնդիրը և նրա համապատասխան լինելը պայմաններին, ու այդ պետական ձեւն էլ չին դիտում որպէս զարգացման երկար շղթայի օղակներից մէկը։ Դրա փոխարէն տարւում էին իդէալական հասարակական կազմի ֆանտաստիկ պատկերներով, որոնք սակայն որևէ կապակցութեան մէջ չին դրւում գոյութիւն ունեցող հասարակական հաստատութեանց և նրանց զարգացմանց հետ։ Աչնչից ստեղծում էր աստ իդէալական կազմը։ Այս դարաշրջանին զարգացման զաղափարը օտար էր» 1)։

Սակայն բացի զարգացման զաղափարի բացակայութիւնից, զութիւն չունէր նաև այն ըմբռնումը, թէ «հասարակութիւնը, ինչպէս մնացեալ աշխարհը, ենթարկուած են օրէնքների, որոնք անհրաժեշտորէն առաջ են զալիս նրանց ընոյթից և որոնք նրան արտայայտում են։ Այս ըմբռնումը շատ զանգաղ է կազմուել» 2)։ Մարդիկ կարծում էին, ասում է Դիւրքիայիը, «որ որոշ բանաձեւեր կամ որոշ ժեստեր կարող են մի անշունչ առարկայ կենդանի էակ դարձնել, մի մարդու կենդանի կամ բոյս դարձնել։ Այս ցնորամիտ զաղափարը յատկապէս հասարակական երեւոյթների վերաբերմամբ է կիրառութիւն գտնում, որովհետեւ հասարակական զեպքերը շատ աւելի բարդ լինելով, շատ աւելի դժուար էր նրանց ներկայացրած կարգը դիտել և հետեւապէս մարդիկ կարծում էին, որ ամեն ինչ անդ պատահում է պատահական և անկարգ կիրառվ։ Միւս կողմից շնորհիւ այն հանգամանքի, որ հասարակական երեւոյթների գերակատարները մենք մարդիկս ենք, որ այսպէս կամ այնպէս ենք կամ ենում և ըստ այնմ գործում ու իրերի ընթացքի վրայ ազգում, ենթագրել է տալիս, որ ուրիմ բացառապէս մեզնից է կախուած այդ երեւոյթների ընթացքը և հետեւապէս մենք կարող ենք դրանց այն բնոյթը տալ, ինչ որ մենք ուզում ենք։ Մի ինչ որ մատխարաւ»

1) Տես՝ Գ. Կուպով, — «Սոցիալգիա, էտնոլոգիա ի մատերիալիստիկսկոյէ պոնիմանիէ իստորիէ», թարգմ. զերմաներէնից, Կիեւ, 1905, եր. 4։

2) Տես՝ E. Durkheim. ibid. եր. 308.

թեամբ մեզ թւում է, թէ հասարակական երեւոյթների մէջ չկայ օրժեկտիւ իրականութիւն, ուրիմն եւ կարդիք էլ չկայ իմանալ, թէ ի՞նչ է այդ օրժեկտիւ իրականութիւնն ու այն օրէնքները, որոնցով նա առաջ է մզւում 1)։ Այս տեսակետը մեզ աարօրինակ չպիտի թուայ, քանի որ այսօր էլ դեռ մարդիկ և նոյնիսկ իմբակցութիւններ կան, որոնք կարծում են ու այդ ուղղութեամբ փորձում, որ բաւական է որ մենք կամենանք, կարող ենք մի հասարակական կառուցուածքը մի այլով, աւելի լաւագոյնով փոխարինել։ Մինչեւ պատմութիւնը ցոյց է տալիս, որ նոյնիսկ կալվառուայի այնպիսի բնագաւառներ, ինչպիսին է օրինակ կրօնական աշխարհը, որը շատ աւելի մեր անհատական կեանքի հետ է կապուած, — ունենալով հանդերձ իւր աղբիւրը մարդու ներքին կրօնական հակումների մէջ — ժամանակի ընթացքում իներցիայի ուժով տրամադրիր է քարանալ զանազան օրժեկտիւացած հաստատութիւնների մէջ, որոնք զրուց մեր անհատական կեսոնքի ապրումների վրայ աշխատում են զանազան կերպով աիրական ոյժ բանեցնել և իրենց ծառայեցնել։ Կրօնական բարենորոգութեան (աէֆօրմացիայի) ժամանակ տեղի ունեցող պայցարը մի շատ զեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս անհատական կրօնական ապրումներից բխած և ապազային զարերի ընթացքում կերպարանաւորուած, կարծրացած հաստատութիւնները, հետեւելով իւրեւոյթների պայցարը և նրանց այդ անհատի կենսամթթիւով պահանջների վրայ։

Միմիայն 19րդ դարու վերջին մարդիկ սկսեցին նկատել, որ սցիալգիան աշխարհը ունի իւր ուրիմն օրէնքները, ինչպէս բնութեան այլ աշխատանքները, Ոօնտեսաքիօն յայտարարում է, որ օրէնքները անհրաժեշտ յաբարերութիւններ են, որոնք իրերի ընոյթից են առաջ զալիս և այս օրէնքը կիրառելի է նաև հասարակական երեւոյթների վերաբերմամբ ու նրա «Օրէնքների Ոգին» սրոշակի նպատակ ունի ցցոյց տալ, թէ ինչպէս իրաւական հաստատութիւնները հիմնաւած են մարդկանց և նրանց միջավայրի ընոյթի վրայ»։ (Տես՝ Durkheim. ibid. եր. 309)։

Այսպիսով ուրիմն պատմական փաստերի բացարութեան դէպ-

1) Տես՝ E. Durkheim. ibid. եր. 309.

քում, որը հնթագրւում էր իբր բազմապիսի պատօհականութեանց մի կօնզօմերատ, մի որոշ չափի բնուկան անհրաժեշտութեան զաղափարն է ներմուծւում 1): Այսաեղ պիտի նկատել, որ Մօնտեսքիոյի մօտ անզամ մենք չենք հանդիպում հասարակութեան օրինաշափ աճման և նրա զարգացման առանձին շրջանների յաջորդականութեան զաղափարին 2):

Մեր նպատակը չէ այստեղ կանգ առնել հասարակութեան վերաբերակ անսութեանց զարգացման պատմութեան վրայ 3): Այստեղ մեզ զբաղեցնողը հասարակագիտութեան զբաղման յատուկ առարկան է, այն հանզամանքը ստկայն, որ հասարակական երեւյթները ոչ թէ պատահական բնոյթ են կրում, այլ որ նրանք ենթարկուած են որոշ օրէնքների, և դրանցով են զեկավարւում, լոկ հնարաւոր է դարձնում այդ երեւյթները զբաղան ուսումնասիրութեան նրբթ զարձնել: Սակայն, դրանով զեռ հասարակագիտութեան, իբրև ուրոյն զիտութեան, զոյութեան իրաւունքը չէ ապացուցուած, որով հետեւ հասարակական երեւյթների զանազան կողմերով զբաղւում են նաեւ այլ զիտութիւններ, օրինակ քաղաքատնտեսութիւն, իրաւագիտութիւն, քաղաքական հասարատութեանց պատմութիւն, կրօնների պատմութիւն ևայլն: Ուրիմն նա պիտի ունենայ իւր յատուկ ուսումնասիրութեան առարկան: Տեսնենք թէ ի՞նչպէս է նայում այս խնդրին հասարակագիտութեան հիմնադիր Օգիսա կօնաց:

Հատ կօնտի, դրական փիլիսոփայութեան ամենաբարձր ամբի-

1) Տես՝ Գ. Կուպով, *ibid.* եր. 7—8:

2) Տես՝ Մ. Կովալեսկի, — «Սօցիոլոգիա», հատոր I. Պետերբուրգ, 1910, եր. 127—128:

3) Տես՝ Օգ. Կոնտին կանխող մասնողների մասին Մ. Կովալեսկի, անդ եր. 126—155: Տես նաև Գ. Բարտ, *ibid.* եր. 13—21, յատկապէս 15—21 երեսները, ուր խօսում է մանրամասն Ս. Սիմոնի տեսութեան մասին, որն ազդել է իւր աշակերտ և սօցիոլոգիայի խոկական հիմնադիր Օգ. Կոնտի աշխարհայեացքի վրայ:

Եիոնն է յայտնագործել երեւյթների օրէնքները 1): Նա յայտարարում է, որ դրական փիլիսոփայութեան հիմնական բնոյթն է բարը երեւյթները զիտել որպէս ենթակայ բնական անփոփոխ օրէնքների (տես, անդ՝ եր. 8): Եւ ահա ըստ կօնտի, հասարակական երեւյթները միշտ ենթակայ են անբառսափելիորէն նման անփոփոխ բնական օրէնքների 2): Եւ այս տեսակէտից էլ կօնտը օրինակ Մօնտեսքիոյին բարձր է համարում նրա ժամանակի բոլոր փիլիսոփաներից, որովհետեւ նրա մօտ զերիշխում է Տեսնենց՝ ըմբռնել այսուրից, որովհետեւ նրա մօտ զերիշխում է Տեսնենց՝ ըմբռնել այսուրից, որովհետեւ նրա մօտ զերիշխում է Տեսնենց՝ ըմբռնել այլուր կօնտը սօցիոլոգիա անուն է տալիս, որն սաեղծած զիտութեան կօնտը սօցիոլոգիա անուն է տալիս, որն սատ նրա, լիակատար համապատասխանում է արդէն նրա կողմէից ըստ նրա, լիակատար համապատասխանում է արդէն նրա կողմէից նրա կողմէից նաև սօցիոլոգիան ֆիզիկա տերմինին: Սօցիոլոգիա տերմինութեան սահմանվ բնորոշել բնական փիլիսոփամինով նա նպատակ ունի մէկ բառով բնորոշել բնական փիլիսոփայութեան այս լրացուցիչ մասը, որը վերաբերում է հասարակական յերեւյթներին յատուկ հիմնական օրէնքների ամբողջութեան դրական ուսումնասիրութեան (անդ՝ չորրորդ հատոր, եր. 132):

Կօնտն իւր այս նոր սաեղծած գիտութիւնը երկու զիտաւոր մասի է բաժանում՝ սօցիալական սատիկա և սօցիալական դիմական: Սօցիալական սատարիկան, որն ռամբողջ սօցիոլոգիայի առաջին բանական հիմունքն է կազմում» (տես, անդ՝ չորրորդ հատոր եր. 190—191), զբաղւում է մարդկային հասարակութեանց զոյութիւնը: Նա խորը վերլուծման է ենթարկութեանց բոլոր մարդկային հասարակութեանց զոյութեան համար այդ ընդհանուր պայմաններով: Նա խորը վերլուծման է ենթարկութեանց բոլոր մարդկային հասարակութեանց զոյութեան համար այդ ընդհանուր տարբեր հասարակութիւնները՝ իրեւ տուեալներ իրենց մնայուն տարբեր հասարակութիւնները՝ թէ ի՞նչ հիմունքների վրայ են նրանք խաղը ութեամբ և քննում, թէ ի՞նչ հիմունքների վրայ են նրանք խաղը ութեամբ, թէ նրանց մէջ զոյութիւն ունեցալ ատրեւը կուտարածուած:

1) August Comte. Cours de philosophie positive. Paris. 1907. Tome premier. 5em édition. եր. 6:

2) Տես՝ August Comte, *ibid.* 4րդ հատոր, 1908, եր. 163 և 167:

3) Տես՝ August Comte, *ibid.* 4րդ հատոր. եր. 127:

կան կառուցուածքները (կրօն, սիետութիւն, զեղարուեստ, զիտութիւն, տնտեսութիւն ևայլն) ի՞նչ պատճառներով է որ փոխադարձաբար ազդում են և ներշաշնակութիւն կազմում։ Հիմնական զազափարն աստ այն է, թէ իւրաքանչիւր տուեալ հասարակական կառուցուածքի զանազան կողմերը չեն կարող մեկուսացած գոյութիւն ունենալ և ուրեմն իրեւ այդպիսին չեն կարող դիտուել, այլ դրանք իրենց փոխադարձ կախման մէջ պիտի նկատի ունենալ և այդ հասարակական կառուցուածքի զանազան մասերը պիտի մի հիմնական համերաշխութիւն (ներդաշնակութիւն) ներկայացնեն և իրեւ այդպիսին՝ միմեանց հետ սերտօրէն բազագրուեն (տես անդ՝ հատոր չորրորդ, եր. 171):

Այս հիմնական համերաշխութիւնը (*solidarité fondamentale*) կոչում է նաեւ *le consensus social* (տես Գրդ հատոր, եր. 172, համեմատել անդ, եր. 176): Արդէն ըստ կօնափ, ուր կայ որևէ սիստեմ, անդ պիտի գոյութիւն ունենայ որոյ համերաշխութիւն (տես անդ՝ Գրդ հատոր, եր. 183), բայց այս *consensus*ը միշտ այնքան աւելի սերտ է դառնում և չեղաւած, ինչքան նա գործադրում է աւելի բարդ և աւելի սակաւ ընդհանուր երեւոյթների վերաբերմամբ (տես՝ անդ, չորրորդ հատոր եր. 184): Ուրեմն այս հակութիւն է ստանում հասարակական օրգանիզմում, որն ինչպէս յայտնի է, ամենաբարդ օրգանիզմն է: Եւ որովհետեւ հասարակական երեւոյթները խորապէս կապակցեալ բարդութիւն են ներկայացնում, սրանից հետեւ որ հասարակական կառուցուածքի զանազան կողմերը պիտի միշտ իրենց փոխադարձ կախման մէջ դիտել (տես անդ՝ եր. 195):

Տուեալ հասարակութեան մշակոյթի տարրերի համապատասխանութեան հանգամանքը, նրանց փոխադարձ առնչութիւնը, փոխազգեցութիւնը, ներդաշնակութիւնը կօնափ աշխարհայեցքի ամենաընդմաւոր արգասիքներից մէկն է, ըստ որի անհնար է ենթադրել օրինակ շմիթի քաղաքակրթութիւն, որի տարրերը չափազանց այլազան լինեն. ինչպէս որ անհնարին է մի հասարակական կազմակերպութիւն, որի բազկացուցիչ տարրերը լինեն ժողովրդավար (գեմօկրատիկ) հանրապետութիւնը՝ ամբողջ ազգաբնակութեան համ-

րական լայնատաւութեամբ, իրաւաբանօրէն կղզիացած կաստաները և ամբողջ հողի սեփականութեան և դրամազլութիւների (կապիտալների) մի բռնապետի պատկանելը. ինչպէս որ անհնարին է ամբողջ մասսայի կատարելապէս գիտական աշխարհայեցքի տէր լինելը միացնել՝ ներգուստ իսպառ չդաստիարակուած՝ վայրենիների արեւելեան բռնակալութեան հետ» 1): Ուրիշ խօսքով առած, ստատիկայի օրէնք է, որ տուեալ քաղաքակրթութեան մէջ տիրապետող սկզբունքները պիտի մարմնանան անխտիր կերպով նրա բոլոր տարրերի և հասարակական ձեւերի մէջ ու այդ սկզբունքներով տոգորուած աշխարհայեցքը պիտի ամբողջութիւն ներկայացնէ եւ ոչ թէ հակադիր, միմեանց ժխտող տարրեր պարունակէ, ինչպէս պարզ կերպով վերեւի օրինակներն են ցոյց տալիս : Անչուշտ, վերջ ի վերջոյ մարդ անհատն է կրօղք վերոյիշեալ սկզբունքների և որովհետեւնա իւր ունեցած գաղափարները անհրաժեշտաբար միութեան է վերածում և ըստ այնմ էլ կիրառում հասարակական կեանքում, տպակրք հասարակական կեանքի և կուլտուրական կառուցուածքների հիմքում տարրեր և հակուանեայ սկզբունքներ են լինում, նա ջանում է վերացնել այդ հակասութիւնները և մի ընդհանուր համերաշխութիւն ստեղծել նրանց մէջ ու միայն այս պարագային է նա իրեն բաւարարուած զգում: Արդ, տուեալ մշակոյթի տարրերի այս փոխազգարձ առնչութիւնը, կախումը, փոխազգեցութիւնը, ներդաշնակութիւնը որոյ օրէնքների են ենթարկուած, որոնք եւ հէնց ուստիմասիրը ունեալ հասարական ստատիկայում: Մենք յետոյ կը ակօննենք, թէ ստատիկայի ներդաշնակութեան այս հիմնական զազափարը ինչպիսի հետեւանքներ ունի և ինչպէս նա միւս գիտական գիսցիպինաները կտիման մէջ է գնում ու ստորագրում հասարակազիտութեան և Այսակել պիտի նկատել, որ կօնաը իւր վերոյիշեալ ստատիկայի վերաբերեալ ուսմունքը հասարակական հկարգի ուսումնական է անուանում:

Կօնափ ստեղծած զիտութեան՝ հասարակազիտութեան (սոցիօ-

1) Տես՝ Պրոֆ. Ն. Կարէեւ, «Գաղափարների, հաստատութիւնների և անձնաւորութեան գերը պատմութեան մէջ», թարգմ. տուսերէնից Ա. Գասպարեան, եր. 36—36:

զիայի կամ «սօցիալական ֆիզիկայի» երկրորդ մասին՝ դինամիային յատկացւում է հասարակութեան յառաջխաղացման (progres) օրէնքների ուսումնասիրութիւնը: Կօնտը համարում է մարդկային յառաջադիմութեան հիմնական գաղափարը առաջին անխուսափելի հիմունքը ամեն սօցիօգիական իսկական օրէնքի (Կօնտ, 4րդ հատոր, եր. 128): Այս դինամիկան առլիս է նոր զիտութեան՝ սօցիօգիային ամենավճռական փիլիսոփայական բնոյթ, մարդկութեան շաբունակական յառաջադիմութեան կամ աստիճանական զարգացման գաղափարին զերակշռութիւն տալով, որով ամենից շատ սօցիօգիան տարբերում է կենսաբանութիւնից (առև 4րդ հատոր եր. 190—191): Դինամիկայի համար կօնտն առում է, թէ պիտի վերլուծան ենթարկել մարդկութեան առաջադիմական ոյժի յատուկ մղումները, որոնք մեր բնական միտումների համազործակցութիւնից են առաջ գալիս, որոնք մղում են մարդուն բարելաւել, ամէն տեսակէտից զիտած, իւր պայմանները. ուրիշ խօսքով առած, միշտ զարգացնել ամէն տեսակետից իւր փիզիքական, բարոյական, մտաւոր ամբողջ կեանքը, ինչքան իւր զոյութեան պարագաները թոյլատում են (4րդ հատոր, եր. 191):

Դինամիկ սօցիօգիայի իսկական ոգին կայանում է, ըստ կօնտի, ըմբռնել հասարակական վիճակները, որոնք միմեանց յաջորդում են, որպէս նախորդի անհրաժեշտ արդիւնք և յաջորդի անխուսափելի մղիչը: Ներկան յղի է ապագայով: Ուրիմն աստ զիտութիւնը պիտի յայտնաբերէ այն մնայուն օրէնքները, որոնք իշխում են այս շարունակական յաջորդականութեան վրայ և որոնց ամբողջութիւնը որոշում է մարդկային զարգացման հիմնական ընթացքը: Մէկ խօսքով, սօցիալական գինամիկան ուսումնասիրում է յաջորդականութեան օրէնքները, մինչդեռ սօցիալական ստատիկան քըն-

ում է համակեցութեան (coexistence) օրէնքները: Ուրիմն հասարակագիտութեան այս մասը զբաղւում է մարդկային հասարակութեանց զարգացման յաջորդական աստիճաններով և այն զարծոներով, որոնց ազդեցութեան տակ այդ աստիճանական փոփոխութիւնները կատարուում են:

Հառարակութեան կետնքի տարբեր կողմերը մի միութիւն են կազմում և անբաժան են, այսինքն միեւնոյն ոգով են առզորուած: Եթէ որևէ կողմը ենթարկւում է յառաջադիմութեան, ապա անխուսափելիորէն եւ միւս կողմերը նոյն վիճակին են ենթարկւում: Հասարակական շարժումը, որ ուսումնասիրութիւնը է դինամիկայի կողմից, որոշ օրէնքների և որոշ աստիճանասիրութիւնները — քրիստոնեական համամարդկայնութեան, պարսկական պիտութեան բոնակալութիւնից — Հիւսիսային Ամերիկայի նահանգների ազնամարդկայնութեան, անկարելի է անմիջապէս անցնել գիտական աշխարհայեցողութեան. հին աթէնացու նեղ հայրենասիրութիւնէց — քրիստոնեական համամարդկայնութեան, պարսկական պիտութեան բոնակալութիւնից — Հիւսիսային Ամերիկայի նահանգների ազնամարդկայն սահմանադրութիւնների ազտառութեան, հին խստապահանջ իրաւունքից — զարգացած ազգերի մելք օրէնսդրութիւններին, ստրկութեան վրայ հիմնուած տնտեսական կարգից ընկերակցութեան սիստեմներն 1): Այս հակունեաց վիճակների մէջ անպայման պիտի անհրաժեշտ աստիճաններ զգութիւն ունենան եւ այն էցն դինամիկայի օրէնքները ուսումնասիրում են էօլիցիայի այն օրէնքները, որոնց ենթարկուած են հասարակական հաստատութիւնները: Ինքը կօնտը ընդունելով որ մարդկային հասարակութեանց սիր՝ վերոյիշեալ ստատիկայի բնորոշման հետ, հասարակագիտութիւնն անւանում է մարդկային հասարակութեանց կարգի եւ յառաջադիմութեան գիտութիւն:

Նոր զիտութեան այս բնորոշումը թէպէտեւ ըստ էութեան այժմ էլ ընդհանրապէս ընդունում է, սակայն ձեւական տեսակէտից քրոշ սոցիօգրեսի թէորիա (պլոգրեսի թէորիա) և միացնելով սօցիօգիայի միւս մասութիւն (պլոգրեսի թէորիա) սօցիօգիայի միւս մարդկային հասարակութեանց կողմից քննադատութեան է ենթարկւում: Այսպէս, սօցիօգիների կողմից քննադատութեան է ենթարկւում: Այսպէս:

1) Տե՛ս՝ Պրօֆ. Ն. Կարեեւ, *ibid.* եր. 36:

ամերիկան սօցիոլօգ Կարլ Էլվուլդը և նրան էլ հետեւելով ռուս սօցիոլօգ Մ. Կովալեսկին զոնում են աւելի յարմար՝ պնուանել — հասարակագիտութիւնը հասարակութեան կազմակերպութեան (օրգանիզացիա) և զարգացման (էվոլյուցիա) զիտութիւն 1): Տեքմինի այս փոփոխութիւնը էլվուլցը նրանով է հիմնաւորում, որ կազմակերպութեան և զարգացման զարգափարներն աւելի լայն են, քան կարգի և յառաջագիմութեան զարգափարները: Ակարզը ենթագրում է մետյուն, հաստատուն և ներգաշնակ դրութիւն այն տարրերի, որոնցից բազկանում է հասարակութիւնը, մինչզեռ կազմակերպութիւնը հաշտաւմ է հասարակութեան մասերի իւրաքանչիւր կարգաւորման, նրանց իւրաքանչիւր փոխյարարերութեան հետ 2): Կովալեսկին իբրև ապացոյց է ընդում տուեալ տեսութեան այն, որ ուստ հասարակութեան մէջ^{*)} ինչպէս եւ իւրաքանչիւր հասարակութեան մէջ, գոյութիւն ունի կազմակերպութիւն, բայց նրա կազմի մէջ գտնուած բոլոր տարրերը ներգաշնակութիւն չեն կազմում: Ուրեմն, չկայ հասարակութիւն առանց կազմակերպութեան, բայց ոչ իւրաքանչիւր հասարակութիւն ունի կարգ: «Սօցիալական կազմակերպութիւնը էապէս հասարակական կառուցուածքին կամ հասարակական կազմին հաւասար նշանակութիւն ունի: Կարգի համար ենթարկուած է հասարակական ներգաշնակութիւն, սակայն այդպիսին զոյութիւն չունի ժամանակակից հասարակութեան մէջ: Ներկայ հասարակութիւնը զտնուում է այնպիսի դրութեան մէջ, եթե չկայ կարգ այլ կայ միայն կազմակերպութիւն: Այս պատճառով անհրաժեշտ է կարգ բառը փոխարէնել աւելի լայն բառով — կազմակերպութեամբ» 3):

Նոյն վերաբերում է նաեւ յառաջազիմութեան (պրօզրես) տերմինին: Զի կարելի պնդել, որ հասարակութիւնը միշտ յառաջազի-

2) Տես՝ Մ. Կովալեսկի, *ibid.* եր. 6:

1) Մ. Կովալեսկի, *ibid.* եր. 6:

^{*)} Գիրքը ապուած է 1910ին, ուրեմն հին ռէժիմի օրով:

3) Մ. Կովալեսկի, *ibid.* եր. 6—7:

մական դրութեան մէջ է զանուում, այն է որ հասարակական չարիքները ոչնչանում են կամ կրծառաւում և համայնակեցութեան դրական կողմերը բազմանում: Այս պատճառով էլ աւելի լաւ է յառաջազիմութեան տերմինի տեղ գործածել աւելի անորոշ զարգացում տերմինը, որը չի ենթագրում անպայման կատարելազործում, փոփոխութիւն գէպի աւագոյնը, այլ ամեն տիպի փոփոխութիւն (ասս, անդ եր. 7) 1): Սակայն ինձքան էլ տերմինները փոխուն, գարձեալ սօցիոլոգիան ըստ էութեան, ուրեմն բովանդակութեան կողմից դիտած, մեռմ է հարազատ իւր հիմնագրի կողմից արաւած որոշման:

Որպէսպի սօցիոլոգիայի ուրոյն մեղք միւս զիտութիւնների շարքում որոշել կարողանանք, պիտի զիմենք զիտութեանց այն կամ սիֆիկացիային, որով կօնտը զիտութիւնները զասաւորում է: Մաթեմատիկա, աստրօնոմիա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանութիւն, սօցիալական ֆիզիկա (սօցիոլոգիա), ասու երեւոյթները զասաւորուած են ըստ իրենց ամենից մեծ չափով ունեցած պարզութեան և ընդհանրութեան, որոնք քանի զնում յաջորդաբար աւելի մասնազիտանուած կամ բարգանուած են 2): Օրինակ, բոլոր քիմիական երեւոյթները անհրաժեշտաբար աւելի բարդ են քան ֆիզիքական երեւոյթները: Նոքա սօցանից կտիուած են, առանց սրանց վրայ ազդելու: Իրօք, իւրաքանչիւր ոք գիտէ, առում է կօնտը, որ քիմիական իւրաքանչիւր գործողութիւն ենթակայ է ամենից առաջ ծանրութեան, տաքութեան, ելի քտրականութեան ազդեցութեան: Սակայն ինչ որ կարեւոր է առաջ և պիտի չելաւ, իւրաքանչիւր զիտութիւն թէպէտեւ իրեն կանխող զիտութիւններից է կախուած, սակայն նա ունի, ինչպէս օրինակ այս գէպում քիմիան, իրեն առանձնայացուկ երեւոյթները և օբէնքները, որոնք եւ հէնց քիմիան մի ուրոյն զիտութիւն են դարձնում (ասս *ibid.* Ա. հատոր, եր. 51): Նոյն

1) Պրօֆ. Ն. Կարէեւը վերեւում մեր մատնանշած և մեր թարգմանած գրքում յատուկ զբաղւում է պրօզրես և էվոլյուցիա տերմինների յարաբերութեան խնդրով: Տես՝ անդ, եր. 51—55:

2) Տես՝ August Comte, *ibid.* Ա. հատոր, եր. 48:

է պատահում նաեւ միւս զիտութեանց հետ։ Մաթեմատիկան զարդ ունի ամենաընդհանութեան ամենալավագութեան (ա. բարբակա) երեւոյթների հետ, որոնք ազգում են բոլոր միւս զիտութեանց երեւոյթների վրայ, առանց նրանցից ազգուելու։ (Տես այս մասին Comte. *ibid.* Ա. հատոր, եր. 53, 58)։ Սօցիալական և բնդկապատկեր ամենից մասնակի, ամենից բարգ, ամենից կանկրետ երեւոյթներն են, որոնք եւ ամենից շատ են հետաքրքրում մարդուն։ Այս երեւոյթները կախուած են, շատ կամ քիչ չափով իրենց կանխող երեւոյթների, առանց նրանց վրայ որևէ ազգեցութիւն ունենալու (աես, *ibid.* Ա. հատոր, եր. 53)։ Սօցիալական երեւոյթներում նկատում ենք ամենից առաջ անհատի բնախօսական օրէնքների ազգեցութիւնը, որոնցով նրանք պայմանաւորուած են։ Ազագոյութիւն ունեն առանձնայատուկ երեւոյթներ, որոնք մարդկային հաստրակութեան իրեւ այդպիսուն յատուկ են, որոնք առաջ են զալիս հասարակութեան մէջ մարդկանց միմեանց վրայ փոխազդելու հանգամանքից (աես անդ, Ա. հատոր, եր. 52)։ Ուրեմն սօցիալական Փիզիկան (սօցիօլոգիան) փօխանակ մի հասարակ յաւելուած լինելու բնախօսութեան, ըստ Կօնտի, պիտի ըմբռնել իրեւ մի լիտկատար առանձին զիտութիւն, որն անմիջապէս հիմնուած է իրեն յատուկ հիմքերի վրայ, բայց որը խորապէս կապուած է թէ իւր եւակէտում եւ թէ իւր շարունակական զարգացման ընթացքում, կենսաբանական փիլիոփայութեան ամբողջ համակարգութեան (աես. Comte. *ibid.* 4րդ հատոր, եր. 257)։ Ուրեմն գիտութիւններից իւրաքանչիւրն անկրաֆելչտ օժանդակ ունենալով իրեն նախօրդող զիտութիւնները, ունի անշուշտ նաեւ երեւոյթներ, որոնք միայն իրեն յատուկ օրէնքներով կարող են բացատրուել։

Արդ, վերեւում յիշած ընդհանուր փոխազգկեցութեան և ներդաշնակութեան երեսոյթը նկատելի է նաև, օրգանական աշխարհում, սակայն նա շատ աւելի ընդարձակ և կարեւոր դեր է խաղում հասարակական օրգանիզմում, որովհետեւ, ինչպէս ասացինք, վերոյիշեալ CONSENSUS-ը այնքան աւելի է շեշտակի հանդէս զալիս, ինչքան նա զործագրուում է աւելի բարդ և պակաս ընդհանուր (ուրիմի մասնակի) երեսոյ ների վերաբերմամբ։ Աստծից հետեւում է, որ քանի

հասարակական երեւոյթների մէջ իշխում է մատնանշուած փոխազդքեցութեան և ներգաշնակութեան փաստը, միանգամայն անիմաստ է հասարակական կեանքի կողմերից որևէ մէկը զատել և միւս հասարակական երեւոյթներից բոլորովին անջատ, առանց նրանց հետ որևէ կապակցութեան մէջ գնելու, ուսումնասիրել:

Մենք վերեւում ասացինք, որ սօցիօլոգրառաւ, և ու զբաղվում է մարդկային հասարակութեանց զարգացման յաջորդական շրջաններով։ Արդ, ենթազրենք թէ նրա զբազման նիւթն է մարդկային հասարակութեան աւտատական (ֆիզոդատական) շրջանի նկարագրութիւնը։ Այսաեղ պիտի մտնի այն ամէնը, ինչ որ զարգացման այս շրջանում լիտկատար բնութեազրում է մարդկութեան ձեռք բերած հասարակակայնութեան փուլը։ Մենք պիտի ծանօթանանք մարդկանց աշխարհացքի, միմեանց հետ ունեցած յարաբերութեանց, ըմբռնման, հասարակական խմբակցութիւնների մասսայական նողերանութեան, անտեսական, իրաւական, զաղաքական ըմբռնութեանի հետ։ Նրանց հասարակական ձեւերի, կուլտուրական կառուցուած քնների զարգացման տուեալ աստիճանի հետ։ Այս բոլորը միմեանց վրայ փօխագարձաբար ազդելով մի միութիւն կազմելով, ցուցագրում են մեզ, թէ առևել զարգացման շրջանում ի՞նչ տիպի հասարակութիւն գոյութիւն ունի և ուրեմն նաև մեզ ծանօթանում են նրա հետ անհրաժեշտաբար գոյութիւն ունեցող և նրա աղղեցութեան առկ ապրող մարդկային տիպի հետ։ Մենք գիտենք, որ այս հասարակութեանց տիպերը, զանազան գործոնների ազդեցութեան տակ — որքնք նոյնպէս սօցիօլոգիալի զարդան նիւթն են, քանի որ սօցիալական դինամիկայի բաժնի մէջն են մանում — յաջորդական կերպարանափոխութեան և զարգացման են ենթարկուում։ Հասկանալի է, որ հասարակութեան այս կերպարանափոխուած վիճակի գէպքում այն ըոլորը, ինչ որ մենք յիշեցինք աւտատական շրջանի ժամանակ, պիտի նոյնպէս կերպարանափոխման ենթարկուեն։ Արդ, ենթազրենք թէ զանազան գիտութիւններ (կրօնների պատմութիւն, գիտութեանց, իրաւունքի քաղաքական հասարա- թեանց, գողովրդական անտեսութեան պատմութիւն ևայլն) ուզում են ուսումնասիրել մարդկային հասարակութեանց այս տարրեր կուլտուրական կառուցուած քնները, եթէ այս կառուցուած քններից իւրա-

քանչիւրը հասարակական կեանքի միւս կողմերից բոլորովին մեկուսացած ուսումնասիրութիւ, ապա նրա եզրակացութիւնները ամեննեւին չեն կարող իրականութեան հարազատ պատկերը տալ, որովհետեւ օրինակ կրօնների, քաղաքական հաստատութեանց զարգացումը ոչ թէ անկախ և չեզոքացած է ընթանում, այլ ամենասերտ յարսիերութեան մէջ է տուեալ հասարակութեան տիպի զարգացման և ուրիշն նրա բոլոր այլ արտայայտութիւնների հետ ու այս ամէնն այսպէս առած մի ձուլուածք է ներկայացնում: Եւ եթէ մենք ուզում ենք օրինակ կրօնների զարգացման պատմութիւնը կամ իրաւունքի զարգացման պատմութիւնը ուսումնասիրութեան նիւթ դարձնել, պիտի այդ ճիւղերի վերաբերեալ փաստերի զասաւորման և մեկնաբանման ժամանակ դեկադարուենք մարդկութեան անցած այն հանրային վիճակների ամբողջական նկարագրութեամբ, որն ի միջի այլ խնդիրների, կազմում է սօցիօզիփայի առարկան: Այսպէս վարուելով մենք պիտի կրօնների, պետական հաստատութեանց զարգացման փուլերը սերտ առնչութեան մէջ դնենք — համաձայն ստատիկայի վերոյիշեալ փոխազգեցութեան և համերաշխութեան օրէնքի — մարդկութեան ընդհանուր հասարակական զարգացման փուլի հետ: Հակառակ կերպով վարուելով, այսինքն խնդիրը մեկուսացնելով, մենք կամ բազմապիսի թիրիմացութեանց մէջ կ'ընկնենք կամ սիալ ու բռնազբուիկ բացարութեանց աելի կը տանք: Եւ ահա սօցիօզիան հանդէս է զալիս իրեւ դեկազար, ուզիւ բոլոր այն մասնակի գիտութեանց վերաբերմամբ, որոնք հասարակական երեւոյթների մի որոշ տեսակէտից մօտենալով, քննութեան նիւթ են զարձնում: Դեկավարողի և ուղղիչի գերը նրանից է բխում, որ սօցիօզիան հասարակութեան տուեալ վիճակի լիտկատար պատկերը տալու նկատումով, այդ տարբեր և միակողմանի տեսակէտները իրենց փոխադարձ կախման և առնչութեան մէջ զիտելով և հասարակական կեանքի պայմանների գումարն ի նկատի ունենալով, խնդիրը հարազատ օքտեկտիւ իրականութեան աւելի է մօտեցնում:

Այստեղ կարեւոր է յատկապէս գիտել սօցիօզիփայի ունեցած յարաբերութիւնը պատմազիտութեան հետ, իբրեւ հասարակազիտութեան ամենամօտ գիտութեան: Պատմազիտութիւնը, ինչպէս յայտնի է, ուսումնասիրում է մարդկանց, իբրեւ սօցիալական էակ-

ների զարգացման փաստերը, որոնք սակայն որոշ ժամանակում և որոշ վայրում սեւեռուած են 1): Այսինչ ազգի կեանքը, այսինչ կոլեկտիւ անհատականութեան կեանքը, վերցրած նրա զարգացման այսինչ մօմէնտում, է այն առարկան, որ նա ուսումնասիրում է 2): Պատմական փաստերի այս անհատականացման հանգամանքը նրանց տալիս է վերին աստիճանի կենդանութիւն և զունեղութիւն, Հասարակագիտութիւնը, որ հասարակութեանց տիպեր է ստեղծում և ցուցադրում է այն սկզբունքները, որոնցմով այդ տիպերը յաջորդաբար իրենց զարգացման ընթացքում միմեանց հետեւել են, բնականաբար իւր ամուր պատունդանը պիտի ունենայ պատմազիտութեան ընձեռնած բազմապիսի փաստերը և այս փաստերի վրայ պիտի կառուցանէ իւր ընդհանրացումները՝ վերաբերեալ հասարակութեանց ստատիկային և զինամիկային:

Ինչքան նա իւր կենդանի յարաբերութիւնը պատմական իրականութիւնից կորի, այնքան նրա ընդունած սկզբունքները հասարակութեան զարգացման վերաբերեալ և հաստատած տիպերը քմահած ընոյթ կ'ունենան: Սօցիօզիփան, թէպէտեւ երբեմն յենուում է պատմազիտութեան ընձեռնած փաստերի վրայ, սակայն նա զրանով զիո պատմութիւն չի գառնում: Նա չի զրադրում մասնակի կոնկրէտ փաստերով, այլ մատնանշում է այդ մասնակի փաստերի միջոցաւ իրականացած մասնակի հասարակութեան ընդհանուր վիճակների, ինչպէս նաեւ այդ վիճակների զարգացման ընթացքում պատմութեան մէջ յայտնաբերուած զործոնների վրայ, որոնց միջոցով միայն հասարակական նախնական տիպերը աւելի զարգացածներին են փոխանցում: Մի անգամ, որ հասարակազիտութիւնը այս նույածներն արել է, նա իւր հերթին կարող է օժանդակ միջոց զառնալ պատմական եղակի փաստերի լուսաբանութեան ժամանակ: Օրինակ, եթէ աւատական դարաշրջանի հասարակական կառուցուածքը որոշուած է, մենք կարող ենք այդ ժամանակում տեղի ունեցած

1) Sieu` Ernest. Bernheim. Lehrbuch der historischen Methode und der Geschichtsphilosophie. 1908. եր. 9 և 157.

2) Sieu` E. Durkheim. Ibid. եր. 329.

մասնակի փաստերից շատերի մեկնաբանութեան համար զիմել հէնց դրանց ժամանակակից հասարակութեան տիպին, որն անշուշ իւր անջնջել գրոշմն է զրել այդ եղակի դէպքերի վրայ և ըստ այնմ դրանց կերպաւորել: Մի որևէ պատմական երեւոյթ, որ ենթագրենք տնտեսական բնոյթ ունի, շատ անզամ իւր մեկնաբանման համար կարիք ունի նաև այլ ափակի, ոչ զուտ անտեսական երեւոյթների մատնանշման և միմիայն սօցիօգիտայի մէջ—որը տուեալ հասարակութեան ամբողջական պատկերն է առաջի որևէ զարգացման ըջանում և ուրեմն այդ հասարակութեան մէջ տեղի ունեցող տարրեր երեւոյթների փոխազդեցութիւնն է ցուցադրում— վերոյիշեալ անտեսական երեւոյթը իւր իսկական գոյնով հանդէս կը զայ:

Թէ սօցիօգիտան ինչ բնդմնաւոր ազդեցութիւն ունի պատմազիտութեան վրայ, կարելի է ասենի հէնց վերջինիս բովանդակութեան ընդլայնման մէջ: Մինչդեռ նախկին պատմազրութիւնը զբաղւում էր միայն քաղաքական դէպքերի յաջորդական արձանազրումով, համարելով դրանք ամենահայտնի իրադարձութիւնները մարդկային կեանքի, ներկայումս կուտարայի պատմութիւնը, անշուշ հասարակագիտութեան զօրեղ ազդեցութեան տակ, զանում է, որ տուեալ հասարակութեան քաղաքակրթութեան բոլոր կողմերը, իրենև միեւնոյն ձևուածքից առաջ եկած, պիտի հասարակակէս պատմական ուսումնակրութեան առարկայ զանան, հետեւելով կօնտի այն սկզբունքին, թէ հասարակական կեանքի բոլոր կողմերը մի անքակտելի ամերջութիւն են կազմում, փոխազդեցութեան և համերաշխութեան մէջ են զտնուում: Սօցիօգիտան սօցիալական դինամիկայի մէջ հասարակութեան ունեցած զարգացման յաջորդական փուլերը ներկայացնելով, նոյնպէս օգնում է պատմազիտութեան՝ տիրապետելու այն հսկայական քանակի պատմական դէպքերին, որոնք զարգացման այդ փուլերի համապատասխան դասաւորուելով միայն ստում են իրենց իսկական իմաստը և մենք ըմբռնում ենք, թէ ինչպէս զանազան զօրծուների (անտեսական, քաղաքական, կրօնական և այլն) ազդեցութեան տակ — որոնց ուսումնակրութիւնը պատկանում է նոյնպէս հասարակազիտութեան — մարդկային կուլտուրական ստեղծագործութիւնները իրենց հետազայ ըջաններում շատ աւելի բարդ են ունենում քան նախնական ըրջաններում: Պատմական

զործուների ուսումնասիրութիւնը իւր հերթին մեզ պարզաբանում է, թէ ինչպէս մարդկութեան ունեցած օրոյ գարաշրջաններում, ուր այդ զործուներից ոմանք զօրեղ տիրապետութիւն ունեն, (օրինակ կրօնական բարենորդութեան (ռէֆորմացիայի) ըրջանում կրօնական զործուները) հասարակական կեանքի բոլոր երեւոյթները այն գործուներից զօրեղ գունաւորում են ստանում: Ուրիշ խօսքով ասած, պատմական փաստերի իմաստի լուսաբանման մէջ սօցիօգիտական օրէնքները հսկայական նշանակութիւն ունեն, առանց օրոնց այդ փաստերը միայն յաջորդող երեւոյթների մի շարան կը ներկայացնէին: Պարզ է ուրեմն պատմազիտութեան և սօցիօգիտայի փախադարձ առնչութիւնն ու օժանդակութիւնը:

Սօցիօգիտայի դրազման զիսաւոր պրօբլեմներիցն են նաև այն հաստգութիւնները, թէ ի՞նչ եղանակով են կազմուել քաղաքական, իրաւական, բարոյական, տնտեսական, կրօնական հաստատութիւնները, մի հաւատք, ընտանիք և այլն, ի՞նչ պատճառներով են սրանք պոաջ եկել և զարգացել, ի՞նչ պիտանի նպատակի են սրանք պոաջ եկել և զարգացել, ի՞նչ պատահի նիւթի կարող է առաջանալ 1): Այս ինդիրները կարող են կազմել սօցիօգիտական մօնոգրաֆիաների նիւթ, որն ինչպէս յայտնի է, մի հատիկ պիտանի է նկարազրում: Սակայն հասարակական այս կարեւոր հաստատութիւնների ըմբռնման և բացատրութեան համար կարեւոր է ամենից առաջ իմանալ, թէ ի՞նչ զանազան տարրերից են բաղկացած այդ հաստատութիւնները, ի՞նչ պատճառներից են զրանք կացած եկել և որն է զրանց *raison d'être*: (Durkheim. անդ՝ երաշտական 328): Արդ, ոչ մէկը այս հաստատութիւններից պատմական իրավական մէջ միւսներից անկախ զոյսութիւն չի ունեցել և ոչ էլ անկախ զարգացել, այլ մշտական փոխազդեցութեան մէջ է եղել միւս հաստատութեանց հետ:

Մարդկութեան զարգացման տարրեր ըրջաններում զրջանցից իւրաքանչիւրը տարրեր սկզբունքներ է մարմնացրել և ուրեմն իրավական կարգութիւնների վրայ կառաւցուել: Եւ այժմ եթէ մենք ուսարբեր կիմունքների վրայ կառաւցուել: Կրօնի և այլն ծագման, զում ենք օրինակ ընտանիքի, պիտութեան, կրօնի և այլն ծագման,

1) Տես Durkheim. *ibid.* եր. 326, և Մ. Կովալեսկի, *ibid.* եր. 16:

զարգացման, նրանց ունեցած տարբեր էռթեան ու ձեւի խնդիրները ուսումնահամար պիտի զիմենք սօցիօգիայի այն մասին (սօցիալական գինամիկային), որը զբաղւում է մարդկային հասարակութեան տիպերով և ցուցադրում այն գործօնները, որոնցով այդ տիպերը յաջորդական զարգացման շրջաններ են ունեցել: Այս շրջաններից իւրաքանչիւրում, օրինակ ընտանիքը ուրոյն բնոյթ է ունեցել և կուլտուրայի միւս տարրերի հետ (տնտեսական կազմակերպութիւն, կրօն և այլն) փոխազդեցութեան մէջ գտնուելով մի ամբողջութիւն է կազմել: Այն զործօնները, որոնք պայմանաւորել են և առաջացրել նոր տիպի հասարակական կենցաղ՝ իւր համապատասխան քաղաքակրթութեամբ, ազգել են նաև նոր տիպի ընտանիքի ըմբռնման ու կազմակերպութեան վրայ: Այնպէս՝ որ թէպէտեւ մենք իրաւունք ունենք և կարող ենք մի որեւէ հասարակական հաստատութիւն, նրա սկիզբը, զարգացումը ուրոյն հետազտութեան նիւթ դարձնել, սակայն նրա առաջացրած հարցերի լուծումը և հարազատ բացարութիւնը կրօնին մարդկային հասարակական համակեցութեան այն ընդհանուր զիտութեան մէջ, որը սօցիօգիա է կոչում, որն և պիտի անպայմանօրէն դեկալար հանդիսանայ այսպիսի մասնակի խնդիրների մեկնաբանման ժամանակ: Այս պատճառով էլ մեզ ճիշտ է թւում Goblotի այն կարծիքը, որ զոյութիւն ունի միայն ընդհանուր սօցիօգիա (*sociologie générale*), որի օրէնքները բոլոր սօցիալական երեւոյթների վրայ իշխում են 1): Սօցիալական այս տարբեր երեւոյթների ուսումնասիրութեան են նուիրուած ուրոյն զիտական զիսցիպիլինաներ, որոնց արդիւնքները այնքան արդիւնաւէտ են, ինչքան նրանք հասարակագիտաութիւնից դեկալար սկզբունքներ են փոխ առել և մարդմասքրել իրենց ուսումնասիրութեան ենթակայ յատուկ խնդիրների մէջ:

Սակայն սօցիօգիան, ինչպէս և իւրաքանչիւր զիտութիւն, մեր առօրեայ զործնական կեանքի համար ունի հակայական նշանակութիւն: Ուսումնասիրելով մարդկութեան գարերը ընթացքում ունեցած զարգացումը իւր օրինաչափութեան մէջ, նա մեր մարդագուշութիւնը լայնացնելով ու իւրացնելով, մեզ վերին աստիճանի

զգացատութեան է կրաւիրում և ցուցադրում այն անհրաժեշտ սահմանները, որոնց մէջ մարդու կամքն ու ցանկութիւնները սահմանափակուած են: Մատանանշելով այն տարկայական զարգացման փուլերը, որոնցով հասարակական հաստատութիւնները և կուլտուրական կառուցուածքները անհրաժեշտաբար անցնում են ու անցներական կառուցուածքները անհրաժեշտաբար անցնում են ու անցնելու են, նա մեզ իւր հեղինակաւոր զգուշացումներով հեռու է պահում այն սին ցնորդքներից, թէ բաւական է լաւագոյնի մասին մեր ունեցած ցանկութիւնները, որպէսզի զրանք իրականութիւն դառնան: Հասարակական կեանքը եւս ուրեմն ունի իւր երկաթեայ օբյեկները, որոնք մեր կեանքի իրաքանչիւր մօմէնտում իրենց զգալ են տալիս: Այս հանգամանքը կարող է շատերին յաւստիսութեան մղել, ենթազրելով որ զրանով մեր ստեղծագործական թափը իւր արժէքը կորցնում է: Մինչդեռ ընդհակառակը, զրանով այդ ստեղծագործութիւնը թողնելով անիրականալին, իւր իսկական արգասաւոր ասպարէզի մէջ է գրւում: Այս տեսակէտից իրաւամբ նըղասաւոր ասպարէզի մէջ է գրւում: Այս տեսակէտից իրաւամբ նըղասաւոր է պրօֆ. Բարաքը, որ պատճական օրէնքներից վախենալու նոյնքան քիչ է հիմնաւորուած, ինչպէս գետերմինիզմից վախենալու ու սիսալ է այն եզրակացութիւնը, թէ պատճութեան օրինաչափութիւնը պայմանաւորում է ժողովուրդների մօտ ինքնորոշման ու էնսերզիայի բացակայութիւնը: Ինչպէս որ մանկավարժութիւնը հնարաւոր է միայն կանխորոշեալ և ոչ թէ պատճական կամքի դեպքում, այդպէս եւ իսկական քաղաքականութիւնը (պոլիտիկա) անպայման ենթագրում է պատճական դէպքերի կանխորոշող ընթացքը 1):

Հայ մտաւորականի համար, որը կոչում է զգում հայ իրականութեան մէջ միալ և նրա համար զործել, նոյնպէս ահազին նշանակութիւն ունի, թէ տեսական և թէ գործնական տեսակէտից զիտած, հասարակագիտաութեան սկզբունքների և օրէնքների իւրացումը: Տեսականում նա հնար կ'ունենայ, մեր իրականութեան կոնկրետ պայմաններն ու փաստերը, այդ սկզբունքների ու օրէնքների մի-

1) Ed. Goblot. ibid. եր. 270.

ջոցով ուսումնասիրել և մեկնաբանել: Սա մի ասպարէզ է, ուր նա հանդէս կը գայ իսկապէս իբրեւ ստեղծագործող, որովհետեւ հայ անցեալի և ներկայի այն անհամար խնդիրները, որոնք մինչեւ այժմ ուսումնասիրութեան նիւթ չեն դարձած. Նա կարող է: օժտուած հասարակագիտութեան առողջ առեալներով, մի նոր տիպի լոյսի տակ հետազոտել և դրանով իւր լուման ձգել ընդհանուր զիտական գանձարանի մէջ: Գործնական ասպարիզում, հասարակագիտութեան ընձեռնած լայն հորիզոնները հայ զործին զերծ պահելով մեր ապարախտ ազդի վրայ ամեն տիպի փորձեր կատարելուց, նըրան, մարդկութեան ունեցած պատմական հարուստ իրականութեան միջոցով իրազէտ դարձնելով, կը զրդէ իր բոլոր ոյժերը զործադրել, լաւազարնի հնարաւոր և կարելի ձեւերը մարմնացնելու մի իրականութեան մէջ, որն անսահման բարդութիւն է ներկայացնում և ուրեմն որը պահանջում է վերին աստիճանի զգուշութիւն, վերոյիշեալ խնդիրների բարեյաջող լուծման համար:

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Պատմագիտութեան իդէալական նպատակն է վերականգնել ժամանակների մի շարանի մէջ մարդկութեան ամբողջական կեանքը¹⁾: Մինչդեռ միւս զիտութիւնները, որոնք զբաղւում են հասարակութեան կեանքով, այդ կեանքի զանազան կողմերն են ուսումնասիրութեան առարկա, դարձնում, պատմագիտութիւնը նպատանի բարեյաջող լուծման կեանքը (ո՞չ սիստեմատիկ, կազմում է մարդկութեան ամբողջ իրական կեանքը (ո՞չ սիստեմատիկ հասարակագիտութիւնը) իւր բոլոր կողմերով — միաժամանչական հասարակագիտութիւնը) իւր ամբողջ զարգացման ընթացքում՝ վերակենացնացնել: Սակայն մարդկութեան կեանքը ընթացել է սկզբից և եթ միմիսայն զանազան հասարակութիւնների մէջ, որոնք եւ հանդիսացել են իւր զոյութեան կոուր վարիչներ: Առանձին անհատը և մարդկային ազգը միայն հասարակութիւնների միջոցով են զարում վերոյիւթեալ կոիւր, այդ պատճառով էլ պատմագիտութիւնը իւր ուսումնասիրութեան առարկան է վերցնում մարդուն, որպէս հասարակութեան անգամի, կամ որ մինենոյն է, հասարակութեան՝ որպէս մարդու արտայատման կոլլեկտիւ ձեւի²⁾: Հենց

1) Տես՝ *De la Méthode dans les sciences*. Paris. 1910. Բ. Հրատ. G. Monod. Histoire. Կ. 367.

2) Պ. Բարս. — «Ֆիլոսոփիա պէտորիի կակ սոցիոլոգիա», եր. 8, թարգմ. Ս. Մուհելլա, 1902, Գետերբուրգ: Սոյն վերթը, ինչպէս նաև

մարդկային պատմութիւնը տարբերւում է բնագիտութիւնից նրանով, որ մինչդեռ վերջինս իւր զբաղման առարկան ունի տեսակը, առաջինը հասարակութիւնն է վերջնում իրեւ կենարոն ուսումնա-սիրութեան և որպէստեւ հասարակութեանց կեանքը ենթակայ է զարգացման, ապա ուրեմն մարդկային հասարակութիւններն ու նրանց զարգացումն է պատմագիտութեան առարկան 1): Այս տեսակտից էլ զերմանական ականաւոր պատմաբան է. Բէրնկայմը պատմագիտութեան հետեւեալ կոչումն է տալիս. «Պատմագիտութիւնը մի գիտութիւն է մարդկանց զարգացմանց մասին, նոցա զործունէւթեան մէջ որպէս սօցիալական էակ վերցրած» 2):

Բնական է, որ պատմագիտութեան վերոյիշեալ բնորոշումը խոշոր պիտի խաղայ պատմական իրականութեան մէջ տեղի ունեցող անհամար փաստերի — որոնց ամբողջապէս տիրապետելուն ոչ մի հնար չկայ — ընտրութեան խնդրում, Պատմագէտը ընտրում է զիտակցաբար պատմական անթիւ փաստերի միջից նրանք, որոնք պատմութեան էվոլյուցիայի ըմբռնման կամար մի իրական կարեւութիւն ունեն 3), ուրիշ խօսքով ասած, փաստերն աստ դիտում են հասարակական կեանքի վրայ ունեցած իրենց ազդեցուրեան տեսակէտից 4): «Պատմութիւնը, ասում է Բարտը, որպէս զիտութիւն զործ չունի անհատի հետ որպէս այդպիսին, այլ միայն այն գան է նրանով զբաղւում, ինչքան նրա կեանքը տիպիկական է

հետազում յիշւող է»։ Մայերի աշխատութիւնը ես օգտում եմ թարգմանութիւններից, որովհետեւ բնագիրները, դժբախտաբար, իմ տրամադրութեան տակ չեն գտնւում։

1) Պ. Բարտ, *Ibid.* եր. 4:

2) Ernest Bernheim. Lehrbuch der historischen Methode und der Geschichtsphilosophie. 1908. եր. 157.

3) Stein G. Monod. *Ibid.* եր. 390.

4) Պրօֆ. Էս. Մայեր, — «Պատմութեան տեսական և մեթոդաբանական խնդիրները», 1912, եր. 50, Վաղարշապատ, թարգմ. Գ. Փաբրիէլեան։

հանդէս գալիս շատ մարդկանց կեանքի համար կամ նրա վրայ ազգեցութիւն է անում։ Նապօլէօն I-ի զօրքի իւրաքանչիւր զինուորը միայն այնքան է որպէս պատմութեան օբժեկտ հանդէս գալիս, ինչքան նա իւր մէջ մարմնացնում է ամբողջ զօրքի ոզին։ Նապօլէօն I-ը որպէս պատմութեան օբժեկտ է հանդէս գալիս միայն այն պատմառով, որ նա մասամբ իրականացրեց, մասամբ ուղղութիւն տուեց ֆրանսական ժողովրդի կամքին» 1): Այս խնդրում կտ. Մայերն այսպէս է արտայայտում. «Պատմական չահազրզութեան առարկան կարող է լինել թէ առանձին մարդը և թէ հասարակութիւնը, պատմական գործողութեանց խնդրում ընտրութեան միակ սկզբունքը պատմական գործողութեանց խնդրում ընտրութեան միակ սկզբունքը, է թը, որ կարող է ընդհանուր լինել բոլոր պատմաբաններին, է մարդկային գործերի էվոլյուցիայի մէջ խաղացած դեր։ Պիտի պահպանել այն անձանց և այն գեպքերը, որոնք էվոլյուցիայի ընթացան պահանձնում են այդպիսի կերպով ազգել են» 3), որովհետեւ առանց այդքի վրայ նկատելի կերպով ազգել են» 3), որովհետեւ առանց այդքի պահանց և գէպքերի յիշատակման՝ անհնար է նկարագրել էվոլյուցիան։

Այս ազգեցութեան տեսակէտից էլ քաղաքական պատմագիրները իրենց երկերում առաջնակարգ և գերիշխող նշանակութիւն տալիս են պետական կազմին ու դրա հետ կապուած քաղաքական իրադարձութեանց, «որովհետեւ քաղաքական միւսութիւնը — պետութիւնը կեանքի լայն իմաստով, դրա հետ հասկացած նաեւ ցեղական (այս խօսքի լայն իմաստով, դրա հետ հասկացած նաեւ ցեղական կեանքը) հանդիսանում է մարդկային կեանքի կազմակերպութեան կեանքը» 4):

1) Պ. Բարտ, *Ibid.* եր. 2: Համեմատել անդ, եր. 192:

2) Էս. Մայեր, *Ibid.* եր. 51:

3) Ch. V. Langlois et Ch. Seignobos. Introduction aux études historiques. Paris. 1917. երրորդ երաւ. եր. 234.

փոխութիւն թողնում է վճարկան ազդեցութիւն կետնքի միւս կողմերի վրայ»¹⁾:

Հասկանալի է, որ ըստ իրենց ունեցած ազդեցութեան, պատմական փաստերի կարեւորութիւն տալն ու ընտրութիւնը իսկապէս մի, թէպէտեւ անխուսափելի, հարուած է մի անզամ կատարուած հարագատ պատմական իրադարձութեանց, որովհետեւ իրօք ըստ ինքեան «բռլոր պատմական գործերը հաւասար իրաւունք ունեն պատմութեան մէջ տեղ զրաւելու»²⁾. ստկայն այս արդար պահանջին պատմագիտութեան, ինչպէս նաև առհասարակ իւրաքանչիւր զիտութեան մէջ, չի կարելի բաւարարութիւն տալ, որովհետեւ անհնար է կառուցել և հաղորդել մի լիակատար իմացութիւն 3), այսինքն այդ եղանակով վարուելով, մենք ի վիճակի չենք բաւարարել իւրաքանչիւր զիտութեան հրամայական պահանջին, այն է՝ ափրապետել իւրականութեան, որովհետեւ մի պատմութիւն, ուր ոչ մի գործ չի բաց թողուի, պիտի պարունակի բոլոր տարբեր մօմէնտների բոլոր ժարդկանց բոլոր ակտերը, բոլոր մասեւմներն ու բոլոր պատհաները⁴⁾: Սա կը լինէր մի լիակատար իմացութիւն, որին ոչ ոք ժամանակի բացակայութեան պատճառով, չէր կարող ափրապետել:

Ընդունելով հանգերձ, որ պատմական փաստերը հասարակական կեանքի վրայ ունեցած իրենց ազդեցութեան տեսակէտից են ի նկատի առնելում, գրանով դեռ այդ փաստերի յատուկ բնոյթը, նրանց տեսակը (եղանակն կամ կօլեկտիւ), նրանց օրինաշափութեան ենթարկուելու հանգամանքը չի որոշում, իսկ այս ինդիքների պարզաբանութիւնը չենց դգայացաւնց է դարձնում պատմապիտութեան առարկայի առանձնայատկութիւնը:

Պատմագիտութիւնը կազմում է մի միայն գոկումենտների մի-

ջոցով, որոնք անցեալ գործերի հետքեր են 1): Ուրեմն պատմական իմացութիւնը մի միջնորդական իմացութիւն է (ուու *connaissance indirecte*), այսինքն նա ի վիճակի չե իւր տուեալներն անմիջապէս փորձի և գիտողութեան ենթարկել. այլ միայն անցեալ գործերի թոգած գոկումենտների միջոցաւ ենք մենք նորա խորամուխ լինում: Դորանով էլ պատմական զիտութեան մեթօդը աարեեւում է բոլոր այլ զիտութիւնների մեթօդից, բացի երկրաբանութիւնից, որոնք կիմնուած են անմիջական զիտողութեան վրայ 2): Ստկայն որպէսզի պատմական գոկումենտների մէջ եղած փաստերը մենք կարողանանք վատահօրէն օգաազործել, պիտի մի ընդհանուր նախադրեալ ունենանք, այն է՝ որ գոկումենտների կեղինակների կողմից մատնաշնուրած անցեալի գործերին: Եթէ երբեմի մարդկութիւնը նման չինէր արդի մարդկութեան, մարդ ոչինչ չէր հասկանալ գոկումենտներից: Սա բայոր գոկումենտային զիտութեանց պատմական գործեր (Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 189): Պատմական գործերը, ասում է G. Monodը, որոնք մարդկութեան կեանքն են կազմում, երկու կատեգորիայի գործերից են բաղկացած. նիթական (matériel) գործեր, մարդկանց ակտեր, միւս կողմից ոգեկան գործեր (spirituel), այսինքն մարդկանց մասձողութիւնները, նրանց զգացումները, նրանց հաւատքը, կրթերը 3): Ստկայն ինչ որ կարեւոր է ասս շեշտել, պատմագիտութիւնը ընդգրկում է այս մարդկային արտայայտութիւնները իրենց փոխագործ յարաբերութեանց մէջ և նրանց միաժամանակեայ ակցիօնի մէջ, որ նրանք ունենում են քաղաքակրթութեան ընթացքի վրայ (Monod. եր. 392):

Առեասարակ պիտի շեշտել, որ սօցիալական կամ պատմական ատոմից աւելի բարդ ատոմ չկայ, մինչդեռ դրան բոլորովին հակա-

1) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 43.

2) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 44. համեմատել անդ, եր. 45, 182: Համեմատել G. Monod. *ibid.* եր. 369.

3) G. Monod. *ibid.* 391.

1) էս. Մայեր, *ibid.* եր. 52.

2) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 227.

3) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 227.

4) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 227—228.

պատկեր է կազմում տիեզերական աստված կամ աստոմների կօմպլեկսը, որն աւելի պարզ ու մեկուսացած է: Պատմութեան մէջ — ասում է Դեկտեսկին — մենք զործ ունենք մարդկանց հսկայական քանակի հետ, որոնք—ընդհանուր մարդկային յատկութեանց հետ—տարբերում են իրենց ուժերով, կարիքներով, զգացումներով, շահերով, հայեացքներով, որոնք անընդհատ փոփոխում են ժամանակի և տարածութեան մէջ: Փոխանակ աստրօնօմիական մեկուսացած և ինքն իրենց անփոփուած կօմքինացիաների, մենք պատմութեան մէջ ունենք մասսաների և անհատների բարդ փոխազդեցութիւններ, առ թիալական խմբակների փոխագարձաբար խճուած խայտարդետ շարքեր, որոնք միմեանց հետ կապակցուած են կամ համերաշխութեամբ կամ անտագոնիզմով ու բաղմապիսի հակազդեցութեամբ 1):

Թացի բարդ լինելու հանգամանքից, պատմական գործերը տեղական բնոյթ ունեն: Նրանք զոյութիւն են ունեցնել մի որոշ էպոխայում և որոշ վայրում 2): Եթէ պատմական գործերը կորցնեն ժամանակի և անդի պարագան, նրանք կը կորցնեն առհասարակ իրենց պատմական բնոյթը: Այս լոկալիզացիան յատուկ է միայն պատմագիտութեան, զրա համար էլ նա ուսումնասիրում է դատ-զատ զանազան ժամանակներում և զանազան վայրերում կատարուած գէպքերը 3): Պատմական գործերը լինում են զանազան աստիճանի ընդհանրացած. ամենալազնանուրները նոքա են, որոնք կարող են համայն լինել մի ամբողջ ժողովրդի և երկար ժամանակ տեսել, մինչեւ մի անձի կատարած մի գործը (տես V. Langlois et Seignobos. եր. 182—183): Պատմաբանի համար էականն այն է, թէ այդ գործերից որը և ինչ չափով է ազդում հասարակութեան կեանքի և նրա զարգացման վրայ: Պատմաբանը պարտաւոր է նկատել, ինչ որ

1) Իւ. Դեկտեսկի, — «Կ վոպքուու օ վոզմունսաստի իստորիչեակավո պրոցնոզա», եր. 26—27.

2) Տես՝ Իւ. Դեկտեսկի, *ibid.* եր. 8 և 11, համեմատել Simmel die Problem der Geschichtsphilosophie. եր. 41—43, տես նաև E. Bernheim. *ibid.* եր. 9.

3) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 183.

կայ ժամանակի, անհատական բան իւրաքանչիւր էպօխայում, իւրաքանչիւր երկրում, իւրաքանչիւր ժողովրդի մէջ: Սակայն այս անհատականը իւր իմաստն է ստացում ու հետաքրքրութեան առարկայ գտնում, երբ զա կապակցութեան մէջ է դրում հասարակութեան ընդհանուր շարժման հետ, կամ այն տարրերի հետ, որոնք մարդկային էվոլյուցիա, ի բազկացուցիչ տարրերն են (տես Monod. *ibid.* եր. 393): Գ. Մօնօգը բերում է իր գունեղ օրինակ այս խնդրում ֆէօդալիզմը, որը զանազան երկրներում և զանազան էպօխաներում նոյն ընդհանուր սօցիալական պայմանների ազդեցութեան տակ է գոյացել: Հասարակազիտութեան կարող է վիճակուել: Շուշագրել այս նման և ընդհանուր պայմանները, սակայն պատմութեան կոչումն է, այս ընդհանուր պայմանների հետ, ցոյց տալ, թէ ինչպէս այս պայմանները արտայայտութիւն են զտել զանազան ձեւերի մէջ ձապոնիայում, Հնդկաստանում, Արեւմտեան Եւրոպայում և այլն 1):

Ուրեմն պատմութեան կառուցման համար մենք պիտի ինկատի ունենանք եւ ընդհանուրը, եւ եզակի գէպքը: Վերին տարինանի թիւրիմացութեանց տեղիք է տուել և կարող է տալ այս եզակի անհատական տիպի երեւոյթների անտես առնելը, կարծելով թէ պատմագիտութեան նպատակն է միայն ընդհանուր գրութիւններ կառուցանել: Մինչդեռ պատմագիտութեան մէջ իւրաքանչիւր անհատական գէպք, որը մեզ համար անտարբեր մի բան չէ ներկայացնում, իրեւ այզպիսին պիտի ուսումնասիրուի և ոչ թէ գունաթափնական գրանք պիտի մացուեն սիստեմատիկ կառուցուած տեսութիւնների մէջ: Հէնց ընդհանրացումների կոչումն է այդ եզակի փաստերը ճշգրիտ կերպով լուսաբանելուն նպաստել, որովհետեւ նրանք նախորդող տուեալ են բոլոր անհատական և տարրեր գէպքերի ըմբռնման համար, այսինքն այս անհատական գէպքերը, որոնք զանազան եզակի պատճառներով իր անհատական են հանդէս եկել և որոնք յատուկ ուսումնասիրութեան կարօտ են, ունեն նաեւ իրենց հիմքում ընդհանուր պայմաններ, որոնք միայն եզակի գէպքերի մէջ ձեւակերպութիւն ստացած են հանդէս գալիս:

1) Տես՝ G. Monod. *ibid.* եր. 393.

«Լիակատար պատմական կօնսորուկիցիոնը ենթադրում է փաստերի ուսումնակարութիւնը երկու ասպեկտի տակ : Մարգկանց մասնագութեան, կեանքի և գործոզութեան սովորութեանց պատկերը անշուշտ պատմութեան մի կարեւոր մասն է», սակայն բոլոր մարգկանց բալոր ակտերի ընդհանրութեան մէջ կայ որոշ մնացորդ, «որ սակայն չի կարելի զուրս ձգել . առաջն փաստն է, որ որոշ ակտեր առեւալ մօմէնափ տուեալ մի մարդու կամ մի խմբակի տկտ են եղել» : Օրինակ, քաղաքական կեանքի ընդհանրութ փաստերի մէջ Պետքատի յաղթութեան կամ Բաստիլի առման մասին խօսք չէր կարող լինել, «որոնք ակցիզանատէլ և անցողակի զործեր են, բայց առանց որոնց չուոմի և Ֆրանսիոյ հաստատութիւնները հասկանալի չէին լինի (Ch. V. Langlois et Ch. Seignobos. *Ibid.* եր. 205—206) . Ուրեմն բոլոր հասարակութեանց և վիճակների և սրանց բոլոր էվոլյուցիաների նոյնիսկ լիակատար սերիան պատմութեան առարկան չեր սպառի : Սրանցից բացի մնում են եղակի փաստեր, որոնց չի կարելի անտես առնել . որովհետեւ նրանք բացարում են վիճակների կառուցումը և էվոլյուցիաների սկզբնաւորութիւնը : Անհօրութեանում է աստ իրը փաստ սոյն պնդումների այն երեւոյթը, որ Ֆրանսիոյ հաստատութիւնները և էվոլյուցիան չի կարելի ուսանել . առանց Դաղբացոց տիրապետութիւնը կեսարի կողմից կամ առանց բարբարոսների ներխուժման : Մենք տեսնում ենք, թէ ինչպէս այնպիսի եղակի դէպք, ինչպիսին բարբարոսների ներխուժումն է, աղում է լեզուների, անհատական կեանքի, քաղաքական հաստատութեանց վրայ 1) : Սա ուրիմն մի ապացոյց է, որ նոյնիսկ հասարական վիճակների ուսումնասիրութիւնը անկատար կը լինի, եթէ մենք դրանց վրայ ազդող եղակի դէպքերն ի նկատի չունենանք : Ընդհակառակը լիակատար պատմական իմացութիւնը պահանջում է այդ երկու տիպի — եղակի և ընդհանուր — երեւոյթները եւս ուսումնասիրութեան առարկայ գարձնել և որ զլաւաւորն է, նրանց միմեանց ենտ ունեցած կապակցութեան մէջ միայն դիտել իւրաքանչիւր պատմական երեւոյթ :

Պատմական իրականութեան մէջ իւր յատուկ տեղն ունի նաեւ

1) *Sbc. Ch. V. Langlois et Ch. Seignobos. Ibid. եր. 212, 214.*

պատմականութեան զաղափարի կիրառումը, որը սխալ կերպով յանախ հակադրուում է պատճառականութեան զաղափարին : Պատմականութիւնը իսկապէս ո'չ այլ ինչ է, եթէ ոչ երկու անկախ պատճառական չվթաների հանգիպումը որոշ տարածութեան և ժամանակի մէջ և այսպիսով մէկը միւսի վրայ ազդեցութիւն է ունենում 1) : Պատմական իրականութեան մէջ դա նշանակում է միմեանցից անկախ պատմական դէպքերի կամ շարքերի հանգիպումը, որոնք հանգէս են զալիս իբրեւ եղակի և չկրկնազ դէպքեր 2), բայց որոնք ունենում են հասարակական կեանքի վրայ զօրեղ ազդեցութիւն : Այր Վիլիէլմ Ա.ի և Բիսմարկի դէմ եղած մահափորձերը չյաջողութիւն, իսկ Փիլիպոս Մակեդոնացու, Կեսարի, Ա.զէքսանդր Բ. Կայսեր դէմ մահափորձերը օրհասական վախճանի յանգան, պատմականութեան գործ էր դա . բոլորովին պատահական է և այն, որ Գուսատա Ագուլֆը սպանուեց Լիւցենի մօտ, մինչդեռ միւս զօրավարները, որոնք միատեսակ վատանդների ենթակայ էին պատերազմների ժամանակ, ազատուեցին այդ վիճակից : Այ Ազեքսանդր Մեծը և Ֆրիդրիխ Գ. կայսորը մեռան ծաղիկ հասակում, որ Հաբսբուրգեան տաներկու ծիւղերումն էլ արագօրէն մեռան տղամարդկանց չառաւիղները, որ նորածին, կիսամեռ Գիօթէին հազիւ յաջողուեց վերադարձնել դէպի կեանք, որ Շաֆայէլը և Շելլերը մեռան զարուն հասկում, մինչդեռ Միքէլ-Անջելոն և Գիօթէն հասան ալեզարդ ծերութեան, որ Հոհենցոլեների հարստութիւնը ոչ միայն վերածնեց Բուրբոնների, Վետինների և մի քանի ուրիշ հարստութիւնների նըման, այլև առաջ բերեց յանձին Ֆրիդրիխ Վիլիէլմ Ա.ի հռանդուն մի թագաւոր, լցուած իւր նպատակների պայծառ զիտակցութեամբ, իսկ յանձին Ֆրիդրիխ Մեծի մի հանճար — սրանք բոլորը պատմականութիւններ են, որոնք ինչպէս և հազարաւոր այդպիսի պատմականութիւններ, ունեցել են պատմութեան ընթացքի վրայ հական ազդեցութիւն, որը երբեք տեղական և վաղանցուկ չէ, այլ

1) *Sbc. «Պատմական զաղափարի վերլուծութիւնը», կա. Մայերի մօտ, Ibid. եր. 24—31 :*

2) *Իւ. Դելեւակիյ, Ibid. եր. 27 :*

շարունակում է արտայայտուել ամբողջ դարերի և հազարամետներին ըստ թագավորման 1):

Հասկանալի է, որ պատահականութեանց օրդեգրումով մենք
ստիպուած ենք պատմական օրինաչափութեան զաղափարից խու-
սափել և պատմական կոնկրետ իրագարձութեանց ստեղծման և
դրանց բացատրութեան խնդրում նաեւ այդ պատահականութիւն-
ների դերը շեշտել. Բնական է, որ այս դէպքում, տուեալ ընդհա-
նուր պայմանների մթնոլորտում, իբր զործոն և իրականութիւնը
ձեւակերպող նշանակութիւն է ստանում եւ այդ եղակի ու անկախ
պատճառական շարքերի հանդիպումը, որոնք սակայն որևէ պատ-
մական օրէնքի չեն կարող ենթարկեալ:

Նոյնպիսի գեր է խաղում ընդհանուր պայմանների վերաբեր-
մամբ նաև պատմական անհատների նշանակութիւնը, որի ազգե-
ցութիւնը սակայն ոչ մի կանոնորոշող բանաձեւերով չի կարելի ար-
տայայտուել։ Ծնորհիւ այն հանգամանքի, որ մարդ էակները տար-
բեր կամային ակտերով են օժտուած, չի կարելի անպայմանօրէն
պնդել, թէ այս որոշ հասարակական վիճակում (օրինակ սովոր ժա-
մանակ) տարբեր հասարակութիւնները կամ սրանց բաղկացաւցիչ
մասերը անպայման նոյն զիրքը կը բռնեն, ուրիշ խօսքով նրանք
կարող են զանազան կերպով հակազդել այդ նոյն վիճակի վրայ։
իսկ սա նրանից է առաջ զալիս, որ բոլոր մարդիկ նոյն կերպ չեն
արձագանգ տալիս նոյն զրգիռին։ Մենք արգէն ասել ենք, որ այն
անհատը, որը տիպիկական ոչինչ չունի իւր մէջ, կամ որ իւր ան-
հատական նշանակութեամբ հասարակութեան վրայ չի ազդում, —
նա պատմութեան ուսումնասիրութեան առարկայ չի կարող լինել։
Այժմ ուրեմն հարց է առաջ զալիս, թէ մեծ անհատը ի՞նչ ազդեցու-
թիւն ունի հասարակութեան վիճակի և զարգացման վրայ։ Անշուշտ
մեծ անձնաւորութիւնները իրենց ստեղծագործութեամբ սահմանա-
փակուած են իրենց ստացած զաստիարակութեան և հասարակական
միջավայրի ազդեցութեան միջոցաւ, ուր նրանք զործում են։ Հա-
սարակութիւնն է այն հոլը, որի վրայ նրանք անել են և որը

1) *Sku' h̥s. Ww̥jbr*, *ibid.* 4p: 30-31, *m̥k̥n n̥w̥k̥l p̥l. q̥b̥l b̥lu-*
h̥l, *ibid.* 4p: 33:

Նրանք բեղմնաւորում են 1): Ստային պատմական կոնկրէտ իրականութեան մէջ այդ անհատները աւելի են, քան միւս հասարակ անձինք. Նրանք շատացնում են գոյութիւն ունեցող ոյժը. Նրա մէջ յաւելումներ անում, որը ոչ ոք ժողովրդի մասսայի միջից ի զիմանքը չեր անել: Մեծ մարդը աւելին է տեսնում, խորը զգում, աւելի ճիշտ մտածում, ամենից լաւ կերպով արտայայտում այն, ինչ բոլորին յուղում է: Ուրեմն նա իրրե պատմական շարժման արագացման մօմէնտ է հանդէս գալիս (տես՝ Բարս իեւ. եր. 194): Այստեղ պիտի որոշակի շնչառել, որ խնդիրը վերաբերում է ո՞չ թէ հասարակական զարգացման ընդհանուր տեսնդենցին, որն անկախ է անհատների կազմով ուղղութիւնից, այլ այդ տեսնդենցի այս կամ այն ձեւակերպման, որին մենք պատմութեան մէջ ականատես ենք լինում. և հենց որպիսի ձեւակերպման ժամանակ պատմական անձնաւորութիւնը իւր որոյ գերն ունի: Կամքի զործունէութեան ասպարիզում մեծ մարդը հանդէս է գալիս իբրև ցրուած ուժերը միացնող, որը ուժերի ցրման առաջն առնելով, ուզդում է դրանց զեպի միակ նպատակը (տես՝ Բարս իեւ. եր. 197): Օրինակ Գերմանիան, որ իւր այն տիպի միացման հասաւ, ինչ որ Բիսմարկն էր ցանկանում, այդտեղ անկասած է Բիսմարկի անհատական զրոշմը: Գուցէ առանց Բիսմարկի էլ Գերմանիան միանար, բայց թէ այդ գերմանիան ի՞նչ ընոյթ կ'ունինար, Նրա մասները ի՞նչ կերպ միմեանց հետ կը միանային և այլն — այդ բալորը սկզբից անհնար էր գուշակել: Մոռօք հասկանում է մեծ անհատների ուրոյն գերը որպիս մէկն այն պատահական պատճառներից, որոնք կարող են արագացնել կամ դանդաղեցնել մի ճգնաժամ, մի շարժում խոսորել. մի շարժման մի մասնակի գոյն առաջ 2): Մաքի ասպարեզում մեծ մարդը յաճախ նոր սկզբունք է յայտնադորդում և այսպիսով մի թափով մեր հորիզոնը մի նոր աշխարհով հարստացնում (տես՝ Բարս իեւ. 197): Հենց այս տեսակէտից ելնելով, այսինքն պնդելով, որ չպիտի *à priori* ժխտել անհատների զործունեցիւնները և անհատական գէպքերը վանել, Սե-

1) *Sher. Q. Wars*, *Ibid.* 67. 197.

2) G. Monod, *Ibid.*, p. 402:

նօքոսը հարթը դնում է այսպէս. պէտք է քննել, թէ արգեօք անհատը ի վիճակի է եղել զօրեղ կերպով զործել, ինչ որ ենթադրելի է հետեւալ պարագաներում։ 1) Երբ այդպիսի մի անհատի ակտը ազդել է որպէս միօրինակ մարդկանց մասսայի վրայ և սահղել է տրագիցիա, ինչ որ յաճախ է պատահում զեղարուեստի, գիտութեան, կրօնի, տեխնիկայի մէջ։ 2) Երբ անհատը օժտուած է եղել իշխանութեամբ տալ հրամաններ և ուզութիւն տալ մարդկանց մի մասսայի, ինչպէս զա պատահում է պետութեան, զօրքի և եկեղեցու պարագլութեների հետ։ Այս պարագային մի մարդու կեանքի էպիզօդները կարեւոր զօրծեր են զառնում։ 1)։

Այս երկրորդ պարագային իսկապէս կարեւորը պատմական անձի մեծութիւնը չէ որ ազգում է, այլ չնորիւ այն հանդամանքի, որ նրանից է կախուած պետութեան բախտը, մի որոշ մօմէնտում նա կարող է այս կամ այն վճռական քայլն անել, որի ազգեցութիւնը տուեալ հասարակութեան բախտի վրայ կարող է շատ զգալի լինել։ Կարեւորն այստեղ այն է, որ չի կարելի կանխօրէն անպայման կերպով պնդել, որ այդ անձինք անպատճառ այս պատմական քայլը պիտի անէին և ո՛չ ուրիշ։ Եթերկրորդ Պոնիկեան պատերազմը Հանիբալի վճար հետեւանք է, եօթնամեաց պատերազմը Ֆրիզրիխ Մեծի, 1846 թ. պատերազմը՝ Բիսմարկի։ Տուրոր այս մարդիկ կարող էին կանգ առնել նաեւ մի ուրիշ որոշման վրայ, ուրիշները նրանց տեղը լինելով այլ կերպ կ'որոշէին վարուել, իսկ դրա հետեւանքը կը լինէր այն, որ պատմական դէպքերը այլ ընթացք կ'ունենային 2)։ Ուրիշն պատմագիտութեան մէջ անհրաժեշտօրէն իրենց տեղը պիտի ունենան ինչպէս ընդհանուր պայմանները, հաստատութիւնները, նոյնպէս նաեւ պատմական անհատներն ու եղակի դէպքերը, որոնք սակայն իրենց ազգեցութեան տեսակէտից պայմանաւորում են հասարակութեան կեանքն ու նրա զարգացումը։ Այս այս երկու կազմերը եւս ի նկատ է առնում դերմանիոյ արդի պատմափիլուայտական զրականութեան խոշոր տեսարաններից մէկը է։

1) Ch. V. Langlois et Ch. Seignobos, *ibid.*, 215—216.

2) Էտ. Մայեր, *ibid.* եր. 23։

թէրնհայմը, որոշելով պատմագիտութիւնը որպէս մի զիտութիւն, որը ուսումնակրում է և նկարագրում ժամանակով և տարածութեամբ որոշուած փաստերը մարդկանց զարգացման իրենց եղակի, ինչպէս նաեւ տիպիկ և կոլեկտիւ գործողութեանց մէջ որպէս սօցիալական էակների, հոգե-ֆիզիքական պատճառականութեան կապուցութեան մէջ 1)։

Այժմ հարց է առաջ զայիս այսպիսի մի գիտութեան մէջ կարո՞ղ է արգեօք օրէնքի գաղափարը կիրառուել, կարելի՞ է արգեօք օրէնչափութեան մասին աստ խօսք լինել, կամ կարելի՞ է պատմական պրօցնոզ զնել այդ տիպի երեւոյթների վերաբերմամբ։ Նախ պիտի նկատել, որ զիտութիւնը առնասարակ ոչինչ չի կանխատեսում հաւասարէն, որովհետեւ նա միշտ պարփակում է պայման, որ ամեն ինչ նոյնը և անփոփոխ է մնում 2)։ Աբզ, կեանքի բոլոր երեւոյթներում կայ մի նոր և ինդիվիդուէլ տարր, որը միանում է նրանց ստեղծող նախկին տարրերին։ Պատմական իրականութեան մէջ նոյն պարագաների մնայուն և անփոփոխ լինելը, որը հընարաւոր է գարձնում որևէ օրէնքի գործադրութիւնը, զոյութիւն չունի։ Աստ օրէնքը չի կարող ունենալ իր անպայման հաւասարութիւնը, որովհետեւ երեւոյթներն աստ յաջորդում են շարունակական փոփոխութեամբ, մինչդեռ օրինակ բնագիտական երեւոյթները միշտ կրկնում են նոյնութեամբ 3)։ Պատմութիւնը ի նկատի է ունենում երեւոյթները նրանց յաջորդականութեամբ, փոխանակ ի նկատի ունենալու նոցա կրկնութեամբ։ Կրկնուող փաստերի գիտութիւնը այդ փաստերի գոյութեան պայմանը օրէնքների է վերածում, մինչդեռ յաջորդող փաստերի զիտութիւնը չի կարող օրէնքներ բանական համեմատել։ Նա այդ փաստերը խմբում է շարքերով և նրանց մէջ համեմատում պատճառ և հետեւանք (տես՝ Monod, *ibid.*, եր. 370—371)։ Այս պատճառով ըստ Գ. Զիմելի պատմագիտութիւնը ամեն-

1) Er. Bernheim, Lehrbuch der historischen Medhode und der Geschichtsphilosophie, 1908, եր. 9.

2) Տես G. Monod, *ibid.* եր. 370.

3) Տես G. Monod, *ibid.* 168, 370. համեմատել անդ եր. 403.

նասութ հակագրութեան մէջ է այն բոլոր զիտութեանց, որոնք ուսումնասիրում են օրէնքներ 1): Պատմական օրինաշափութեան խնդիրը կը լուսաբանուի մի այլ կողմէից եւս, եթէ մենք ի նկատի ունենանք աստ պատմական պրօզնօզի հնարաւորութեան հանգամանքը:

Պրօզնօզի զաղագիարով մենք հասկանում ենք որոշ մօմէնտում զոյութիւն ունեցող յայտնի պարագաների և կօմբինացիայի գրութեան մասին մի այլ մօմէնտում: Պրօզնօզի զաղագիարը անխուսափելիօրէն կապուած է երեւոյթների յաջորդականութեան հետ ժամանակի մէջ 2): Երեւոյթների անպայման պրօզնօզ միայն այնտեղ հնարաւոր է, ուր ապահովուած է բոլոր անհրաժեշտ նախնական պայմանների իրականացումը: Բայց որովհետեւ պատմական իրականութեան մէջ չի կարելի վստահօրէն պնդել, որ որոշ կօմբինացիայի ստեղծման համար անհրաժեշտ պայմանները անխուսափելիօրէն կ'իրականան. ապա պրօզնօզը կ'ունենայ աւելի կամ պակաս հաւանական բնոյթ (տես՝ Դելեւսկի), *ibid.* եր. 28):

Իսկ մենք արդէն աեսանք, որ պատահականութիւնը, եզակի դէպքերը, փոփոխող կամային ակտերը, անհատների ունեցած նշանակութիւնը պատմութեան մէջ կենց այն հանդամանքներն են, որոնք պատմական պրօզնօզը իւր անպայման բնոյթից զրկում են և միայն հաւանականութեան բնոյթ են աւելիս: Այս հաւանականութիւնն էլ սուբժեկտիւ բնոյթ է կրում, այսինքն մեզ համար հաւանական է թւում մի սիստեմ միայն այն ժամանակ, երբ մենք անկատար իմացութիւն ունենք այդ սիստեմի՝ նրա տարրերի եւ նրա մէջ գոյութիւն ունեցող ուժերի մասին: Մինչդեռ օրֆեկտիւ հաւանականութիւնը սիստեմի բնութեան մէջն է զտնւում և ո՛չ թէ մեր նրա մասին ունեցած իմացութեան աստիճանի մէջ 3): Եւ հէնց

1) G. Simmel, *Die Probleme der Geschichtsphilosophie*, եր. 41—43.

2) Տես՝ Դելեւսկի, *ibid.* եր. 3:

3) Տես՝ Դելեւսկի, *ibid.* եր. 32 և 33:

պատմական պրօզնօզը տալիս է միայն սուբժեկտիւ հաւանականութեանց մի շարք: Հասկանալի է ուրեմն, որ պատմութեան մէջ, փոխանակ օրէնքի, մենք միայն տենդենցներ ունենք, որոնք տալիս են իրագանցիւր առանձին գէպքում հիմունքներ աւելի կամ պակաս հաւանական եզրակացութեանց համար (Դելեւսկի *ibid.* եր. 26—27): Հստ ինքեան Հւտեսում է, որ քանի մենք պատմութեան մէջ միայն անդենցներ նկատել կարող ենք, այդ տեսնկենցների բանաձեւման ժամանակ մենք պիտի բաւականանանք շարժման ամենաընդհանուր ուղղութիւնը նկատել և հեռու մնալ որևէ կոնկրէտ բոլյանդակութիւն տալուց, որպէսիւեւ լաւագոյն պարագային մենք կարող ենք իրականութեան ընդհանուր պայմանների և յամենք ժամանակի, սակայն թէ այդ ընդհանուրը բարերութեանց զարգացումը կուհնէ, սակայն թէ այդ ընդհանուրը որոշ ժամանակի և որոշ տարածութեան մէջ ինչ փոփոխաւթեանց որոշ ժամանակների, — որոնց մենք յիշանքակայ կը լինի չնախատեսնուող զործոնների, — ազինքն թէ ինչ անհատական տակեցինք, — ազդեցութեան տակ, այսինքն թէ ինչ անհատական կօմբինացիան մէջ կը մարմնանայ, դա ոչ ոք չի կարող չճգրիտ կոմբինացիաների մէջ կը մարմնանայ, դա ոչ ոք չի կարող չճգրիտ կերպով առաջնուց ուսումնասիրութեան առարկայ դարձնել: Մինչդեռ կերպով պատմագիտութիւնից զուրս հանենք անհատական, չերկեթէ մենք պատմագիտութիւնները, ապա մենք կ'ունենանք հասարակագիտութիւն (սօցիօլոգիա) և ո՛չ պատմագիտութիւն: Այս տեսակէտից եւ իրաւամբ նկատում է իտ. Մայերը Ալնհրաժեշտութեան հասկացողութիւնը փոխադրուելով պատմութեան մէջ, կորցնում է իւր սպեცիֆիկիկ իմաստը և ստանում է վերին աստիճանի հաւանականութեան նեանակութիւն, որից բոլոր առեալներով կարելի է սպասել որևէ դէպքի առաջանալը: Բայց իրօք նա կ'իրականանայ թէ չէ: Դա երդէպքի կարելի նախատեսել լիակատար հաւանականութեամբ» 1): Բնութիւնութիւնը, պատմական ապագայի վերաբերմամբ կարելի է միունքի խօսքով, պատմական ապագայի վերաբերմամբ կարելի է միունքի խօսքով, պատմական ապագայի վերաբերմամբ կարելի է միունքի խօսքով, պատմական օրէնքներից հիման վրայ էվոլյուցիոնը այդ անհրաժեշտ և անխուսափելի ընթացքը (իտ. Մայեր *ibid.* եր. 38):

Այժմ մեզ մնում է այսական մի խնդիր եւս չօշափել, որը

1) Տես՝ Մայեր, *ibid.* եր. 87:

սերտօրէն կապուած է պատմագիտութեան առարկայի հետ: Դա պատմագիտութեան օբժեկտիւութեան խնդիրն է, ուրիշ խօսքով ասած այն խնդիրը, թէ տուեալ պատմական երկը ինչքան յաւականութիւն ունի օբժեկտիւ լինելու կամ բոլորի կողմից անհրաժեշտաբար ընդունելութիւն, ինչպէս օրինակ մաթեմատիկան: Լէօպոլդ Ռանքէն այդ բացարձակ առարկայացման ահսակէտիթ ըզձում էր իւրից զունաւորում ստանալու, ինչպէս նոքա իսկապէս կատարուել են, հանդէսգան: Ի հարկէ այլ հարց է, թէ զա առհասարակ ինչքան հարաւոր է և ինչքան հէնց իւր Ռանքէի մօտ այդ իզձը կատարում է: Կասկածից գուրս է որ Ռանքէի վրայ զօրեղ ազգեցութիւն է ունեցել Ռումանտիզմը, որն անշուշտ զունաւորել է նրա աշխարհացքը 1):

Իրականութեան բազմաթիւ փաստերից որոշ փաստեր որևէ անսակէտիթ — իսկ այդ անսակէտները կարող են լինել զանազան տիպի — պիտի ընարուեն և միութեան բերուեն, այսինքն բոլոր այդ ընտրած փաստերը, իբրև կարեւոր փաստեր, պիտի տուեալ պրօբլեմը լուծեն: Հասկանալի է, որ այն զարաշրջանը, որի մէջ ապրում է պատմաբանը, նրան նորանոր պրօբլեմներ է առաջացրում: Այդ պրօբլեմները առաջ են գալիս դարաշրջանում իշխող անսպահներից, որոնք իրենց գրումն են դնում կեանքի բոլոր կողմերի վրայ: Պատմանը եւս անշուշտ իւր կողմից, անկասկած այդ անսպահների ազգեցութեան տակ, կարող է այս կամ այն խնդիրը յարուցանել, որոնք պիտի լուծումն ստանան: Հասկանալի է, որ զարաշրջանների և գրանց հետ նաև համապատասխան կուլտուրաների փոփոխամբ անհրաժեշտօրէն կը փախուեն պատմական երկերի բնոյթը, որը պայմանաւորուած է նոցանով: Սակայն վերցնենք ներկայ զարաշրջանի մի երկ և հարց տանք, թէ որն է այն անխուսափելի սուբժեկտիւթիզը, որից որևէ պատմագէտ գերծ չէ:

Նախ պիտի նկատել, որ պատմագիտութեան սուբժեկտիւթիզը

1) Տես՝ Achot Gasparian. Der Regrich der Nation in der deutschen Geschichtschreibung der 19m Intrhunderts. 1916. Leipzig. եր. 8—11.

յատուկ է բոլոր sciences morales գիտութեանց, որոնց օբժեկտն է մարդը, մարդու զործերն ու մտածութերը (տես Monod. ibid. եր. 369): Ուրիշ խօսքով ասած պատմագէտը անժիւ կապերով կապուած է մարդկային աշխարհի հետ և շատ անգամ նոյնիսկ գարերով բառապատճենութիւնը ունազարդում է որոնք թոյլ չն տալիս, յաճախ պատմաբանի կողմից լիակատար չգիտակցուելով, որ նա նոյնպիսի սառնարտութեամբ մօտենայ իւր ուսումնամատիրութեան առարկային, ինչպէս օրինակ բնագէտն է վերաբերում գէպի իւր օբժեկտը: Ի հարպէս որինակ բնագէտն է վերաբերում են մի շարք նախնական միջոցներ, կէ, հնարաւոր է և զործագրուամ են մի շարք սառնական միջոցներ, որոնց բոլորի իմաստն այն է, որ պատմական երկը, ըստ կարելոյն սուբժեկտիւ տարբերից մերկացած, առարկայական (օբժեկտիւ) բնոյթ ստանամ: Պատմական երկի համար անհրաժեշտ սկզբնական աշխատանքներում պատմական փաստերի հաւաքումը, ճշտումը և համաձայնութեան բերելը ենթարկուած են կրիտիկայի և գիտական մեթոդի յատուկ կանոններին 1): Օբժեկտիւանալու ձգտման նշաններից մէկն է անշուշտ նաև այն, որ պատմագիտութեան վրայ այլեւս պարտականութիւն չէ գրում փաստերի նկարագրութեան ուղեկցել, պարտականութիւն տալ կամ պարտաւել որևէ նպատանիանը նրանց հաւանութիւն տալ կամ պարտաւել որի մէջ նպատակի համար, ասում է Ֆրիմանը, պիկով 2): «Մեր իսկական նպատակի համար, ասում է Ֆրիմանը, պիկով մեր միտքն այնպէս արամազը ենք: Որպէսզի քաղաքական ձեւերը, ըստ նոյնքան անտարբեր երեւան, որքան քերականական ձեւերը, ըստ պատմագէտի միտքեալ թիւնից ժողովրդապետութեան և ժողովրդապետութիւնից միապետութեան անցնելը նոյնքան քիչ բարոյական զընահատման ենթարկուելիք համարուի, ինչպէս լատիններէնի ֆրանսական փոխակերպուելը» 3): Որպէսզի մենք մեր բոլորէկան, եսասուերէն փոխակերպուելը» 3): Որպէսզի մենք մեր բոլորէկան, եսասուերէն փոխակերպուելը» 3): Որպէսզի մենք մեր բոլորէկան, կամ կան, անցողակի ապրումների, կուսակցական տենդենցների, կամ կիտալ տուեալների վրայ հիմնուած տեսութեանց ազգեցութիւնը չե-

1) Տես՝ Monod. ibid. եր. 371:

2) Ch. V. Langlois et Ch. Seignobos. ibid. եր. 241—242.

3) Տես՝ Պրօֆ. Ն. Կարեկւ, — «Գաղղակաբների, հաստատութիւնների և անձնաւորութեան գերը պատմութեան մէջ», Թարգ. Աշ. Գասպարիան, Վաղարշապատ, 1910, եր. 55:

զոքացնենք պատմական երկի մէջ, պիտի ի վիճակի լինենք մեր
 ամբողջ հոգեկան բոլիանդակութիւնը անալիզի ենթարկել և խորա-
 մուխ լինել, որ կան ապրումներ, որոնք մեր անձի, կամ այն խըմ-
 բակցութեան համար, որին մենք պատմանում ենք և կամ այն դա-
 րաշրջանի համար, որի ազգեցութեան տակ ենք մենք զտնում,
 իբրեւ այդպիսին շատ թանգարժէք են. բայց նոյնպիսի իրաւամբ
 այլ անձինք, խմբակցութիւններ, զարաշրջաններ օժտուած են զրան
 ըոլորովին հակառակ ապրումներով, ի հարկէ սա ամեն մարդու զործ
 է. այդ անալիզը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ այն,
 ինչ ընդունուած է անուանել «բարոյական մեծութիւն»: Հոգեկան
 մեծութիւնը հնարաւոր է դարձնում տալ մի շարք ապրումներին
 հաւասարարժէք նշանակութիւն իբրեւ իրականութեան տիպի և ըստ
 այնմ էլ ըմբռնել պատմական կեանքի գանազան շրջաններն իրենց
 տարբեր ձգտումներով, կամ զանազան խմբակցութեանց և կուօակ-
 ցութեանց կատարած դերը և տեղը պատմութեան մէջ: Մի շարք
 զարաշրջանների կամ միեւնոյն զարաշրջանի աարբեր ազգերի կուլ-
 տուրանների ուսումնառիրութիւնը և համեմատութիւնը իւր կողմից
 նոյնպէս նպաստում է պատմազրի մտաւոր հորիզոնի լայնացման,
 որով հնարաւորութիւն է տրում միեւնոյն պատմական փաստը դի-
 տել համանման փաստերի ընդհանուր շարանի մէջ և ապօ նրա իւ-
 րայասուկ բնոյթը մատնանշել: Այս հանգամանքը եւս անկասկած
 օժանդակ միջոց է երեւոյթների և փաստերի առարկայական ըմ-
 բռնման: Սակայն ինչքան էլ մենք բազմապիսի եղանակներով աշ-
 խատենք մեր ըմբռնող եսը բիւրեղացնել և ամեն տիպի պատահա-
 կան հանգամանքների ազգեցութիւնից զերծ պահել ու բարձրազոյն
 աստիճանին հասցնել, այնուամենայնիւ, զարձեալ մնում է իբրև
 անսասան այն հանգամանքը, որ այդ բիւրեղացած և բարձրազոյն
 աստիճանին հասցրած եսն է, որ պատմական փաստերի վերաբերեալ
 պրօլետներ է զնում, փաստերը միութեան վերածում, իսկ այստեղ
 անխուսափելիօրէն մեր հոգեկան բովանդակութիւնը, թէպէտեւ
 զտուած և հնարաւոր օքնեկաթիւութեան հասած, իւր զերն է խա-
 զում: Մեր այդ հոգեկան կուտակուած պաշարի հետ յարաբերութեան
 մէջ դրուելով միայն երեւոյթները միութեան են վերածում և ու-
 րեմն ըմբռնելի դառնում: ի հարկէ, մեր ըմբռնումը մենք կարող

ենք և պարտաւոր ենք միշտ էլ պատմական իրականութեան ըն-
 ձեռած փաստերով ճշակ, ոտկայն վերջ ի վերջոյ քա կը մինի ըմ-
 բռնումներից լաւագոյնը, բայց զարձեալ մեր ըմբռնումը 1): Ուրիշ
 խոսքով ասած, պատմական իմացութեան օբժեկտիւութեան համար
 կան սահմաններ, որոնցից այն կողմը ոչ ոք չի կարող անցնել ու
 լաւագոյն պատմաբանը նա է, որ բոլոր հնարաւոր և պահանջուե-
 լիք եղանակները այդ առարկայացման համար անշեղ և հետեւզա-
 կան կերպով իրազործել է իւր երկի մէջ, որով եւ տարբերում են
 — անշուշտ զրան անհրաժեշտորէն միացած պատմազէտի ստեղծա-
 զործական թափի առուիճանը — մնայուն և անցողակի պատմական
 գործերը:

1) Պատմական ըմբռնման մանրամասն վերլուծութիւնը տես
 G. Simmel. Die Probleme der Geschichtsphilosophie. տես նաև
 կտ. Մայեր, Ibid. եր. 60—61.

ԱՆԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՈՒԱԳԻԾ)

Ամեն ոք, ով այս փոփոխակի, անկայուն մօմէնտում, մնայուն արժէ զներին ջերմ կառչել է, չէ կարող իւր հայեացքը չսեւեռել այն անձնաւորութեանց վրայ, որոնց կեանքը մի սերտօրէն շաղկապուած ամբողջութիւն է ներկայացնում և որոնց զոյսութեան իւրագանչիւր մօմէնտը զերծ որևէ պատահականութիւնից, անկրամելա հետեւողականութեան մի անխուսափելի արգասիք է ներկայացնում, իւրագանչիւր ոք մեզանից, իւր զոյսութեան ընթացքում, հանդիպել է մտքի և գործի ասպարեզի անձնաւորութեանց, որոնք իրենց սեղծագործութեան հուժկութափով մեր իւրագանչիւր ակախ վրայ իրենց անջնջելի գրոշմն են դնում և մեզ զզալ տալիս մեր անցաւոր զոյսութիւնը ու առաջացնում մի մաքուր տենչ բարձրանալ դէպի այդ մնայուն էակների մակարդակը, Յատկապէս գործի ասպարեզում, ուր մեծ զոհաբերութիւն է պահանջում և ուր բազմերանգ կեանքն է հանդէս զալիս, այդպիսի անձնաւորութիւնները կարողանում են վարակել մարդկային հսկայական քանակներ, Հետաքրքիր է այժմ դիտել, թէ պատմական իրականութեան մէջ ի՞նչ զեր ունին նման տիպի անհատականութիւնները:

Նախ և առաջ պիտի հարց տալ, թէ մարդկային պատմութեան ո՞ր շրջանում հնարաւոր է առհասարակ այդ տիպի անձանց հանդէս գալը, Հասկանալի է, որ ամենանախնական շրջանում, երբ մարդ-

կային կեանքը, իւր ամբողջ պարզութեամբ, մշտապէս նոյնութեամբ կրկնում է, և ուր անհատը, իւր զոյսութեան ընթացքում, լիակատար կլանուած է հասարակութիւնից, չի կարող խօսք լինել անձնաւորութեանց մասին իբրեւ այդպիսիների, որովհետեւ վերջիններիս զոյսութիւնը ենթագրում է հասարակութեան, իբրեւ վերօգանական միջավայրի և անհատի մէջ որոշ անջրպետ, որը թոյլատրում է որոշ չափի անկախութիւն այն հասարակական միջավայրից, որի մէջ նածնուել է և ապրում է Հասարակական կեանքը բարգացմամբ, այլատարրութեամբ միայն տարբեր զբաղումների հետ միասին նաև տարբեր տիպի անձնաւորութիւններ են հանդէս զալիս, որոնք զգալագիս շեղում են իրենց այլ համայնակիցներից, Յայտնի է, որ այս զարգացումը իւր ամենակատարեալ աստիճանին է հասնում վորագին տնտեսութեան ժամանակ, երբ դրամը լինելով մարդկային հասարակական յարաբերութեանց չափանիշը և ըստ այնմ հասարակական կեանքը կերպաւորելով, մարդկանց յարաբերութիւնները, բոլոր զգացումային տարբերից չեղութացնել ջանալով, հաշուի վրայ է կառուցանում, իսկ զրա կետեւանքն է լինում մարդկային բնաւորութիւնների որոշակիութիւնն ու վճռականութիւնը, Հէնց այս տեղից էլ ծագում է անհատականութիւնների լիակատար ծագկման զարացրջանը, «Անձնաւորութիւնը կեանքում մի նոր բան կարող է մէջ բերել կամ հասարակական կազմակերպութեան մէջ ունեցած իւր առանձնայտուկ դիրքի և կամ իւր զաղափարների շնորհիւ, այսինքն այսպէս թէ այնպէս առաջ զալով և զատուելով բազմութիւնից, մասսայից, Մի անձնաւորութեան միւսից մեծ չափով տարբերուիլը հասարակական կազմակերպութեան մէջ հնարաւոր է միայն վերջինիս բարդութեան և ընդարձակութեան դէպում, Հէնց իրենք նոր զաղափարները առաջ են զալիս միայն անհատների ծեռներէցութեամբ և ամենից շատ աչքի ընկնող արդիւնք են տալիս միայն ընդարձակ հասարակական կազմակերպութիւններում, Աւստր պատմութեան ընթացքը ծնունդ է առնում պետութիւնների ծագման հետ, միայն պետութեան մէջ կարող են հանդէս զալ այնպիսի մարդիկ, որոնք նոր զաղափարներին լայն զործագրութիւն տան, ցեղական կենցազի մէջ անհատը միայն իւր նախնիքների զործագութիւններն է կրկնում և ընդարձակ ասպարեզ չունի իր զաղա-

Գարի կիրառութեան համար» 1):

Կարլ Լամպրեխտը աշխատում է հոգեբանօրէն բացառել ռբարձր և ցածր աստիճանի կուլտուրաների անձնաւորութիւններին հանդէս դալու հանգամանքը և այն հոգեբանական օրէնքի վրայ է կանգ առնում «թէ որքան հոգեկան կեանքի մէջ կատարւող անցքերի և սրանց մասերի միութեան յարաբերաւթիւնները խօրն են, այնքան աւելի սրանց հոգեկան միտքերպութիւնը շատ է լինում։ Յայտնի է, որ միութեան յարաբերաւթիւնները կուլտուրական ցածր աստիճաններում աւելի խօրն են, քան բարձր աստիճաններում, որունեւ եզակի անձնաւորութիւնների անհատականացումը չնորիւ ընդհանուր կուլտուրայի չնչին չերտաւորման, քիչ է առաջ զնացած լինում։ ուրիմն այս յարաբերաւթիւնների ըմբռնումը եզակի անձնաւորութիւնների համար աւելի պարզ է, կամ այլ կերպ ասած, եզակի անհատի կախումը իւր ժամանակի կուլտուրայի աստիճանից աւելի մեծ է, քան բարձր զարգացման ժամանակաշրջանում» 2):

Ընդունելով ուրեմն, որ անձնաւորութեան հանդէս զալու համար անհրաժեշտ է պատմական կեանքի որոշ կուլտուրական բարձրութիւն, պիտի հենց այստեղ աւելացնել, որ մեզ այժմ զբաղեցնում է ոչ թէ անձնաւորութիւնն ըստ ինքեան, այսինքն թէ նա ինչ ուրոյն յառակութիւնների տէր է, այլ անձնաւորութեան պատմահասարակական կեանքում ունեցած ազդեցութեան տեսակետից է, որ մենք խնդիրը վերցնում ենք։

Նախ և առաջ մեծ անձնաւորութեան առեղծուիլը նոյնպէս ենթարկուած է մի շարք պարագաների, ինչպէս եւ սովորական ան-

1) Տես՝ Պրօֆ. Ն. Կարեն, — «Դաշտավարների, հաստատութիւնների և անձնաւորութեան դերը պատմութեան մէջ», թարգ. Ա. Գարեգին, 1910, Վաղարշապատ, եր. 4:

2) Տես՝ Կարլ Լամպրեխտ, — «Նորագոյն պատմագիտութիւն», թարգմ. Pessimist, Թիֆլիզ, 1912, եր. 109; Այստեղ պիտի նկատեմ, որ այս, ինչպէս և հետագայ աղբիւրներից ես նրանց թարգմանութիւններից եմ օգտուում, որովհետեւ դրանց բնազրերը, գժբախտաբար, այժմ ձեռքիս տակ չեն դտնեում։

ձանցը։ Ամենակարեւոր զերը խաղում են ասա գաստիարակութեան միջնորած մեծ մարդուն ներշնչած զաղափարները, որոնք մշապէս կրկնուելով և զանազան կօմբինացիաներով հանդէս գտլով, նրա կեանքի համար վճռական նշանակութիւն են ունենում։ «Մեր գործունէութիւնը որոշում է ոչ թէ վազանցում մտքերով, որոնք կարծէք թէ համար կերպով թափանցում են մեր ուղեղի մէջ, այլ մշտական զաղափարներով, որոնք առաքեր կապակցութեան մէջ կրկնուած են։ Այդպիսի զաղափարները, որոնք մեզ գործի են մղում, գաստիարակութեան միջնորած ստացած զաղափարներն են 1): Սակայն գաստիարակութիւնը պայմանաւորուած է այն հասարակութեան հայեացքներով, որի մէջ ապրում է մեծ մարդը։ Եթէ վերջինս գաստիարակութիւնն անկախ հասարակական կեանքում է առաջարկուած իշխող զաղափարներից, ապա կեանքի մէջ մանելով։ Նրա ունեցած իշխող զաղափարները կը խորտակուեն շրջապատում իշխող աշխարհայեցքի ազգեցութեան տակ և ոչ մի իրական արդիւնք չին կարող տալ։ Եթաստիարակութիւնը, առում է Բարտը. թէպէտ և արստրակալ իմաստով կարող է ներշնչել բոլորովին նոր աշխարհայեցք իրիտասարդ մեծ մարդուն, սակայն in concreto միայն այն դէպքում կարդ ե արդիւնքներ տալ, եթէ նրա իզէտները համապատասխանուուրող ե արդիւնքներ տալ, եւ եթէ նրա իզէտները համապատասխանուուրող ե արդիւնքներ տալ, եւ աւելի ու աւելի աճող հոսանքին կամ հասարակութեան այն մասի կարծիքին, որին նու կարող է յանձնել սանի հայեացքների ապազայ ամրապնդումը։ Դաստիարակութիւնը այս պատճառով չի կարող ներշնչել ամբողջ կեանքի համար զաղափարներ, որոնք միջավայրին բոլորովին օտար են։ Ես միայն այն դէպքում կը տայ արդիւնքներ, եթէ կը համաձայնուի զօրել չափով արդիւնքն զոյութիւն ունեցող կամ առաջացող և աճող հասարակական շարժման։ Դաստիարակութեան միջնորած մեծ մարդը իւր մտքերը վերցնում է շրջապատով միջավայրից» 2):

Որ շրջապատի հասարակական միջավայրը զօրել կերպով ազ-

1) Տես՝ Պ. Բարս, — «Ֆիլոսոփիա պէտորիի կակ սոցիոլոգիա», թարգմ. Մոտելա, 1902, Պետերբուրգ, եր. 192—193։

2) Պ. Բարս, ibid. եր. 193—194։

գում է մեծ անձնաւորութեան կազապարման վրայ, դրանով դեռ հարցը չէ լուծւում: Մենք կարող ենք մի խոշոր պատմական անձնաւորութիւն վերցնել իրեւ ուսումնասիրութեան առարկայ և վերլուծել: Այդաեղ մենք կը դիտենք, որ նրա հոգեկան կառուցուածքի շատ տարրեր պատկանում է իւր դարաշրջանին, ազգային, պետական, հասարակական ևայլն պայմաններին, որոնց մէջ նա մնել ու զարգացել է և բնականօրէն կրել է համապատասխան ազգեցութիւններ: Սակայն այդ բոլոր պայմաններից, արտաքին պարագաներից, սաացած զումարը չէ սպառում այն ամբողջը, ինչ որ իսկապէս մեծ մարդու էութիւնն է կազմում: Այն ինչ որ մեծ մարդուն մեծ է դարձնում, դա այն ստեղծագործական ոյժն է, որը Ռանքէի կարծիքով, անմիջական յարաբերութեան մէջ է աստուածայինի, այսինքն ստեղծագործական ոյժի աղքիւրի հետ: Այլ գարաշրջանում, այլ պայմաններում, անշուշտ այդ ոյժը այլ ձեւակերպութիւն, գունաւորում կը ստանար, այլ երեւոյթների վերաբերեալ կը կիրառուէր, բայց դարձեալ իր ստեղծագործող ոյժ հանդէս կը գար: Այս տեսակէտից իրաւամբ նկատուած է, որ Հանճարը յատուկ ստեղծագործողն է»: «Հափից դուրս հոգեկան ուժով օժառուածը (տես կ. Լոմպիկիստ, անդ, եր. 111) և որ այդպիսի հանճարի հանդէս գալու օրենքը անյայտ է 1), այսինքն իրական պատճառական ազացոյցներով չի կարելի տուեալ հանճարեղ անձի ստեղծուիլը բաշատրել: Այսն մարդ, առում է պրօֆ. Կարեւը, իւր ազգի և իւր ժամանակի զաւակն է, բայց ամեն մարդ ունի նաեւ որևէ անհատական առն, միայն այս անհատական շեղումներն են, որ շարժում են քաղաքակրթութիւնը և հասարակական ձեւերը, իսկ պատճենախողոր շեղումները անմահութեան իրաւունք են առաջիւ 2): Եւ այս տեսակէտից ո՞չ մի էէվոլյուցիայի օրէնքին հիման վրայ չի կարելի բառարել, թէ ինչու «Ֆրանսիայում Միքարոյից յետոյ հանդէս եկաւ փոթեապիերը, իսկ Ռոբերոպիերից յետոյ Բոնապարտը (Կարեւ,

1) Տես՝ ՊԵԼԵՎԱԿԻ], — «Իկոնոմիզեակից մատերիալիզմի իւս. առրիա նառակից», եր. 17:

2) Պրօֆ. Ն. Կարեն, *ibid.* էր: 24-25:

անդ, եր. 24): Ուրիմն որոշ պատահականութեան հանգամանք կայ այս կամ այն խոչոր պատմական անձնաւորութեան հանդէս զալու ժէ՞:

Ընդունելով հանգերձ, որ երբեք որոշակի կերպով չի կարպի
հիմնաւորել այս ինչ խոշոր անձնաւորութեան հանդէս գտնվ, կարելի
է սակայն մատնանշել ընդհանուր պայմաններ, որոնք առնաց առնաւարտկ
նպաստաւոր հող են ստեղծում այդպիսի անձանց առաջ զայլու հա-
մար, Գիտի նկատել, որ ընդհանրապէս, մի կողմ թողած բացա-
ռութիւնները, գործի աշխարհում, այդպիսի անձանց հանդիսարերած
ձեռներէցութիւնը ճնոյն հասարակութեան մէջ ծնունդ առնոլ և հա-
սունացող գաղափարների արտայացաւութիւնն է միայն, ձեռներէցու-
թիւնը հասարակութեան տուեալ աստիճանի զարգացման համապա-
տասխանող վիճակի արգասիքն է, վերամշակուած անհատի մտածո-
ղութեամբ, ուստի և պատմական զործօնի դեր չէ կարող կատարել
այնպիսի ձեռներէցութիւն, որը կեանքի հետ ոչինչ ընդհանուր բան
չունի: Սակայն վերոյիշեալ ձեռներէցութեամբ օժտուած անձը կա-
րող է իւր անհատական ուրոյն յատկութեանց չնորհիւ հասարակու-
թեան մէջ ռծնունդ առնոլ և հասունացող գաղափարները իւրա-
տեսակ ձեւով «վերամշակել» «ինչպէս չէին վերամշակի ըիւրաւոր
սովորական անձնաւորութիւններ» (Կարէեւ, անդ, եր. 24 և 30) և
ըստ այսմ էլ ուղղութիւն տալ հանրային մտքին: Միմիայն ծաղկ-
ման, խիստ տնտեսական և բարոյական կարգի էպօխաներում, ժո-
ղովուրդներն ունենում են բաւականաչափ ոյժ, որպէսզի ստեղծեն
մեծ մարգկանց և նրանց հայթայթեն բաւականաչափ քանակի հա-
մեխոններ՝ գրած նպատակների իրադարձման համար 1):

«Այսուր անձնաւորութիւնները ներքին խմորման դարձրչաւա-
ներում են հանգէս զալիս, երբ եղած վիճակին (status quo) այսպէս
թէ այնպէս հակամարտ աշարքեր են լինում հասարակութեան մէջ.
Խոչուր անձնաւորութեան հանձարեղութիւնն էլ հենց այն է, որ կա-
րողանայ հասկանալ, թէ ինչպէս համախմբել այդ աշարքերը, կան-
խօրոք արուած այս կամ այն նպատակին հասնելու համար և ջլատել

1) *Sch. q. furs, ibid, p. 197.*

Դիմադիր տարբերի ջանքերը» 1):

1) Պրօֆ. Կարեն, *ibid.* էր. 28:

Աստ պիտի նկատել, որ խոշոր անձնաւորութիւնների հանդէս գալու հանգամանքը շատ է զրայեցրել պատմաբաններին։ Խնդիրը նրանումն է, թէ ո՞ր գարայրջաններում անհատականութիւնների ստեղծման համար նպաստաւոր հող է ստեղծւում։ Պրօֆ. էտուարտ Մայերն օրինակ այն կարծիքին է, որ «անհատական սկզբունքը ոյժ է ստանում արագ, ուժզին զարգացման գարայրջանում։ Ըստնակառակը կուլտուրայով յագեցած գարայրջանները, որոնք առաջանում են սովորաբար հոգեկան մտաւոր կեանքի յետամանցութիւն, անհատականութեան դէմ դնում են միշտ ուժեղ խոչընդուներ և զբանական նշանակութիւնն անցնում է կեանքի ուրիշ զործոններին» (տես՝ Պրօֆ. էտուարտ Մայեր, «Պատմութեան տեսական և մեթոդաբանական խնդիրները», Թարգմ. ոռու. Գ. Գարբրիէլեան, 1912, Վաղարշապատ, եր. 70)։ Այս խնդրում աւելի մանրամասնութիւններին է անցնում կ. Լամպրեխտը, որն ընդունելով թէ պատմական հանճարները ոչ թէ որակով են միւս անձերից տարբերում, այլ չափից գուրս հօգեկան ուժով, այդ հանճարները տիպերի է բաժանում և տարբեր, նբանց հոգեկան կառուցուածքին համապատասխան զարայրջաններում զետեղում, որն անշուշտ ապացոյց է այն բանի, թէ ինչպէս հանճարների ստեղծագործութիւնը և ազգեցութիւնը կապակցութեան մէջ է նբանց գարայրջանի կուլտուրայի հետ։ Այսպէս կ. Լամպրեխտն ասում է, որ հանճարների ունեցած չափից գուրս հոգեկան ույժը կարող է զանազան եղանակով բաժանուած լինել, կամ ներդաշնակ այնպէս, որ հոգեկան բոլոր յատկութիւնները միաահսկ կը բարձրացնան կամ աններգանակ այնպէս, որ հօգեկան մի կամ մի քանի յատկութիւններ ի հայել միլիոնների մի այնպիսի զափի կը հասնեն, որ նոյնիսկ հեշտութեամբ հիւանդագին դրութեանը հասնեն։ Բայ այնմ էլ կարող ենք հանճարներին բաժանել աներգանակների և ներգաշնակների։

Պատմական գործունեութիւնն տեսակետից զիտելի է, որ «ան-ներդաշնակ հանճարքները անցման ժամանակներում մեծ ազդեցու-թեան են հասնում, որովհետև այդ ժամանակուայ հօգեկան մեխա-

Բացի հասարակության զործունելութիւնից, կուլտուրայի ու ը-
նտգաւառներում եւս, օրինակ գեղարուեատի մէջ, զօրեղ կերպով
նկատելի է խոչոր ստեղծագործուների կապակցութիւնը շրջապատղ
կեանքի պայմաններից։ Աստ եւս ժողովրդական կեանքի ծաղկման
գարաշրջանները արդիւնաւէտ են լինում։ Շիրձը, իսկական գեղ-
արուեստը, առում է Բարտը, պահանջում է ամբողջական մարդ-
կանց, զգալու և մտածելու ընդունակ։ Կամք ունեցող մարդկանց,
որպէս, օրինակ, զեղարուեստագէտ և որպէս դիմուլ։ Այն,
ինչ որ սկսուած անկման գարաշրջաններում է հանդէս դալիս, նմա-
նութիւն է և մեզ չպիտի մոլորեցնի։ Անկման եպօխայում կարող
է տեխնիկան, թերեւս նաև գիտողութեան ճշտութիւնը առաջադի-
մել, սակայն ստեղծագործական ներքին բովանդակութիւն չի կա-
րող դոյլութիւն ունենալ (տես Պ. Բարս, Եթ. 197—198)։

Դրող դպյութիւն ունեցած է բարեկարգ մի քիչ այլ է
Գիտութիւնան մէջ սակայն, թւում է թէ խնդիրը մի քիչ այլ է
շնորհիւ այն հանդամանքի, որ զիտութիւնը իրական կեանքի ալէ-
կօծումներից կեռու է: Նա թէպէտեւ կեանքից գրգիռներ ե սա-
նում, սակայն ունի իւր ուրոյն տրամաբանական ընթացքը: Իւ-
րաքանչիւր նոր գիւտ առա և անփուսափելի արդիւնք նախկին զը-
բաւումների, այս պատճառով էլ, այսինքն կեանքից անմիջապէս
հեռու լինելու պատճառով, գիտութիւնը ազդում է կեանքի վրայ
միջնորդապէս: Ուրեմն զիտութեան շրջանում ստեղծագործողը կա-
րող է չառ աւելի անկախ զգալ—կեանքի հանդէպ—իւր լրացումների

Նիկան գրանց համար յարմար է : Իսկ ներդաշնակները ընդհակառա-
կը, լրացած կուլտուրայի ժամանակ են աւելի երեւում : Ոչ միայն
աններդաշնակ հանճարները ամբողջացած կուլտուրայի ժամանակ,
ներդաշնակները նոր սկսող անցման կուլտուրայի ժամանակ իրենց
գործունէութեան համար ոչ մի յարմար գաշտ չեն կարող զտնել,
այլև աններդաշնակ հանճարները անցման ժամանակի կուլտուրայի
համար յատուկ նշանակութիւն կ'ունենան այն ժամանակ, երբ այս
անցման ժամանակի համապատասխան աններդաշնակ են, իսկ ներ-
դաշնակները միայն այն ժամանակ, երբ նրանց համար նոյնպէս
համապատասխան հանրական դրսութիւններ կան (աես Կ. Լամպ-
րելիտ, *Ibid.* եր. 111—112):

Տէջ։ Այսուեղ որոշ չափով դեր է խաղում պատահականութիւնը։ Պատահականութիւնը նրանում է կայանում, որ որո մօմենտում հանդէս է զալիս մեծ մարդք, որի հանճարի բարձրութիւնը համապատասխանում է ուրեալ պարագաներին 1)։ Աստ ժամանակը ամենակարեւոր գերն է խաղում, յատկապէս զիտութեան և տեխնոլոգիայի մէջ, որովհետեւ միեւնոյն բանը չէ, առում է Դեկենսկին, թէ վազ և ուշ հանդէս կը գայ պատահմունքը կամ կ'երեւայ հանճարը։ «Պապպի էպօխայում, առում է Մարիւն, սպասելի եր սաեղծել հանրանշիւը, անալիտիկ երկրաչափութիւնը և զինամիկան։ Բայց կարելի է ասել, որ այս երեք զիտութիւնները հիմնուեցին համարեան մակուան հետեւեակ օրը, որովհետեւ այն տասներկու դարերը, որոնք բաժանում են Պապպին Վիէտաֆց, Դեկարտից և Գալլէյից, ներկայացնում են միայն մի երկար զիւեր։ Ո՞չ միայն Վիէտաֆը, Դեկարտը և Գալլէյիը չունեին իրենց տրամադրութեան տակ այլ միջոցներ, բացի Պապպի ունեցածներից, այլեւ նոքա գտնում էին նոյնիսկ աւելի սակաւ բարեյաջաղ միջավայրում» 2)։ Աստ ուրեմն մենք մի դէպք ունենք, երբ հանճարի պահանջը բաւարարուեց 1200 տարի յետոյ, աւելի նուազ բարեյաջաղ պարագաներում։ Նոյն պիսի արտայայտութիւն ունի Հ. Բէքը, մետաղագործութեան յայտնի եղինակութիւնը, շողեմեքենայի հնարողի, Ուատտի մասին։ «Զպիսի մատծել, որ եթէ Ուատտի լիներ, ապա մի ուրիշը կ'անէր այս գիւտը։ Այսպիսի մակերեսային ենթադրութիւնից կը հրաժարուի իւրաքանչիւր ոք, ով իրօք ուսումնասիրում է Ուատտի կեանքը։ Հնարաւոր էր, որ հարիւր ատրի յետոյ կամ էլ աւելի երկարատեւ ժամանակից յետոյ Ուատտի զիւտերը առուինաբար լոյս աշխարհ գտյին։ Բայց որ մեկ մարդ կարողացաւ իւր ժամանակին այդ զիւտերն անել այլպիսի կատարելութեամբ, առ մեզ կրաշք է թումն» 3)։ Ըստ Բէքի, այս զիւտից անզլիական արդիւնաբերու-

1) Տես՝ Իւ. Դեկենսկիի, — «Էկոնոմիչեսկիի մատերիալիզմ ի բարբառ նառակի», եր. 17.

2) Տես՝ Իւ. Դեկենսկիի, լեւ. եր. 17.

3) Տես՝ Իւ. Դեկենսկիի, լեւ. եր. 18.

թիւնը անազին առաւելութիւններ սաացաւ և այդ հանգամանքը այնպէս ճնշիչ կերպով ազգեց ամրող ֆրանսական ինդուստրիալի վրայ, որ դա խոշոր գեր խօզաց ֆրանսական յեզափոխութեան ասացացնող պատճառների մէջ (տես Դեկենսկիի, անդ, եր. 18)։ Այս ամել ուրեմն մենք ականատես ենք լինում, թէ ինչպէս անազին նշանակութիւն ունի, ազգեցութեան տեսակէտից, զիտական աշխարհում, այս կամ այն հանճարի հանդէս զալու ԺԱՄԱՆԱԿԸ».

Հայ ազգութեան համար, իբրև մարդկութեան մի ուրբյն հատուածի, զիբախտաբար, ցրուած երկրագնդի զանազան մասերում, վճռական նշանակութիւն ունի, խոշոր անհատականութիւնների սաեղծման խնդրում, նրա ազգային հաւաքման և ինքնուրոյն գոյութեան պայմանների կերտման հանգամանքը։ Շնորհիւ այն հանգամանքի, որ նա գարերի ընթացքում զրկուած է եղել անկախ զոյսիթեան պայմաններից և զանազան պետութիւնների նպատակ է գարձել, նրա ականաւոր զաւակներից լատերը, իրենց սաեղծագործական թափը հանդէս են բերել օտար ասպարեզներում, ընականուին եւ յարմարուել են այդ օտար պայմաններին ու իրենց ամբողջ հարազատութեամբ հանդէս չեն եկած։ Անզամ ազգային լրջանակներում գործող հայ անհատը, շնորհիւ հայութեան երեք հասուածի բաժանուելուն, հնար չուներ բոլորանուէր, հայութեան բոլոր հատուածների մէջ և նոցա համար ստեղծագործելու։ Միմիայն անկախ պետական կազմն է, որ հնար կը տայ հայութեան բոլոր տարագիր մասերին համախմբուելու և մի ամբողջական կետնք ստեղծելու, որի դէպքում միայն հայ անհատականութիւնը, իւր բազմապիսի ընդունակութիւնները, լիակատար կարող է ծառալել հայ կեանքի զանազան ասպարեզներում, առանց կարիք զգալու սրան կամ նրան յարմարուելու։

Հայկական հանրապետութեան երկու տարրուայ վաղանցուկ ժամանակամիջոցում սկսուած էր մի շարժում, որն այս տեսակէտից վերին աստիճանի յուսագրական էր։ Շնորհիւ այն հանգամանքի, որ հայ պետականութեան զեկավարները ազգային պետութիւն էին ստեղծում, պահանջւում էր հայ քաղաքացիներից հայ լեզուի և հայ կուլտուրայի անկրաժեշտ իւրացումն հաջակական պետութեան պաշտօնեայ լինելու համար։ Ամենատարաբնու հայն անզամ սիբառուած

եր հայերէն սովորել և արդէն նկատելի էր այդ օտարքացած հայ ազգայնոց մէջ, որոնք Հայուստան էին եկել, նպառմն մօտիկից ծանօթանալ հայ կուլտուրային, հայի անցեալին, Ալլ կերպ, այսինքն չայածալով, Հայուստանում չէր կարելի ապազայ զտնել: Նոր կեանքի հրամայական պահանջները հայ քաղաքացում սերտոքէն կապում էին հայ կուլտուրայի հետ, եթէ ապաբախտ զէպաքերը տեղի չունեային հայ պետութեան կեանքում, ապա մինք միքանի առշիներից յետոյ անշուշտ ականատիս կը լինէինք, թէ ինչպէս անկախ պիտական կեանքը ազգային անհատականութիւնների ստեղծման և բարգաւաճման է նպաստում: Նոր կեանքի բազմապիսի ճիւղերում: Ըստ ինքեան հասկանալի է, որ ընդհանրապէս հայ ազգի արդի կոնկուրեայի համապատասխան միայն—մի կողմ թողած բացառութիւնները — նրանից ստեղծուած անհատականութիւնները արժէք կը ներկայացնեն և արդիւնք կը տան: Այս պատճառով էլ չպիտի մեծ ծաւալով, խոչոր կուլտուրաներից ստեղծուած անհատականութեանց օրինակով, մօտենալ մեր իրականութեան մէջ—թէ անցեալում և թէ ներկայում — ստեղծագործող անձնաւորութեանց: Այստեղ ամենասփոփիչ պատկերը հայ ինտելիգենտի զիտողութեան համար այն է, որ մեր ազգային անհատականութիւնները, անզամ ամենամանպաստ կուլտուրական պայմաններում, յազթահարելով անզամմելի խոչնդուններ, ջանացել են մարմնացնել եւրոպական քաղաքակրթութեան տարրերը մեր ապաբախտ հայրենիքում:

Մեծ մարզը աւելի շատ բան և աւելի կանխօրէն է տեսնում, աւելի խորն է զգում, աւելի ճիշտ է դատում քան մասսան և ամենից լաւ է արտայայտում այն բոլորը, ինչ որ յուզում է հասարակութեան (տես՝ Պ. Բարտ, իեւի, եր. 194): Բւրնմ նա հասարակական շարժման արագացման մօմէնտ է հանդէս զալիս և գոյութիւն ունեցող ոյժի մէջ յաւելում է մացնում: Այն երեսյթները, որոնք իրենց հասունացման համար — որպէսզի մասսայի սեփականութիւն դառնան — երկար ժամանակ են պահանջում, հենց սկզբից կարող են կանխատեսնել մեծ անհատի կողմից և ուրեմն վերջինս ի վիճակի է համապատասխան կերպով հանրային միտքը կազմակերպել և ուղղութիւն առաջ. օրինակ Քսինովոնը Քրիստոսից շատ առաջ, ուլիմպիական աստուածների հաւատի լիսակատար անկումից հազար

տարի տռաջ ժիւտում էր նրանց զոյութիւնը: Նոյնպէս թալէսը գեռաշատ վազ գաղաքաների քաղաքական զաշնակցութիւնն էր քարոզումն և այս գաղաքարը աւելի ուշ ժամանակում, աքէյեան միութեան մէջ իրականացաւ, երբ նոյն գաղափարի նոր քարոզիչներ յայտնուեցին և նրա իրականացման համար աւելի բարեյաջող պայմաններ գտան (տես՝ պրօֆ. Ն. Կարէեւ, իեւի, եր. 25—26): Դործի շրջանում մեծ մարդը հանդէս է զալիս միահամանակ իրեւ միացնալ, որն ուժերի բաժան-բաժան լինելու առաջն առնում է, նըրանց դէպի միակ նպատակն է ուզզում և գրանով ամրապնդում է նրանց նշանակութիւնը (տես՝ Բարտ, իեւի, եր. 197): Մեծ մարզն ամենից վաղ, լաւ և պայծառ է ճեւակերպում հասարակական միտքը, կամ մի բոլորովին նոր գաղափար է ասպարեզ բերում և ամենից վարպետորէն է կարողանում միացնել հասարակութեան ուժերը շարժման համար, կամ արտայայտում է իւր մէջ հասարակութեան բանական աճմամբ առաջացած հայրէքները (տես՝ Կարէեւ, իեւի, եր. 21 և 22): Այդպիսի անձինք, ունենալով վերին աստիճանի յստակ մասնողութիւն, նպատակաղբած բանը իւր բոլոր մանրամասնութեամբ կանխատեսում են և իրենց ուժերի ամբողջ ակտիւութեամբ հանդէս են զալիս դրա իրականացման համար:

Միեւնոյն պատճական իրողութիւնը կարող է տարբեր կերպաւորում ստանալ, նայած թէ ղեկավար անձինք զբա ո՞ր տիպի իւրագործման են նպաստում և ըստ այնմ հանրային ուժերը շարժում: Օրինակ Գերմանիան, որ քաղաքական միութեան բերուեց, զավաղուց ըլդացած մի ազգային նպատակ էր և պահանջում էր իւր կատարումը: Բայց որ այդ միութիւնը այն բնոյթը ստացաւ, ինչ Բիսմարկն էր ցանկանում, այդտեղ անպայման, ի միջի այլ պայմանների, խոչոր գեր ունի Բիսմարկի անհատականութիւնը. իսկ թէ Բիսմարկի ստեղծած ֆերմանիոյ համար ինչպիսի հակյական նշանակութիւն ունեցաւ: ուրեմն ե՛ւ պատճական զեր խալաց այն բնոյթը. որ առել էր նրան Բիսմարկը, զամի այնպիսի ակնյայանի ճշմարտութիւն է, որ զբա վրայ կանգ առնեն իսկ աւելորդ է:

Եթէ Գերմանիոյ միութեան տրուէր բոլորովին այլ պետական ձեւ և այլ ողի, թերեւս մենք այսօք բոլորովին ուրիշ քաղաքական գէպերի ականատես լինէինք: Բիսմարկը իւր անհատականութեամբ

արագացքնեց Գերմանիոյ միութեան այն ձեւը . որը հաճելի էր պրու-
սական թագաւորտկան տառ և զստ այնք էլ նա կազմակերպեց
հանրային ուժը : Այս անսակէտին մենք հանդիպում ենք նոյնիսկ այնպիսի պատմաբանների մօտ , որոնք առհասարակ արամագիր են
մեծ մարդու միջավայրին և դարաշրջանին խոշոր առաւելութիւն
վերագրելու . այսպէս G. Monodը ընդունելով հանդերձ , որ մեծ
մարդկանցից ոչ մէկը անհրաժեշտութիւն չէ մարդկութեան ընդհա-
նուր ընթացքի համար , աւելացնում է . թէ այդպիսի անձանց յա-
տուկ զերը պիտի նկատել , որպէս մէկը այն պատմական պատճառ-
ներից , որոնք կարող են արագացնել կամ զանդադցնել մի ճնշա-
ժամ , խառորել մի շարժում , երեւոյթներին մի տառնձնայատուկ
գոյն տալ 1) : Ուրեմն հէնց այս տեսակէտից , պատմութեան մէջ
մէկ անզամ տեղի ունեցող դէպքերը որ այս յատուկ ձեւակերպու-
թիւնն են ստացել , կամ այս ժամանակում են տեղի ունեցնել , այդ-
աել անհատները իրենց որոշ զերն ունեն : Իսկապէս տասծ հէնց
այդ մասնակի նրբութիւնների մէջ են պատմական իրադարձութիւն-
ները հանդէս եկել , որովհետեւ ընդհանրութիւն վերըրած և առանց
ուրոյն պարագաներով պայմանաւորուած լինելու , ոչ մի պատմական
դէպք տեղի չի ունեցել և չի կարող տեղի ունենալ :

Գրաի այստեղ շեշտեց նաեւ մի հոգեբանական երեւոյթի վրայ ,
որը զզալի կերպով նպաստում է խոշոր անհատների ժամանական վը-
րայ ունեցած ազդեցութեան հնարաւորութեան : Մարդ արարածը
առհասարակ տենչում է սիմվոլների , որոնք իւր ներքին ապրումնե-
րին մի առարկայացած (օրենքութեացած) ընոյթ են տալիս : Հասա-
րակութիւնները , յատկապէս երբ նրանք տեսնում են իրենց յոյզե-
րը , տենչերը , զաղափարները կենարոնացած և մարմնացած մի անձ-
նաւորութեան մէջ , աւելի ուժզնորէն են փարում այդ տենչերին և
զաղափարներին : «Դաղափարներն ըստ ինքեան , ասում է Բարտը ,
արածման մեծ ոյժ ունեն շնորհիւ նմանուելու հակման , որը յա-
մենայն դէպս ներկայացնում է սօցիալական ոյժ , թէպէտեւ ոչ ա-
մենամեծ սօցիալական ոյժը , ինչպէս Տարդն է կարծում . Նմանուե-

լու այս հակումը մեծանում է , միութեան տւելի հաստատուն մի-
ջոց է զառնում , երբ նրան օքֆեկտ է ծառայում մեծ մարգը 1) :
Թատկապէս բարոյական մեծութիւնները , որոնց ամբողջ կեանքը մի
ձուլուածք է ներկայացնում , հսկայական նշանակութիւն հն ունե-
նում հասարակութեան դաստիարակման համար , քանի որ սպարա-
կան , պատմականութեանց է ենթարկւում և դրանցով զեկավարուած , պատ-
մականութեանց է ենթարկւում և դրանցով զեկավարուած , պատ-
մակի հզակի անձանց հանդիպելով ու խորը զզալով իւր փոքրու-
թիւնը , թւում է թէ այդ անձանց մէջ մարդկութեան գաղափարն է
իրականացած տեսնում , որի վերաբերմամբ սակայն հասարակ մահ-
կանացուները մի անկատար կերտուածք են : Իսկ յայտնի է , որ
ովքեր իսկապէս խորը զզում են իրենց անկատարութիւնը և այդ
պատճառով վշտով համակուած են , մի անկեղծ տենչ ունեն բարձ-
րանալ դէպի կատարեալը :

Մաքի ալիարհում սակայն , որովհետեւ զիտնականը կեանքի
առօրեայ ընթացքից անհամեմատ տւելի ազատ է , մեծ մարգը կարող
է ոչ միայն զոյսութիւն ունեցածը զարգացնել , այլեւ նոր տեսու-
թիւններ , սկզբունքներ յայտնագործել , որոնց ներկանքն այն է
մինում , որ երեւոյթները մենք մի բոլորովին նոր լրակի տակ ենք
տեսնում և մեր մտաւոր հորիզոնը համապատասխան կերպով ըն-
դարձակւում է : «Իւրագանցիւր հանճար զիտութեան ասպարիզում
բոլորովին նոր հարցեր է դնում և նոր միջացներ գտնում նրանց
լուծելու համար» 2) : Կեանքի պայմաններն անշուշտ զրգիռներ են
տալիս զիտական մտածողութեան . սակայն յաճախ զիտական մտա-
ծողութեան տրամաբանական ընթացքը , մղուելով մեծ մասամբ
մարդու հոգեկան պահանջներից , ներքին իմացական կարիքներից ,
բարզուածուելով ստեղծագործել մեծ զիտունների աշխատանքի ար-
դիւնքներով , իրեւ հետեւանք է ունենում , բացի մարգու մտաւոր
և բարյոյական կարիքներին բաւարարութիւն տալուց , այլև նրա

1) Պ. Բարէ , Ibid. եր. 194.

2) Տես՝ Իւ. Դեկեւակիյ , Ibid. եր. 18 :

Պոյութեան պայմանների կերպարանափոխումը 1):

Պատմական իրականութեան մէջ հանդէս եկած անհատներից ո՞չ բոլորը ազգել են իրենց անհատական խոշոր գծերով, այլ որովհետեւ բախտի բերմամբ մի ամբողջ ժողովրդի բախտը նրանցից է կախուած եղել: Այս ակաւկէտից իրաւամբ նկատում է էտ. Մայերը, որ «Պատմութեան մէջ յիշատակուած բազմաթիւ դէմքերից իսկապէս միայն շատ քչերը կարող են ի նկատի առնուել որպէս անհատներ, ինդիլիդներ. մեծամասնութիւնը նրանցից միայն մասսաներից գուրս եկած դիմեր են, և նրանց անունը յիշատակուում է բացառապէս այն պատճառով, որ նրանք պատահմամբ միայն մասնակից են եղել որևէ պատմական դէպքի, որպէս սպաներ, զիսպաններ, աստիճանաւորներ և այլն: Այս պատճառով պատմաբանի համար նշանակութիւն ունի միայն նրանց զործունէութիւնը և մասնակցութիւնը այդ դէպերում և ոչ այն անհատական յատկութիւնները, որոնցով նրանք տարբերուում են միւս մարդկանցից» 2): Այն բանի ապացոյցը, թէ ինչպէս պաշտօնն ըստ ինքեան մարգուն ի վիճակի է դարձնում հասարակութեան կեանքի ընթացքի վրայ ազգել, մենք կարող ենք դիտել գեռ մարդկութեան նախնական դրութեան մէջ: Այսպէս պրօֆ. Ն. Կարեկեւը շեշտելով, որ պետութեան կազմակերպութեան քաղաքակրթութեան զարգացման սկիզբն է հանդիսացել և որ ուր քաղաքական կողմակերպութիւն չի եղել, այսուել յառաջազիմութիւն էլ համարեա զոյութիւն չի ունեցել, աւելացնուում է: «Եղոյոր կազմակերպութիւնը զօրեղացնելով իւր զլխի, պետի իշխանութիւնը, վերջինիս հենց սկզբներում իսկ մի այնպիսի անձաւորութիւն էր դարձնում, որը թէ իւր ուժով և թէ զործունէութեամբ ընդունակ էր հանդիսանում պատմութեան մէջ առաջ բերելու ամենամեծ քանակութեամբ փոփոխութիւններ քաղաքակրթութեան ստորին շրջանում» 3):

1) Այս խնդիրը շատ յաջող կերպով զարգացրել է իւ. Դելեւսկին, իւր «Հանումիչների մատերիալիզմի իստորիա նաուկի» գրքում:

2) Տես՝ Պրօֆ. Է. Մայեր, *ibid.*, եր. 65:

3) Տես՝ Պրօֆ. Ն. Կարեկեւ, *ibid.*, եր. 18:

Անգլիան XVLրդ դարում երեք անդամ փոխել է իւր կրօնը մի իշխանի մահուան պատճառով (Հայնրիխ, կտուարտ և Մարիա) 1): Պիտի ուրեմն քննել, թէ արդեօք անհատը ի վիճակի' է եղել զօրեղ կերպով ազդելու: Ինչ որ տեղի է ունենում, երբ մարդը—բացի իւր զործով օրինակ լինելով մասսայի համար, ստեղծելով տրագիցիա, որ յաճախ պատահում է զիտութեան, կրօնի, տեխնիկայի մէջ—իշխանութեամբ է օժտուած լինում, տալու հրամաններ և ուղղութիւն մարդկանց մի մասսայի, ինչ որ պատահում է պետութեան, բանակի և եկեղեցւ պարագլուխների հետ 2):

Որ այնպիսի աննշան անձնաւորութիւններ, ինչպիսիք են լիւզովիկոս XVրդը կամ Կարլոս Արգը կարող են պատմական մեծ ազդեցութիւն ունենալ, դա պատցոյց է, որ այստեղ «իմուքը իսկապէս ոչ թէ անհատների և նրանց զնահատութեան բացարձակ նշանակութեան մասին է, այլ այն մասին, որ այս կամ այն դէմքը, չնորհիւ մի քանի պատճական հանգամանքների՝ ծագման, ընտրութեան և այլն, ընթիւմ է այնպիսի գրութեան մէջ, որտեղ նա գտնում է պամական պրօցեսի կարեւոր ազդեցիկ գործօն» (տես՝ Էտ. Մայեր, *ibid.*, եր. 68): Ուրիշ թօսքով ասած, անհատն աստ, հասարակական պայմանների պատճառով, մը գրութեան մէջ է փոխանցւում, որը նրան մասսայի վրայ իշխելու և սրա բախտը տնօրինելու իրաւունք է տալիս, անկախ իւր անհատական յատկութիւններից: Այսպիսի ըստ էութեան աննշան անձանց կողքին գոյութիւն են ունեցել նաեւ պատմական անհատներ, որոնք ազգել են պատճութեան վրայ հինց իրենց անհատականութեամբ, ինենուրութեամբ, կամքի ակտերի ազատութեամբ, այնպիս որ այն դէպերը, որոնց մէջ նրանք մասնակցութիւն են ունեցել, բոլորվին այլ ընթացք կը ստանային: Աթէ նրանց տեղը ուրիշ մարդիկ լինեին: Այսպէս օր. «Երկրորդ Պունիկան պատերազմը Հանիբալի վճռի հետեւանք է. եօթնամենյ պատերազմը Ֆրիդրիխ Մեծի, 1866 թուի պատերազմը՝ Բիմարկի:

1) Տես՝ Ch. V. Langlois et Ch. Seignobos. *Introduction aux études historiques*. 1905. Paris. եր. 215.

2) Ch. V. Langlois et Ch. Seignobos. *ibid.* եր. 215—216.

Բոլոր այս մարդիկ կարող էին կանգ առնել նաև մի օւրիշ որոշման վրայ, ուրիշները նրանց տեղը լինելով, այլ կերպ կարող էին վարուել, իսկ դրա հետեւանքը կը լինէր այն, որ պատմական գէպքերը այլ ընթացք կ'ունենային» 1)։

Պատմականօրէն ազգեցիկ լինելու համար անհրաժեշտութիւն չկայ անպատճառ հանճար լինել, օրինակ նոր պատմութեան մէջ, ըստ իտ ։ Մայերի, դժուար թէ որևէ մէկը իւր նշանակութեամբ կարողանայ համեմատուել Ֆրիզըին Վիլհելմ Ա.ի հետ, որը չատ հեռու էր հանճար լինելուց, «Ամենից աւելի նրա անհատականութիւնն է սերտօրէն կապուած Պրուսիոյ թագաւորութեան հիմնաւորման և բարձրացման հետ։ Պրուսիոյ և Գերմանիոյ աճման հետ շարունակում է աճել և նրա պատմական ազգեցութիւնը» (անդ, եր. 67)։ Աւրեմն կարող ենք ասել, որ պատմութեան ընթացքում հանդէս եկաղ անձնաւորութիւնները ազգել են կամ իրենց խոշոր անհատականութեամբ, ուրիշ խօսքով ասած, ներկայացնելով ուրակալես առարքեր յատկութիւններ քան սովորական մասսան ունի, և կամ պարագաների բերմամբ միայն ի վիճակի են եղել իրերի ընթացքը դեկավարել և ուրեմն հասարակութեան բախտը այս կամ այն վճռական մօմէնտում տնօրինել։

Բոլոր նոքա, որոնք ենթագրում են, որ առանց պատմական անհատների ազգեցութեան էլ պատմութեան ընթացքը, «որոշ պատահան տարբերութիւններով», բայց «ո՞յն իմաստով» կ'ընթառը և զրանով ուրեմն ուզում են պատմական անհատականութիւնների դերը նուազենել, անշուշտ մի թիւրիմացութեան մէջ են և դա կայանում է պատմութեան առարկայի էութեան պարզ լզիտակցելու մէջ։ Լսենք թէ ինչպէս է բնորոշում պատմագիտութեան նըսպատակը Գերմանիոյ պատմափիլտոփայական զրականութեան ականաւոր ներկայացուցիչներից մէկը՝ կ'Բերնհայմը. «Պատմագիտութիւնն է մի զիւութիւն, որը ուսումնասիրում է և նկարազրում ժումանակով և տարածականութեամբ որոշուած փաստերը մարդկանց դարձացման, իրենց եղական, ինչպէս նաև տիպիկ և կոլեկտիվ զորակութեանութեամբ մէջ որպէս սոցիալական էակների, հոգե-ֆիզիքական

պատճառականութեան կապակցութեան մէջ վերցրած» 1)։ Ինչպէս նկատելի է այս բանաձեւից, ժամանակը, ի միջի այլոց, որոշակի նշանակութիւն ունի պատմական իրադարձութեանց համար իսկ մենք ասացինք, որ մեծ անհատները կարող են արագացնող կամ դանդաղեցնող եղանակով ազգել երեւոյթների զարգացման, հասունացման ընթացքի վրայ, այնպէս որ բոլորովին անտարբեր մի բան չէ թէ օր ո՞ր թուականին, Բիսմարկի զօրեղ աջակցութեամբ, առաջ եկաւ Գերմանիոյ միութիւնը, որովհետեւ վերջինիս ապագայ զարդարումը և զրա հետ կապուած համաւրապական ու զարդութային քաղաքականութիւնը որոշ չափով, ի միջի այլ զործոնների, նաև նրանով է պայմանաւորուած։ Մարդկութեան ընդհանուր զոյագիւնակներն ու սրանց ընթացքը հասարակագիտութեան նիւթ կարող է գառնալ, մինչդեռ զրանց կոնկրետ արտայայտութիւնները, զանազան ժողովուրդների մօտ և զանազան երկրներում, իրենց բոլոր անհատական նրանքիւններով պատմագիտութեան նիւթն է իսկ այդ կոնկրետ արտայայտման մէջ հէնց անհատները իրենց դերն ունեն։

Անշուշտ պատմական անձնաւորութեանց ազգեցութիւնը սահմանափակուած է։ Մենք արդէն նկատեցինք. թէ ինչպիսի նշանակութիւն ունի նրանց կազմակերպման համար հասարակական միջավայրով պայմանաւորուած չաստիքարակութիւնը։ Անկասկած, ամեն ոք. «ինչ կուլտուրայի ժամանակ էլ որ ապրում է, սրանից կախում ունի. այս մտքով իւր ժամանակի օրդի է» և պատմական հանճարն էլ «կուլտուրական ժամանակաշրջանում է ներփակուած և այն ժամանակէն լրիւ ծալկում, երբ այդ ժամանակաշրջանի զարգացման ուղղութեամբ է զործում» 2)։ Մեծ մարդիկ ներզուծում են անմիջապէս այն հասարակութեան վրայ, որի մէջ ծնուել են և իրենց ժամանակակից վրայ, ուրեմն նրանք չեն կարող վճռական ազգեցութիւն ունենալ ամբողջ մարդկութեան պատմութեան ընթացքի

1) Schr. E. Bernheim, Lehrbuch der historischen Methode und der Geschichtsphilosophie, 1908. եր. 9.

2) Schr. Կ. Լամպրեխտ, Ibid. եր. 109 և 112։

Վրայ 1):

Որ մեծ մարդու զործունէութիւնը պայմանաւորուած է ընդհանուր զօրծօններով, որոնք խոշոր գեր են խաղում պատմութեան մէջ, գա ընդունում է նոյնիսկ մի այնպիսի պատմաբան, ինչպիսին էտ. Մայերն է, որը անհատական ազդեցութեան մեծ նշանակութիւն է վերադրում պատմութեան ընթացքի վերաբերմամբ: Նա համարում է Սոկրատեաններին և Ընդանց ժամանակակից հետեւողներին» ուսովիստներ նրա համար, որ նրանք ռերիւակայում էին, թէ իշխանութիւն, խելք, տաղանդ ունեցող օրէնսդիրը կարող է հիմնական յեղաշրջում առաջացնել համաքաղաքացիների մաքի և կեանքի մէջ, Մինչդեռ իրօք Տիբերիոս և Ագրիփանոս կայսրները ուժից դուրս եկան «փոխելու պատմական օրհասական ընթացքը» և վերջն ել լիակատար յուսահատութեան մէջ ընկան: Նոյնպէս Արդուլլա Խալիֆան, նման ձգտութմներով տարօւած, հասնելով մեծ յաջութիւնների «վերջ ի վերջոյ այնուամենայնիւ պարտութիւն կրեց, որովհետեւ եւրոպական կուլտուրայի զօրութիւնը նրա յարաւել դիմադրութիւնը ուժասպառ արաւ» 2):

Վերեւում բերած օրինակները ցոյց են աւլիս, որ անհատի ազդեցութեան լրջանակը չի կարող շատ բնդարձակ լինել: Ամենից աւելի բեղմնաւոր է այդ ազդեցութիւնը այն շրջանում, ուր անհատ անուել, գաստիարակուել է և ուր նա դարերով կուտակուած և սերնդէ սերունդ յաջորդաբար փոխանցուած հարազատ կուլտուրայով է շրջապատուած: Այդ հարազատ շրջանը անշուշտ ազգային կուլտուրայի անկախ միջավայրն է, որի մէջ անհատը ի վիճակի է իւր բոլոր կարողութիւնները, առանց որևէ սահմանափակման և անտպարտ կերպով ծաւալել և շատ աւելի զիւրութեամբ քան օսար մի-

ջավայթում, ուր ստեղծագործով բազմապիսի արտաքին թուշնդուաներ պիտի յաղթահարէ, հենց միմիայն յարմարուելու համար այդ նոր ստար կուլտուրայի պահպնջներին: Խօսքը մասնաւորելով հայ ազգութեան վերաբերմամբ, պիտի ասել, որ եթէ անհատի մեծութիւնը նրա ողբերգական պայմաններումն է հանգէս զալիս, երբ բազմապիսի տազնապների ենթակայ, նա իւր անհատական կերտուածքը աներեք է պահում, ապա հայ ազգը, որ քանակով փոքրաթիւ լինելով, անկարող է եղել իւր բախտը ինքնուրոյն կերպով տնօրինել և տրուած է եղել աշխարհազրական ամենաաննպաստ պայմաններում, արեւմուտքի և արեւելքի դարաւոր պայմանների մէջ աշխատել է իւր ազգային նկարագիրը անիմախտ պահել: Այսօր, չնորհիւ այն հանգամանքի, որ նայութեան ազգային անկախութեան պայմանները վերին աստիճանի աննպաստ են դասաւորուած և հասկանալի պատճառներով յուսահատութիւն է տիրում հացութեան աաբեր խաւերի մէջ, ամենից աւելի պիտք են ուժեղ կամքով և յատակ մտածողութեամք օժառուած հայ անհատականութիւններ, որոնք — յատկապէս զործի ասպարիզում — մեր ազգային բոլոր կենսունակ ուժերը համախմբեն և ուղղեն դէպի անկախ հայրենիքի զաղափարի իրազործումը:

(Վերջ)

1) Տես՝ Պրօֆ. Ն. Կարեեւ, *ibid.* եր. 28:

2) Տես՝ Պրօֆ. Էս. Մայեր, *ibid.*, եր. 68, 69: Տես՝ նոյն տեղում, Օգոստոս կայսեր հոռվիմ. պետութեան առւած կազմակերպութեան մէջ նրա ունեցած անհատական նշանակութիւնը եր. 67—68: Տես այս տեսակէտից վագարիսների մասին արտայայտուածը, անդ, եր. 69—70:


ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Խնդրում է ընթերցողից նախօան ընթերցումը, ուղղել հետեւեալ ամենակարեւոր վրժակները.

ՑՊՈՒՄԾ է			ՊԻՏԻ ՀԻՆԻ
ԵՐԵՒ	ԱՌԱ	ՎԵՐԱԿՐՈՅ	
» 6	» 12	» զգացական	զգայական
» 9	» 20	» աեղի	սիպի
» 14	» 17	» իր էական	իդեական
» 22	» 17	» բոլոր դէմքերի	խոօս դէմքերի
» 27	» 4	ցածից	Sybel
» 29	» 8	Շահկօլոկայա	Շասկօլոկայա
» 32	» 19	վերեկից պետերը	գետերը
» 34	» 4	Ժառանգականութեան	ո.ասսայական
			ԺԱՌԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ
» 35	» 6	զաղափարի մէջ ազգութեան գաղափարի մէջ	
» 36	» 8	ցածից historische Ceriften historische Schriften	
» 37	» 14	վերեկից այստեղ գեռ	այսօր էլ
» 40	» 13	ցածից պաշտպանել	պարզաբնել
» 52	» 5	վերեկից Lebensordurong	Lebensordnung
» 57	» 3	» teñfiseus	teñtiscus
» 58	» 3	» անհրաժեշտ	անհնար է
» 66	» 4	Փիլոսոփիա պէտօրիի Ֆիլոսոփիա իսօրիի	
» 67	» 9	վերեկից տիպի	որու սիպի
» 67	» 11	ցածից համեմատելու	հասնելու
» 68	» 4	Գ. Կուպով	Գ. Կունով
» 69	» 8	աշխատանքները	աօխարհները
» 73	» 1	վերեկից լայնատութեամբ	ձայնաւութեամբ
» 81	» 13	ցածից երբեմն	ուրեմն
» 84	» 16	վերեկից կրօնին	կը գտնուեն
» 101	» 5	նախատեսութիւն նիւթ նախատեսութիւն	
» 102	» 5	վերեկից ընդունելութիւն ընդունելութիւն գտնելու	
» 112	» 7	ցածից ի հաշիւ միլիոնների	ի հաշիւ մի սեների
» 115	» 14	վերեկից նպատակ է	նպատակ է
» 119	» 12	ցածից ներհանքն	հետեւանքը



ՀՀ Ազգային գրադարան



NL0195431

ԳԻՆ 5 Ե.Դ.
